891.99-3

891.99 | 2630
И-44 | Изгнанник, Н.
Изгнанник и Обиженка

3.IV
12

891.99
Ч-44

ՍՐՈՒԹԻՆ ԵՒ ՄԱՆՈՒԷԼ

ԱԶԳԱՅԻՆ ՎԷՊ

ԱԲԵՍԱԼՈՄՈՒՆ

ԳԱԶԱՐՈՒ ԱԳԱՆՅԱՆՑ

2630
Ա 5111

ՀԱՅՈՐ ԱՓԱՆՑԻՆ.

ԹԻՖԼԻՍ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՅՐԱՐԱՏՈՒՄՆ ԷՆԳԱԼԱՆՑՆ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԷ.

1867

Дозволено цензурою, С.-Петербургъ 24 октября 1866 года.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ

ՊԱՏԱՐԱԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԺՈՂՈՎԱԾՈՒ

3

ԳԼՈՒԽ Ա.

—

ՈԴԽՏ ՔԱՋԻ.

ԵՒ

ՈՒԽՏ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ.

ՕԳՈՍՏՈՍ ամսին՝ մի շաբաթ առաւօտ, Շամշուլդայ գիւղի Ծխատէր քահանան՝ Տէր Մարկոսը, առաւօտեան ժամը և կից պատարագը աւարտելուց յետոյ, մի կարճառօտ ծանուցում արաւ իւր ժողովրդին, թէ վաղը Աստուածածնի Վերափոխման տօնն է, ուստի և պատարագը պէտք է լինի բերդի Աստուածածին անուանով և կեղեցումը, ուր պիտի օրհնուի և խաղողը:

Այս լուրը թէպէտ անսովոր լուր չէր, բայց մեծ ապաւորութիւն գործեց լսողների վերայ և ամենքը ջերմեռանդ սրտով երեսներին խաչահանելով, որպէս

մոգք մի մի հայցուածք ուղղեցին դէպի բերդի Սուրբ Աստուածածինը. . . . . Երբ որ եկեղեցուց դուրս եկած՝ առն էր գնում տէր հայրը, նորա քամակից հետևում էր և մի պատանի, որ, ինչպէս երևում էր նորա ձևերում բռնած հաբիզայից, որոյ մէջ գրուած էին տէր հօր մաշտոցը և մանանաուփը — տէրտէրի մոնիմն էր: Արութիւնը (այսպէս էր նորա անունը) բնական այս գեղից չը լինելով, շատ ուրախ էր այժմ, յիշելով, որ միւս օրը իւր ազգականներից և բարեկամներից շատերը մօտակայ գիւղերից կը գան ուխտ Սուրբ Աստուածածնին և նոցա կը տեսնէ: Չը կարողանալով սառնարիւն մնալ մի այսպիսի բոպէում, պատանի Արութիւնը մօտեցաւ տէր-տէրին, և, մի անմեղ ժպիտ բերանին, հարցրեց.

— Տէր-տէր, էգուց էլ, ամէն տարուա նման, շատ տեղերից ուխտաւորներ կը գան, չէ՞ . . .

Տէր հայրը փոխանակ լեզուով պատասխանելու, գլխով արաւ, պատմաւ, նա իւր կիսատ թաղած սաղմոսներն էր մտքում մրմնջում. բայց Արութիւնին այդքանն էլ բաւական էր: Նա խսկոյն կանգնեց, որ տէր հայրը մի փոքր հեռանայ, երբ ինքը մի ուրիշ ճանապարհով, վազեց մինչև 'ի տուն, որ մի բոպէ առաջ յայտնէ միւս երեխաներին, թէ ինչքան ուրախ է ինքը . . . .

Միւս օրը՝ կիրակի առաւօտուն, արդարև կարելի էր տեսնել մեծ բազմութիւն ուխտաւորների:

Շամշուդայի բերդը, որոյ հիշատակութեան ժամանակը պատմութիւնը տալիս է Քարթլոս Նահապետի օրերին, ընկած է մէջ տեղը խրամ և ճամճամ ասված գետերի, որոց զարաւոր ժամանակներից հետէ խորացած և անդնդաձև բնական պարիսպները անպաշարելի որմերի տեղ են բռնում բերդի երկք կողմից, իսկ շորրորդ կամ արևմտեան կողմից՝ հատ, բայց կիսով չափ փլած պատի մէջ տեղով բացած էր մի մեծ դուռն, որով ներս էին մտնում ջերմեռանդ ուխտաւորները և հաւաքվում դրանը այն եկեղեցու, որին իրանք պարգևել են Աստուածածին անուն . . . .

Այս եկեղեցին մի փոքրիկ, մատուռաձև շինութիւն է, և ներսը՝ աւագ կողմին՝ սեղանի մօտ կանգնեցրած է մի սեւաբանգ և բաւական լայն ու երկայն քար։

Այս քարի մասին տեղացի ժողովրդի մէջ աւանդութիւն կայ և մինչև այս օրս էլ անթերի հաւատով կրկնում են. թէ այդ քարը բանել է և օրէց օր երկայնացել։ Վերջապէս երազումը մի մարդու ասել է, թէ «Եթէ ինձ վերայ եկեղեցի չէք շինիլ, ես այնքան կը բարձրանամ, որ գլուխս կը հասնի մինչի երկինք»։ Երազատեսը պատմել է ժողովրդին, և ժողովուրդն էլ վախենալով, որ մի գուցէ արդարև աստուածին սէս բարձրանայ և ժամանակով վայր ընկնի

իրանց գլխին, շուտպել են եկեղեցին շինել և քարը գաղարել է երկայնանալուց . . . .

Մի կողմից ոգոյ ու աղջիկ, հարսն ու երխտաարդ, պառաւ ու ծեր՝ մին մինի սեղմելով, մամեր էին կըգցնում յիշած քարի վերայ, միւս կողմից տէր Հայրը կառարում էր պատարագի արբազան պաշտաւնը. իսկ Արութիւնը, որոյ հագած շապիկին իւր մայրը գոյնզգոյն ասկեթել նաշխերով, խաչերով, փունջերով և աչքահուլունքներով առել էր կախարդական ձև, համ փուռուարը ձեռքին, տարկաւագի տանիքն էր ասում, համ վառուած մոմերն էր պոկում, գցում ջրով դրած ամանի մէջը:

Պատարագը աւարտելուց յետոյ. եկեղեցուց դուրս եկան տէր Հայրն ու իւր տիրացուները, խաչով, խաչուտվառով և գրսում մը օրհնեցին խաղողը: Այս ընդարձակ տեղը, երկնքի կապոյտ կամարի տակ, կարելի էր տեսնել այժմ բազմաթիւ հոգիք, ամենքն էլ որքան կարելի էր նրանց, խտակ հագնուած: Յետոյն Կողմում կանգնած էին կանայքը, հարսներն ու օրիորդները, որոնք իրանց տեսակ տեսակ հագուստներով հոյլոյ ծաղիկներին էին նմանում: Շատերի բերանը փաթաթած էր հատա ու հուլունքաշար հարսանուցով ու սպիտակ տարուբերով, երեսներին զանգրուկ գրած, գլխներին, շարտավի վերայով գեօթրդեա, ճակատներին՝ շարք ու ջնաղ, կուժքերին՝ ձուաձև արծաթեայ կոճակներ և

հագներին մինթանա։ Շատերի գլուխը շինած էր փրացու կերպի, և բերանները բաց։ Օրիորդների էլ, շատերի գլուխը փաթաթած էր մի մի կարմիր շարդաթով և շատերինը ծածկած մի մի հասարակ կամ բազդատի ապուխով։ Խակ ամանը ոտից մինչև գլուխ հագնուած էին սպիտակ միտկալից շորեր, բրլանների ու շլինքների կապած արծաթի դրամներ և գլորացրած մեղրամոմներ, որոնցից երևումը, թէ նորա այս թաչի գուն են։ Կանանց առջև կանգնած էին տղամարդիկը, որոնք հագուստի կողմանէ շատ նման էին իրարու, պատմատ, մի և նոյն կերպի գաշնակը կապած էին ամանքը, և մի և նոյն կերպի արևթները հագած բոլորը։ Բայց էլի մի կողմից ամենը հատ գալիս էին նոր նոր ուխտաւորներ, որը մի աքաղաղ (ագլոր) ոտերը կապած, ձեռին, որը մի քանի ջուխտ, տանը ոլորած, մամ իւր ձեռափայտի վերայ թելով փաթաթած, ուսին գրած, կամ առանց փայտի փափախի գլխը խրած, վազում էին գէպի եկեղեցին, ուր մանում, վառում էին թէ չէ, խոկոյն Աբութիւնը, փուռուարը ձեռքին չխկչրխկացնելով, հանում էր և վառուած մոմերը պոկում զցում ջուրը։ Բայց շատերին գուր չէր գալիս, որ մոմերն այսպէս շուտով հանգցնում էին։ Ամանքն էլ քթերի տակին մռմռում էին Աբութիւնի վերայ և շատերն էլ բարկանալով, ասում։

—Է՞ս ինչ ա...Ա՛զրաթը խէր, թոզ մի քիչ էրուի,է...

„Դիմի մեկ չի՞ա, պատասխանում էր Արութիւնը, „Էլի ժամումը պիտի էրուին, նրա վարձքը էլի ձեր մեռելներու հոգուն կերթա . . . Հապա ուրիշ տեղերումը չէք տեսել, որ սաղ սաղ աղլորներն ու ոչխարները ուխտաւորների ձեռներիցը խլում են . . . Մենք խօ ընենց չենք անում . . . Մի վախեք, էս մոմերն էլի ձեր մեռելներու հոգու համար պիտի էրուին . . . „Այսպէս խօսքերով նոցա սիրտը շահում էր պարզամիտ Արութիւնը և նրանք էլ համոզուելով և մի ջերմեռանդ աղօթք անելից յետոյ դուրս էին գալիս . . . .

Վերջապէս հոգևոր արարողութիւնը աւարտուեցաւ, ամենքն էլ քաշուեցան ծառերի տակը, մատաղները մորթոտեցին, կրակները վառոտեցին, բարեկամ բարեկամի գանելով և ծանօթ ծանօթի, կազմեցին բազմաթիւ խնջոյքներ: Տէր հօրը և Արութիւնին էլ հրաւիրեցին մի տուփրայի վերայ, ուր հաւաքուած էին մինչի տասը — քսան գերդաստան, բոլորն էլ գանազան գեղերից, բայց ամենքն էլ իրարու ճոխիկ բարեկամ: Օրիորդները ածում էին դահիրա—նագարան և կաքաւում, որը լեզգի հանգի, որը Ղարաբաղի կընդապար: Աշուղ Մամիջուին էլ, իւր աշակերտ Զուլայի հետ միասին, իրանց տգի ու քամանչայի ձայները խառնում էին նագարայի դրմբդրմբոցի հետ, և, երբ օրիորդների պար գալը ընդհատվում էր, երգում էին հայերէն և թուրքերէն

խաղեր, ինչպէս — Դիւանի, Թէժլիս, Գիւզալամա, Դուրբէիթ, Ղոշամա, Հիջրանի, Քեարամի, Շիրինի, Սանհանի, Քեօռօղլի, Մուխամրաղ, Դաստանա և այլև այլ ուրախացուցիչ և արտմեցուցիչ բայաթիներ։ Ջուռնաչի Յականն էլ՝ իւր արծաթատպատ զուռնան վեր ու վայր անելով, մատները խաղցնելով, թուշերը ուռցնելով, փուք տալով և աչքերը դէս ու դէն պլըզացնելով կկլացնում էր, Արզումանն էլ, որ Յականի դամբին էր, համ ձայն էր պահում, համ ձեռք ու ոտքով և աչք ու ունքով մուռխարութիւններ անում, ծիծաղացնում հանդիսականներին, իսկ Մաքօն, իւր բոլոր ուժը մի տեղ հաւաքած, խըփում էր դէլի մորթից շինած դրնգըլըաղի (դըհոլի սիրեկին, իւր, զանազան նաշխեր վերան փորագրած՝ կոպալով . . . Ամենքի երեսին դրոշմուած էր ուրախութեան գծագիրը և ամենքի շրթունքի վերայ երևում էր մի քաղցր ժպիտ։ Սուփրան լիքն էր սպիտակ, փափուկ հացերով, կաթնահունց նազուքներով, պանիրով և մատաղի խաշլամայով ու խորովածով։ Գինին այնքան շատ չէր, բայց այնքան էլ քիչ չէր, որ խաղ չը գիտցողին անգամ խաղ ասել չը տար։ Ով որ մի խաղ գիտէր, ասում էր, չը նայելով, որ արդէն ասող ունէին։ Վերջապէս խնդրեցին տէր հօրը, որ մի տաղ ասել տար Արութիւնին, որ ճնացել էր ուրախութեան և իւր հօրաքոյրերի և մօրաքոյրերի, նոցա աղջկերանց ու հարսների դգուանքի մէջ շըփոթուած։

—Ա՛սա, քէ մնասաղ, ասա, խի՞ ես ամանչում, դու մեր Աւետքի ազէն չէս . . . Հր. Նա մի մարդ ա, որ . . . Ռուստամ Զանգ դա բազեանմազ . . . ասա, քէ մնասաղ, ասա . . . Աղա, Մանվէլ, վեր կաց գնա էրեխի կշտին նստի, որ ձայն պահես . . .

Այս խօսքերը ասողը մի, լաւ երեւութին պատուաւոր քեթխուդա մարդ էր, իսկ Մանուէլը՝ նորա որդին, որ Արութիւնին հասակակից մի պատանի էր, բայց աւելի առոյգ, քան թէ Արութիւնը, որոյ երեսի վերայ զրոշմուած էր մի տիար առաջութեան գծագիր։

Տեսնելով, որ տաղ ասելիս մի ուրիշ ընկեր պիտի ունենայ, Արութիւնի սիրտը ահ ընկաւ, թէ չըլնի՞ որ իւր անծանօթ Մանուէլը աւելի լաւ ձայն ունենայ քան թէ ինքը, այս պատճառով, երբ որ Մանուէլը եկաւ նորա մօտ նստեց, Արութիւնը, նորա տեղ պարզ քաղաքավարութեամբ լայնացնելուց յետոյ, ասաց.

„—Դու ասա, ես ձայն կը պահեմ։

„Ես տաղ չեմ գիտում“ պատասխանեց Մանուէլը . . .

Վերջապէս, երբ որ „ասա, քէ մնասաղ, ասա“ կրկնեցին ամեն կողմից, և տէր Հայրն էլ հրամայեց, ծունկ չոքեց Արութիւնը, որին հետևեցաւ և Մանուէլը, և երգեց „Խնկին ծառին նման ես“ տաղը և իւր ձայնի բոլոր ուժը մի տեղ հաւաքելով,

աւելացրեց նորա վերջից, „Անթատամ ծաղիկ“ շաբաթանը։

—Ա՛պրես, ապրես, Աստուած քու հօրն ու մօրը բաշխի, կրկնեցին մարդիկը, հիանալով նորա քաղցր ձայնից։

—Աղբիւրդ անապատ, ասաց տէր Հայրը։

—Է՛նէկ քու մօր աչքերին, լսումէր կանանց միջից։ Մանուէլն էլ իւր վերայ մի քաղցր տպաւորութիւն զգալով, սկսաւ աւելի մօտ մօտենալ Աբրութիւնին, և մի զմայլմունքի անմեղ ժպիտ բերանին, զանազան հարցեր անել։ Այսպէս մի քանի անգամ կրկնուեցաւ տաղասացութիւնը, մինչև նորատիպը հասաւ Յականին, որ իւր սիրեկան զուռնան փչեց թէ չէ, մեր պատանիքը ազատութիւն ստացան և վերկացան սուփրայի վերայից ու ձեռք ձեռքի տուած սկսան մեն գալ բերդի մէջ։

—Էս գեռ իմ օրումը էսաեղ չեմ էլել . . . կասնաս բաղ բրի, տանձ, խնձոր . . . էս որ մեր գեղումն բրի, մի հատ չեն թողնիլ ծառի վրէն, գիսի էլ խակ խակ կը թողանեն — ասաց Մանուէլը, երբ որ մի քիչ հեռացել էին խնջոյքից։

„Էսաեղ էլ չեն թողնիլ“, պատասխանեց Աբրութիւնը. „Բայց Մովսէսը գաղտագա ա անում, ոչով չի կարող մի հատ պոկիլ։

—Մովսէսն ով ա.

„Էսաեղ մի կնիկ կայ, թատի մարիկ տուող, նրան

—Մոմրով՞ են ասում էս գեղջիքը . . . Հրէն, այ, էնտեղ ա կենում իրա մարդի հետ։

—Լն խոտով ծածկած տանը՞.

—Հա։

—Ամառ ձմե՞ռ,

—Հա։

—Բա ներանց տուն չունեն, տեղ չունե՞ն.

—Տուն տեղ ունեն, կախէթումն ա, էն կնիկն ասում ա, —Խաչը զարուլ չի անում, որ մենք մեր տանը կենանք, ասում ա իմ գուլն էք, պիտի իմ տակին կենաք՞. էս տեղերն էլ, ասում ա խաչինն ա։ Դրա խաթրու գեղջիք էլ վախում են խաչիցը, ինչ որ ուզում ա էն կնիկը, տալիս են։

—Հա . . . . . բա տէրտէրն ի՞նչա ասում։ Շատ տէրտէրներ չեն հաւատում ըտէնց բաներին.

—Մեր տէրտէրն էլ ա վախում։ Ինչ որ էրի-մարթի ա տուանում, շատ փայը ներանց ա տալիս, ասում ա. —Վախենալու ա, խաչին կը զանգատուին։

—Հա . . . . Ասում են էդ տէրտէրը շատ գիտուն մարդ ա, էրնէկ ես էլ դրա աշկերան ըլէի . . . Ուրուխին, խօ չի՞ ծեծում քեզ։

—Չէ։ Լա ա չորս տարի ա ես դրա մնան եմ, դեռ միանգամ էլ ա մատով չի խփած ինձ։

—Ի՞նչ լաւ մարդ ա . . . Ի՞նչա սորվացնում քեզ։

—Հին և Նոր Կտակարան, Քերականութիւն, Աստուածաբանութիւն, էլի ուրիշ հազար ու մի բան։

—Ո՞ւհ . . . էդ դիպի էլ գիտե՞ս.

„Ինչ չէ։ Շարադրություն էլ եմ անում, ոտանավորներ եմ գրում, տոլար ոտանավոր, բան . . .

—Հա՛ . . . Բացագանչեց Մանուկը, կարծելով, որ Արուխիանի ինչպես ձայնը, նոյնպես և գիտությունը, սովորողի չէ տուողի է։

—Արի գնանք էսպես . . . Էսաեղ մի ա կենում,— ձեռը մեկնելով դէպի մի փոքրիկ խուղ, հարցրեց Մանուկը, երբ արդէն շատ հեռացել էին բոլոր ականջ խլացնող ձայներից ու շշնջմունքներից։

„Էդ տեղ էլ մի հիւանդ մարդ ա կենում իրա ինկայ հետ։

—Ինչո՞ւ ա հիւանդ։

„Ոտներից սկսած՝ ընչկլի գօտկատեղը չորացել ա։ Մոլբովը թաստին մարիկ ա տուել, ասել ա „մեր խաչին ա, պիտի սրա ատակին օխտը տարի կենաս, որ պրծնես . . . .

—Ինչի՞, խաչին բարկացրել ա հա՞։

„Հա՛։ Ասումեն. դա մի թերահաւատ մարդ ա ընել։ Խաչի չի ընել հաւատալիս։ Մի օր մի հարս ներգաւել ա, ու սկսել ա դրան հաթեթա տալ, դրա էլ ջիգրն էկել ա, բռնել ա նրա ծծերիցը, մազերիցը քաշքըշել, ասել ա „Ղանջղդ, գու սատանութիւն ես անում, քեզ խաչը չի խօսացնում. . . Խաչն էլ բարկացել ա, դրան էդ օրը գցել . . .

—Հա՛ . . . Մեռնիմ դրա ողորմութիւնին, իմ իրենց դրա ոտի տակը — երեսին խաչահանելով ա-

ասաց Մանուէլը և սկսան աւելի հեռանալ, մինչև հասնել խրամի զաշը։

Արի էս տեղ մի քիչ նստանք, Աբուլֆին, ասաց Մանուէլը։

Չէ, Մանուէլ ջան, գնանք, տեսնում ես էն մէկ մէկու վրայ գրած իրեք մեծ քարը՞. գնանք նրանց վրայ նստանք։

—Ա՛ւհ, էս ո՞նց են իրարու վրայ գրել էս եքա եքա քարերը, — ասաց Մանուէլը, երբ որ մօտեցան երեք քարին, որ ժամանակ ձիւթահանքի պրեսի, (մանգանայի) պաշտօն են եղել կատարելիս։

—Էս, ասում են, ժամանակով, էրկու ախպէր են ըլել, մէկ էլ մի քուր են ունեցել։ Էրկու ախպէրը էրկուսով ներքևի էրկու քարը իրարու վրայ են գրել, վրայ իրեքը չեն կարեցել, յետոյ իրանց քուրը մի ձեռով վերցրել ա, գրել գրանց վրայ։

—Ա՛ւհ, ամմա զօռով ա ըլել հա՛ . . . Ով գիտա, որ իրեք գնդի մեծ ու պատիկ մոտ ըլին, չեն կարենալ, որ մի քիչ էլ ա տեղիցը ժաժ տան . . . Արի վեր ըլինք սրանց վրայ նստանք . . . ամմա ինչ լաւ տեղ է . . .

Մեր պատանիքը վեր եկան երեք—քարի վերայ նստեցին և սկսան նայել իրանց առաջով ընկած անդնդաձև խորութեան վերայ, որի միջով խրամ գետը փուրփուրն երեսին գնում էր վշշալով։

—Տեսնում ես, ինչ լաւ տեղ ա՞. . . Հրէն, ձեռը

մեհենով գնալ Խրամի զառի վայրը, ասաց Արութիւնը, հրէն էն քարքարուտ անդը լիքն ա նռնով ու թզնով, բայց ոչով չի կարող գնալ նրանց քաղել, ճանփա չը կայ . . . Ցնանում ես, էն զաղէրը՞ (քարայր), որ ասաւՁներովը պատ ա քաշած, ժամանակով ահ ա ընել, նրանցում մարդիկ են ընել կենալիս: Հիմի ով որ զուլաղ հորսկան ա, կամ ճանճի կօթ գնող, պատերը ճանկռտելով, հանում են էդպէս տեղերը: Ասում են շատ անգամ էրծաթ, պղինձ հին գրուածքներ շատ են գթնում էդպէս տեղերը:

—Վա՛յ . . . բաւ ա, որ վէր չեն ընկնում, թէ չէ թիքա թիքա կրէին ու կտոր կտոր . . . Հա՛, Ա՛ռութին Ջան, ես էլ խախտ մտաւայ, թէ քեզ ասել էի . . . Էդ կրնկանը չը Ջգրացնես, իմ սիրան ահ ա ընկել . . .

„Ջէ, ես նրան չեմ Ջգրացնում: Նա ինձ շատ սիրում ա: Վախտ վախտ մեր գեղն էլ ա գնում: Էն օրը կանչեց ինձ ու թշեցս պաչեց. ասում ա, „Ես ձեր գեղումն էլ. քու մէրն ասեց. որ գնաս, իմ մաղիէր էրեխա թշեցը կը պաչես“: Ես էլ նրա ծրծիցը պաչեցի: Յետոյ ասէ „Դէդի, մի ինձ համար էլ մանիկ տաս թասէգ“: Նա թէ „Շատ լաւ“: Վեր կալաւ թասը Ջրով լիցրուց, դրաղեն էրկու մեմ վառեց ու սկսեց մանիկ տալ: Մի քիչ պրկշտասաց. բաներ արաւ, յետոյ ծիծաղեց, թէ „Լա՛ւ, լա՛ւ, շատ

լաւ թաղամ ունիս։ Տէրտէր կը դառնաս, բայց կնիկդ կը մեռնի, յետոյ վարդապետ կը դառնաս, յետոյ եպիսկոպոս, յետոյ կաթ . . . ուզեց թէ ասել էր կաթողիկոս կը դառնաս, մէկ էլ խօսքը փոխեց, սկսեց հիմի էլ ուրիշ բան ասել, թէ «Չէ, դու տէրտէր չես դառնալ, քու մօր սրբոտիներ չի կատարուիլ։ Ձեր տանը քեզ կառնեն, դու կերթաս հեռու աշխարքներ, բայց Աստուած քեզ չի կորցնիլ, դու էլի յետ կը դառնաս։ Էն վախտին շատ բան իրա տեղը չի ըլի, բայց դու կը բաղդաւորուիս ու անուանի մարդ կը դառնաս»։ Էս ասեց ու սուս կացաւ, մէկ էլ թէ «Էս չըլի, էն կըլի, էն չըլի, էս կըլի» . . . Հիմի սրտումն զարդ ա դառել, չեմ գիտում, թէ ո՞րը պիտի ըլի . . .

—Էլ դրա համար ինչի՞ ես զարդ անում, ինչան ասաց, ես էս կըլի, ես էն։ Էս իմ թաղամին չեմ մոլիկ տուած, բայց հէրս ասում ա, «Տէրտէր պիտի շինեմ, իմ պապն, ասում ա, լաւ տէրտէր էր»։ Ինձ հիմի մեր գեղի տէրտէրի տղէն ա գիր սորվացնում. ամեն օր ծեծում ա։ Հէրրս ասում ա, դա բան չի գիրդի, մի խօզարած զաղ ա, կը տանեմ քաղաք, քաղաքի շիտուումն, ասում ա, լաւ են սորվացնում . . .

«Ինչիկ քեզ . . . կերթաս քաղաք կը տեսնես . . . Իմ քուրն ընտեղ ա մարդի տուած, բայց ես չեմ տեսել դեռ . . .

— Էդ լաւ ա։ Իմ քուրն էլ ա ընտեղ մարդի

տուած։ Դէ հօրբդ ասա, թող քեզ էլ բերի։ Ասում են, քաղքի աղէրը շատ լիրբ աղէք են, գեղջի էրեխանցը ծեծում են . . . Մենք որ մրտեղ ըլինք ով կարայ ձեռը տա։ Ասուած ազատի, թէ որ մենք քեզ մատով դիպել ա, էնպէս կը խփեմ, որ քանդի ըղուղը ցրիւ կը գայ։ Նրանք իրանց մուշտուին են պարծենում, դեռ գեղջցու իւմբրուղի համը չեն առել . . . Արուեթին ջան, ամի ընկեր գառնանք, զաղեն, ես իմ օրումը քեզ մատիցս չեմ գցել . . . .

„Ախ . . . Ես դեռ իմ օրումս մի ընկեր էլ ա չեմ ունեցել . . . Հէնց սիրտս ուզում ա, որ մի ընկեր ունենամ . . . . Հայրաթ որ՝ մենք որ մրտեղ ըլինք, գասերնիս լաւ անդիր կանենք։ Ես հիմի շատ բան գիտեմ, դիփ էլ քեզ կը սորվացնեմ . . . .

Ինչպէս Արուեթիւնի, նոյնպէս և Մանուէլի սրտի մէջ ընկերասիրութեան զգացմունքը սաստիկ վառ էր, բայց նոցա լեզուն դեռ ևս տկար էր մի այդպիսի զգացմունքի համապատասխան յայտարար լինելու համար։ Նոցա երկար քնքշախօսութեան հետևանքը վերջապէս այն եղաւ, որ միանգամայն վերացնալ հոգւով, իրանց գրուխներից մի մի մազ պոկեցին և իրարու հետ փոխանակելով, թաղեցին երեք քարի տակին, առանց ոչինչ խօսելու, բայց կարծես թէ իւրաքանչիւրի սիրտը յետագայ խօսքերն էր բարբառում „Մեր ընկերասիրութեան ուխտը պիտի անխզելի մնայ մինչև այն օրը, երբ որ մեզ էլ այս փոս-

թոյթի պէս կը թափէն հոգումը . . . Ցեռոյ վեր կացան և սկսան քայլել դէպի իրանց գերդաստանը, երբ Արութիւնը սկսաւ երգել հրեշտակային ձայնով. շնորհալու երգերից յետագոյ տունը—

Սիրոյ քո հուր արկեալ յերկիր,
Բորբոքեսցի 'ի հոգիս մեր,
Զխորհուրդ սրտից մեր մաքրեսցէ,
Զլոյս գիտութեան քո փայլեսցէ,
Ի քնոյ մահու զմեզ զարթուսցէ
Զմիտս բոցով քով վառեսցէ . . . . .

ԳԼՈՒԽ Բ.

—

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ.

ԱՐՈՒԹԻՒՆԸ ծնել է Թիֆլիզի մօտակայ գիւղերի մէնի մէջ: Որպէս զի մեր խօսակցութեան թելը շատ չերկարանայ, խօսենք միայն այն անձանց վերայ, որոնք որ և իցէ կերպով ազդեցութիւն են ունեցել Արութիւնի կեանքի վերայ, մինչև այն օրը, որ օր որ մենք ծանօթացանք նորա հետ:

Արութիւնի մայրը Գիւլ-Զրհանը,—որոյ ազգում ժառանգական կերպով անընդհատ շարունակվում էր քահանայութիւնը — տեսնելով, որ իւր ամուսինը

ազգ ու ազգական չունի, և ոչ յայտնի է, թէ ե-
ղած է նորա նախնիքներին մէջ քահանայ, ցանկա-
նում էր իւր որդոց մէնքն նուիրել այս պաշտօնին:
Այս իսկ պատճառով Արութիւնի ծնողաց քա-
ռասունքը կատարելուց յետոյ, երբ որ Գիւլ-Զրհանը
գնաց ժամ, նորածին մանկան համար կնանք մաղ-
թելու, նորա պորտն էլ, որ մինչև այն օրը պահած
ունէր, ամփոփեց նկեղեցու պատի մէջ, և մի ջեր-
մեռանդ աղօթքով ու յորդառատ արտասուքով նո-
րածին մանկան կնանքն ոնտեսութիւնը նուիրեց
Աստուծուն և նորա սուրբերին . . . .

Փոքրիկ Թիւնին, հինգ տարեկան դառած, չըզա-
ռած, իւր մօր ձեռքով տրուեցաւ լուսահոգի Տէր
Ղուկասի աղջկան Մանիշակին, որ գիտութեան մէջ
մի գեղի տիրացուից պակաս չէր: Արութիւնը, 'ի
ծնեալնէ հազար անգամ լսած լինելով իւր մօր բե-
բանից, թէ նա գիր պիտի սովորի, կարծում էր,
թէ այդ մի ամենադիւրին բան պէտք է լինի, ուստի
ինքն ևս շտապում էր, որ մի օր առաջ վայելէր այդ
չէր ու ջամիչը . . . .

Մեծ պատի առաջին երեքշաբթի օրը նա արդէն
փափախը վերցրած, և Մանիշակի առջև գետնին
նստած, սովորում էր երեսին խաչահանելը և «Խաչ,
օգնեա՛ ինձ» ասելը: Այս աւելի դժուար չէր թը-
ւում Արութիւնին, սովորած լինելով արդէն իւր մօ-
րից, բայց երբ հասաւ այն տեղին, որ պիտի ասէր,

2690 A 1/911

այր, բեն, գիմ, և վերջապէս ճանաչել Մանիշակի երիս մասի մէջ եղած տարբ, այս անքան դժուար երևաց, որ Արուիթիւնը, երբ որ գնաց տուն ճաշանելու, էլ չուզեց վերադառնալ գէպի այրքնը: Բայց երբ որ Գիւլ-Զբհանը լուծիցը մի սամի հանեց և վրայ քաշուեցաւ գէպի Արուիթիւնը, նա մինչի Մանիշակնց տունը մի շնչում վազեց: Այս եղաւ առաջինը և վերջինը, այնուհետև հարկադրուեցաւ նոր սովորել այրժէձէռան մինչի աշխատաղականացը, որ երբ աւարտեց, Մանիշակը կապուեց Արուիթիւնի ոտները և մի ուրիշ երեխայի ուզարկեց Գիւլ-Զբհանին իմաց տալու: Գիւլ-Զբհանին այդ սովորութիւնը ծանօթ լինելով, շտապեց իւր որդու վարժապետուհու մօտ և խոստացաւ նորան հիւրընկալութիւն, որ և կատարեց անյապաղ: Երեկոյին պատրաստեց բիշի (գաթա) նապուք (կաթնահունց) հալուա, հաւգինի ու զանազան մրգեր, և Արուիթիւնի հետ միասին տարաւ Մանիշակին և յայտնեց նորան իւր անկեղծ շնորհակալութիւնը:

Մանիշակը գովեց Արուիթիւնի պատմութիւնը և խոստացաւ շուտ միջոցում աւարտել տալ և ժամագիրքը: Բայց սորա հակառակ մի քանի տարի առնց մեր Արուիթիւնի ժամագիրքը կարդալը: Նորա մէջ էլ մի հատ ալէլուիա չը թողեց, բոլորորն էլ անգիր սերտեց, բայց Մանիշակին այժմ չը կապուեց նորա ոտները, երևի նորա համար, որ էլ ուրիշ սորվեցնելու

գիրք չունէր։ Ժամագիրքն էլ, Աստուած գիտէ, ո՞ր քունջ ու պուճախից էին գտել։ Ընջուած, կազմահան եղած, փոած, քրքրուած . . . քանի անգամ խեղճ Արութիւնը թափից նորան փէյլիների մէջ, որ ապատուէր ամէն օր գասը կորցնելուցը, բայց էրբ որ առանց գրքի տուն գնացած ժամանակը իւր մայրը հայց չէր տալիս, գնում էր գարձեալ տեղիցը հանում. . . .

Տարիները մէկ մէկու յետևից եկան անց կացան, Արութիւնին հասուցին տասը տարեկանին։ Այս միջոցին մի նորընծայ քահանայ եկաւ և իջաւ Աւետիքի (Արութիւնի հօր) տանը։ Այս քահանան էր Շամշուլդա գիւղի Տէր Մարիոսը, որի հետ հանդիպեցանք մենք առաջին գլխումը։ Տէր հայրը իւր ուսումն ստացել էր Հաղբատում, Սանահնում և Էջմիածնում եղած գիտուն վարդապետների մօտ։ Ինքը իրեն մի հանճարաւոր մանկավարժ կարծելով, փոքրիկ մանչի, Արութիւնի երեսի գծագրութիւնը հասմեմատեց իւր Ջիմիմէրակի անդամաձևական բայաստութիւնների հետ, և եզրափակեց, որ մի զարմանալի ընդունակութեան տէր ազայ պէտք է լինի, ուստի մի քանի օրից յետոյ առաջարկեց Աւետիքին, որ փոքրիկ Արութիւնի կրթութիւնը յանձնէր իրեն։

Աւետիքը, որ թէպէտ աշխարհական էր, բայց „Օխտը վարդապետի զաղամ բան գիտէր“, ուրախութեամբ կատարեց տէր հօր առաջարկութիւնը, կար-

ձերով՝ որ «Յոբին խնամատարաց» մէջ ամենից գրքերուն հետ գործ ունիր։ Գիւլ-Զըհանի ուրախութիւնն ալ չափ ու սահման չը կար, թէև մի կողմից նորա մայրական զգացմունքը, կարօտելու մասին, տրտմում էին . . . .

Թէպէտ Ցեր Մարիամը բնակում էր Շամշուլդայումը, բայց կարգուած լինելով և ուրիշ շատ անքահանայ գնդերի վերայ հովիւ, Հարկադրուած էր շաբաթներով տաներ չը մնալ։ Այս պատճառով ուր որ գնում էր, Արութիւնին էլ իւր հետ տանում էր, նորա դասագրքերի հետ միասին, որ ինքն էր տուել։ Այսպէսով, ահա Արութիւնը կարդացաւ տեսրել նորա մեծ Հին և Նոր Կտակարան, Շարական, Գրիգոր Նարեկացի Վարդապետութիւն, Զամչեանի քերականութիւնը և սկսաւ այնքան անոյշ գրել և շարադրել, որքան իւր վարժապետը։ Ուրիշ գիւղեր գնացած ժամանակներն էլ, երկոյն ճանապարհը կարճացնելու համար, ամբ հայրը պատմում էր Շարանց Վարդից, Այտնուրից և Գաղոմածուից շատ հրաշքներ և խստակրօն ճգնաւորների կեանքեր. վերջումը աւելացնելով. «Եթէ որ կերթանք տուն, այս միևնոյն ասածներս գրքերումը կարդա, որ աւելի բնագրական տեղեկութիւն ունենաս»։ Արութիւնը կատարում էր անշուշտ տէրտէրի հրամանը, և բոլոր կարդացածները սիրով և հաւատով տեղաւորվում էին նորա սրտի և մտքի մէջ . . . .

Այսպէս լսացու երեք տարին, ուր [illegible]ոյն ինքը խոստովանեց, որ էլ մի ուրիշ բան չը գիտէ, որ սորվեցրած չը լինի Արուխիւնին։ Եւ արդարև ոչ միայն ճանաչաւոր, ջուղագրուխիւն, կաղմարարուխիւն և գերեզմանի քար գրել անգամ սորվեցրեց ուր Հայրը Արուխիւնին, այլ և ինչ որ իւր կեանքումը մի հէքիաթ, առակ, հանելուկ ու առած էր լսել, բոլորն էլ ասել էր Արուխիւնին, այնպէս որ ուր Հայրը երկայն ճանապարհները կարճացնելու համար էլ հրաւարք չէր խոսել իւր մառ։ Բայց չէ, ուր Հայրն էլի ուրիշ շատ բան գիտէր, որ գեռ չէր սովորեցրել Արուխիւնին։ Դորա այդ շատ գիտցած բաներին մէջն էր Աբգերսի Աստուածաբանուխիւնը, որ աւելորդ չը համարեց գաս ասել Արուխիւնին, ասելով—«Նիմէ էս էլ լաւ սովորես, էլ քեզ հետ ոչով չի կարող խօսել»... բայց որովհետև այս Աստուածաբանուխիւնն սովորելը պէտք է հինգուէր մի շատ տարիներ վարդուրարքի վերայ և Սուրբ Կուսին պէտք էր միջնորդ ունենալ, ինչպէս սկզբումը մի առաւորի մէջ ասում է—

Դանե յաւէտ ապրիեցեալ,
Զկոյսն միջնորդ քեզ ունեցեալ,
Ոչինչ շնորհ ինչ արի քեզ,
Նիմէ կոյսն իսկ քեզ ասեալ,

այս պատճառով Արուխ[illegible]նի խաչ ու Աւետարանը գարձաւ Աստուածնի միակ պատկերը, որոյ առ-

ջև ասէր ասէր ծունկ չոքելով միշտ այս էր կրկնում— „Դու, ով Տիրամայր, դու, որ բիծամիտ Աստուածածնի պատկերի առջև և նորա աչքերը լցնվում արտասուքով: Նա չէր ուզում վեր կենալ անդից, մինչև չէր զգում մի յանկարծակի տարութիւն ոտից մինչև գլուխ և աչքերի մթնումն.....

Տեսնելով, որ Արութիւնը շատ է ձգձգում իրան—մանաւանդ պահելով սուրբ Կարապետի պատը, որ նորան զարդարէր հիանալի շնորհքով, հետզհետէ նուազում է և կորցնում իւր առողջութիւնը—ուէր հայրը ազատեց նորան Աստուծի մթնաբանութենից և թոյլ տուաւ, որ ազատ ազատ մտնի գաբրիելի մէջ, խաղայ, որքան կամենում է: Բայց մտածմունքը Արութիւնի համար մի սովորական բան դառած լինելով, նա այս ազատ միջոցներն էլ ծառերի տակ, զովարար տաւերներում նստած, ոտանաւորներ էր հիւսում, որ անենէ սուրբ Կարապետը կամ Աստուածածինը որքան շնորհք են աւելացրել.....

Այսպէս, թէպէտ ուէր հայրը այլ ևս չէր դաս տալիս Արութիւնին, բայց երբ որ գիւղի քոխուանն և քէթխուդաները իւր մօտ հաւաքուած էին թնում, այն ժամանակ կանչում էր Արութիւնին ու հարցնում նորա արդէն սովորած դասերից, զորօրինակ—

—„Ի՞նչ կը նշանակէ բառս վարուն՞գ հարցնում էր տէր հայրը։

—„Խնար՞, պատասխանում էր Արութիւնը։

—„Խարբուզակին գրաբառ ի՞նչպէս կասեն.

—„Սեխ՞։

—„Զմերուկի՞ն՞.

—„Մեղրապոպ՞։

—„Ըստ մատանց բանի զի՞նչ է բառս այս „յուշկապարիկ՞։

—„Ի՞ անուն՞ պատասխանում էր Արութիւնը, բայց քէթխուդայքը ուզում էին իմանալ, թէ ի՞նչ ասել է յուշկապարիկ, ուստի ընդհատում էին տէրտէրի հարցաքննութիւնը, որ նա առաջ մէկ յայտնէր նրանց այդ բառի ստուգաբանութիւնը։ Տէր հայրը իսկոյն նոյն բառի նշանակութիւնը հարցնում էր Արութիւնից, որով կամէր ցոյց տալ ժողովրդին, թէ այն, ինչ որ իրանից են հարցնում, իւր աշակերտը անգամ գիտէ։

—„Ի՞նչ ասել է յուշկապարիկ, Ա՛ռութիւն՞ հարցնում էր տէր հայրը։

—„Յուշկապարիկ են ասվում այն կենդանիքը, որոնք կէսից վեր ուրիշ կենդանիի են նմանում, կէսից վայր ուրիշ, զորօրինակ կան էնպէս կենդանիք, որոնք գլուխից վերև կնգայ նման են, իսկ գլուխից ներքև ձկան, թռչունի, իշի և այլն . . .

Այս լսելով քէթխուդաներից շատերը զարմանում

էին, իսկ աւելի ծերերը այդպէս բաներ շատ լսած լինելով, աւելի չէին զարմանում, և ասում էին.

„Աշխարհքումս ինչ ասես իմէ չլինայ . . . ասած ա „Շատ ապրողը չի շատ բան գիտենալ, շատ մանն կիսոյը շատ բան կը գիտենայ . . .

—Մի հետ մի մղրսի էր եկել մեր գեղը—պատմեց մի անգամ ծերերից մէնը — էլ աշխարհք չէր իմացել, գիտի էլ մանն էր եկել . . . Հնդկաստան, Արաբստան, Հարաշտան, Զին-մաչին, Փռանգստան . . . Ես ինչ գիտեմ, էլ տեղ չէր իմացել, գիտի էլ ոտի տակին էր տուել . . . Ի՞նչ ասես, իմէ նրա գլխովը չէր անց կացել . . . Ի՞նչ բաներն էր հեքսմէ անում, որ լսելիս մարդու ջանը փշաքաղում էր . . . Ասում ա. „Մի աշխարհք ընկայ. ընտանի կենդանիքը մեր կենդանոց նրման էին, տղամարդիքը—շնորի . . . Էլ ի՞նչ շնորի, ասում ա, գրուստ շնէր էին . . .

—Ղորդ ա ասել, խօսքը կտրեց տէր Հայրը,—մի աշխարհք կայ, էնտեղի մարդիկը շնագլուխ են . . .

Տէր տէր ջան, քու կարգին մեռնեմ, ոնց չի գրբուստ ասէր, մարդն իրա աչքովն էր տեսել . . . Ասում ա մի աշխարք ընկայ, էն տեղի մարդիքը մի հատ աչքանի էին, էն էլ քնալի միջին . . .

—Ղորդ ա ասել, նրանց ասում են „Քնալա-գիսոդ կամ իմափագիսոդ“:

—Ասում ա մի աշխարք ընկայ, ընտանի մարդոց բոյը մի իմիզ անջաղ կրնէր:

—Ղորդ ա առել, էդ ասվում է «Թզկաց աշխարհ»... Այսմաւորքի մէջն էլ կայ...

—Ասենք գիտեմ, էնքան բաներ էր ասում, որ ես էր մինն ասեմ... Հարա՞... մենք ինչ ենք անում էս ձորի մէջին... Ուսում էլա չունենք, որ բան գիտենանք... Հիմի մենք էդ էրեխի չափ էլա բան չենք գիտում... Աչ, մեր ակրաէրը, ղորդ ա շատ անգեր չի մնա եկել, ամմա աշխարհս էն՝ դիցը խարար կը ասայ... Գեանքի սակ ու գլուխը գիդայ, չունքի՞նչ ասես գրքերում կայ, էլ բան չի մնացել, որ գրած չըլնի... բայի կարդացող կայ, որ մի բան ես ասում, մէկ էլ անում ես ծիծաղում ա, ասում ա՝ էդ սուտ ա, ապած չի... ինքը որ չի ըսում կարդացած, հենց խմանում ա, թէ ապած չի.....

Տէր Հայրն սկսում էր շարունակել իւր հարցարքնոնութիւնը: Հարցնում էր Աստուածաբանութենից և ուրիշ գասերից, Արութիւնն էլ համարձակ և ազատ կեցուածքով պատասխանում էր, և զարմացնում քէֆխուդանները...

—Սա իր մաբաղին չի հասնիլ, ասում էին ներքանք Արութիւնի քամանկին — էքան պատիկ ագէն էլ էքան բան կը գիտենայ...

Տէրաէրակինը, որ շատ անգամ լսում էր այսպիսի խօսքեր, բարկանում էր ակրաէրի վերայ, որ նա միա անգամ մարդոց առջև ոչ բան հարցնէ Արութիւնից, և ոչ ասդ առել ասայ նորան:

—Էս գեղջիկը շրաես են։ Կրեխին աչքով կուռնեն։ Պառաւ Գեւոյի աչքը քար կը պատռի—ասում էր տէրտէրը։ Թէպետ տէր Հայրն էս հաւատում էր այսպիսի նախապաշարմանց, բայց «Անիկայ խօսքին չը լսելու» նախապաշարմունքը աւելի զօրաւոր լինելով նորա մէջ, այս յայտիոց էր հանդիսաւորում առաջինին . . . Դա շարաթը մէկ-երկու անգամ մի հարցաքննութիւն հանդիսի կարիկատուր էր ցոյց տալիս իւր ժողովրդին, որ աւելի հաստատէր նոցա իրա վերայ ունեցած կարծիքի մէջ, թէ նորան յայտնի է գեանքի տակ ու գլուխը։ Բայց պէտք է արդարութիւնամբ ասել, որ նա աւելի իւր բարոյական վարք ու բարքովն էր գրաւում իւր ժողովրդի ուշադրութիւնը, քան թէ գիտութիւնամբը։ Նորան ինչ որ տալիս էին, նա երբէք չէր ասում որ քիչ է, և, առանց նայելու անգամ, գցում էր ջէրը։ Խակ եթէ չէին տալիս, նա ոչինչ չէր խօսում, և այնպէս էլ կորչում էր շատ մերսութիւնն և թատրումի փարձեր։ Հաւատ ասած բանը նորանում այնքան պարզ էր, որ հասել էր մինչև անապաշտութիւն։ Դա ամեն յիմար գրքերի հաւատ էր ընծայում և Աւետարանի հաւատը պաշտում պաշտպանում։ Նորա կարծիքով ապագրութիւնն մանաւանդ տակ ստութիւնները ճրնշուելով, պարզվում, ճշմարտանում են և գուրս գալիս լոյս աշխարը։ Դա Վենեսկում ապուած կրօնի վերաբերեալ խարդախութիւնամբ լի գրքերը կարդում

հաւատում էր և պատմում ու սորվեցնում էր Աբուխիւնին։ Բայց ինչ եմ ասում։ Նա Ձեռագրերին էլ միևնոյն հաւատն էր ընծայում։ Նա մի ժամանակ սերա սիրով պարապելիս է եղել «Սաղմոսներ» ասուած թարգմանագրերով, ինչպէս և իւր փարժապետները։ Թէպէտ սէրտէր գաւնագուց յետոյ շատ հազիւ էր պատահում, որ ուշ գարձնէր նոցա հրաշքների վերայ, այսու ամենայնիւ ժողովրդի մեծ մասին յայտնի էր, որ նա պարապում է և այժմ և այս ոչ միայն չէր պակասեցնում նորա պատիւը, այլ առելի բարձրացնում և գատաւորում էր նրան ասա-գարաշինների կարգումը։ Այս հանգամանքը Աբուխիւնին յայտնի էլաւ այն ժամանակ, երբ որ մի որ սէրտէրի առջև չոքած՝ գաս էր առնում, յանկարծ մինեցաւ աչքերը և նուազած վայր ընկաւ։ Սկսան վազ-վազ անելով և ցուրտ ջուր վերան ածելով յետ բերել (ուշքի բերել)։ Մի քանի ժամ այս դիպուածից չանցած, սէր հայրը բացաւ մի հին սնդուկ, որոյ միջի եղած գրքերը Աբուխիւնը գեռ ևս չէր տեսել։ Տէր Մարկոսը այժմ ծանօթացրուց Աբուխիւնին այս նոր մատենագրածի հետ։ Ջոկ ջոկ տետրակներ էին գոյնզգոյն մելանով գրած վերնագրերով. զորօրինակ «գիր Հօպոպի», «գիր Համատիւս Ծապկի», «գիր չրեղք հնոջ», «գիր Հաւախօսի» և այլ և այլ մանր մունր գրքեր։ Իսկ մի մեծ հատորի վերայ գրած էր «գիր Սաղմոսներ»...

Արութիւնը, շատ անգամ լսած լինելով այս գրքերու մասին, թէ ով որ ունենայ այդ գրքերը, նա իւր որ ուզենայ աշխարհիս վերայ, կանէ, նորա երեսի գոյնը թռաւ, սատանի ուրախութիւնից, թէ այժմ պիտի սատանայ այն վերին գիտութիւնքը, որ էլ ոչ մի հողեղէն չպիտի կարողանայ իրեն հասանել...

Այս դիպուածը պատահած օրի միւս առաւօտուն արեգակը դեռ ևս չը ծագած, ահա՛ հայրը հրամայեց Արութիւնին, որ յիշեալ հատորը վեր առնէ երթայ բաղը, ինքն էլ շուտով կերթայ: Արութիւնը, սատանայով իւր ցանկալի առարկան, մինչի բաղը մի շինչում փաղեց, որ մինչի ակրաէրի գալը, ինքը անանկը ի՞նչ կայ, ի՞նչ չը կայ նորա մէջ: Նա դեռ ևս իւր հետաքրքրութիւնը կէս մի չը լցուցած, ակրաէրը շուտով հասաւ նորան, երկէն ակրոդրմեան ձեռքն առած:

—Ա՛ռութիւն, ա՛ռդի, դու որ ազար ես ունեցել, ինչի՞ մինչև հիմի ինձ չես ասել... Դու մեր անունն ի՞նչ ա—հարցրեց ակր հայրը:

—Գիւլ-Ջը հան՝, պատասխանեց Արութիւնը:

—Գիմի՝ երկը, ինին՝ ութ, հիւնը՝ չը կայ, լիւնը՝ չորս, և այն այսպէս համբելով, և ակրոդրմեան գրելով, ախատարք արաւ ակր հայրը... այսինքն՝ մեր և արդու անուններին տառերի թիւերը գիրքի ազիւսակի մէջ նշանակած թիւերուն համեմատ հաշուեց, և ամբողջ գումարից 12—12 դուրս գալով, տեղը

Հաց հինգ։ Այս Հացորդը տասնեկու կենդանակերպի սկզբին տալով, կանգ առաւ Առիւծի վերայ։ Ասել է, որ Արուեստիւնի տասագը Առիւծն է։ Բացաւ գիրքը, որ տեսնէ, թէ այդ տասդի տիրոջ ցաւին ինչ դեղ է ասել գրած Յոյսմանին։ Զարը պատասխանել էր Յոյսմանի հարցին այսպէս— „Եթէ այս ինչ երեք թրլբսիմները գրուին սև հաւի, կամ անեշան սև ոչխարի արիւնով, մէկով լուացուի հիւանդը, միւսով ծուխ տայ իրեն և մէկէլը կարել տայ իւր աջ բազուկին, էլ այնուհետև նրան ոչ մի չեռաս չի լինիլ“. . . .

Զար գնի բարի խորհուրդը կատարելուց յետոյ, ակը հայրն սկսաւ սորվեցնել Արուեստիւնին այն ամէն գաղտնիքները, որ պարունակում էին այդ գրքի մէջ, և պատմել իւր առաջուան արած փորձերի մասին . . . Տէր Մարիամը պատմում էր, թէ եղել է մի Յակոբ անուն պատրիարք, որ շատ լաւ է իմանալիս էլել, ոչ միայն Յոյսմանի, այլ և „վեց-հազարեան“ ասուած գրքերի գործ դնելը, և թէ իւր վարժապետներից մէնը Լուսաւորչից յետո չէ, որ վարդապետ մարդ լինելով, ուրեմն և Հարուստ, թանգ գնով ձեռք է բերում այն ամէն հատերն ու դեղերը, որ գիւթչութեան համար կարեւոր են, որ Եթէ մեռ քաղաքներումը չի գտնվում, նա բերել է ասիս Սամարիայից, Հնդստանից, և ուրիշ հեռաւոր տեղերից . . . Տէր Հայրը յայտնում էր նմանապէս, որ

հոգևորականներին արգելված է այդպիսի բաներով պա-
բասելը, բայց նա չէր ասում, որ այդ արգելելու
պատճառն այն է, որ այդպիսի բաները սուտ են
միանգամայն և խաբեբայություն, այլ այն, թէ քրիս-
տոնեաներին փրկելու համար, սուրբեր կան, խա-
չեր կան, և թէ ով որ սատանայի իշխանությամբ
կը փրկէ մարդու, նա գերի կընկնի այն սատանային,
որ երախտահաս է եղել նորան։ Բայց, 'ի հարկէ, թէ
որ գժերի ու հիւանդների կը բաւացնես, էդ մեղք
չի, վարձք ա, միայն պէտք է էնպէս անես, որ չի-
մանան, թէ չէ էլ չեն օգնիլ, անց որ ինձ չէին օգ-
նում, բայց «թէ կը մանես, սատանէքանց
հետ պայման կանես, որ ինչ հրամայես, ասածդ կա-
տարեն, դու էլ սիսես կնանիք տկլորացնես, սիրոյ գրեր
անես, ու էսպէս բաներ, էն վախտին դու նրանց գերի
կընկնիս, հոգիդ կընկնի նրանց ձեռքը . . . Բայց ամեն
բան, ինչ ուզում ա ըլի, պէտք է գիտենալ, գիտե-
նալը մեղք չի, անիրն ա մեղք . . .

Արուեթիանը անյուգ սիրով հաւատ էր ընծայում
Տէր Պարկոսի բոլոր ասածներին ու աշխատում էր,
որ ինչ գիտէ-չը գիտէ ամէն հայրը, բոլորն իրեն սե-
փականէ։ «Գիտենալը խաչ մեղք չի, անիրն ա մեղք»
կրկնում էր Արուեթիանը իւր մտքումը և միշտ հարց-
նում էր տէրտէրին այն բաների մասին, որոնք շարժ-
ում էին նորա հետաքրքրությունը և որոնց վերայ
ինքը մտածելով չէր կարողանում վերահասու լինիլ

նոցա նշանակութեանը։ Բայց ոչ մի անգամ չէր պատահում, որ ամէն հայրը ասէր, թէ այդ ինչ աւարկայից ազնկութիւն չունի ինքը։ Մինչև անգամ, եթէ Արութիւնը հարցնում էր երգեցչին մարմինների մասին, ինչպէս — լուանի, արեգակի և ուրիշ աստղերի, ամէն հայրը առանց կարմրելու պատասխանում էր, մատնացոյց լինելով կամ Լիֆիմբասի վերայ և կամ այն գրքի, որ պարունակում է Գրիգոր Լուսաւորչու և Բարսեղ Կեսարացու հարց ու պատասխանները։ Երբ խօսակցութեան միտքը միւս կողմին էր վերարերում, ամէն հայրը պատասխանում էր հասասառն հաւատով ու համոզմամբ, վկայութիւններ բերելով անհամար աղբիւրներից, մանաւանդ Աստուածաշունչի երգերից ... Միով բանիւ, Արութիւնը ամէն հօր բոլոր փիլիսոփայութիւնը սովորեց, բայց „Ազգ“, „Հայ“, „Հայրենիք“ բառերը նորա ականջին չը գիպան ոչ մի օր։ Ամէն Մարիամը ասում էր միայն, թէ „Հայոց հաւատը ամենից լաւն է, բայց իրանք, Հայերը, մի շատ հպարտ ու անմիտ ազգ են։ Հայերը երբէք անկախութիւն չեն կարող ձեռք բերել, ըստ որում անիծուած են ... Այս խօսքերը ապաւորուելով Արութիւնի քնքուշ սրտի վերայ, սատանիկ ցաւեցնում էին նորան և ձգում մի խոր տրտմութեան մէջ, մանաւանդ տեսնելով այն բարբարոսութիւնքը, որ առանց օր կատարվում էին նրա աչքի առջև ...

ԳԼՈՒԽ Գ.

—

ՃԱՆԱՊԱՀՈՐԴՈՒԹԻՒՆ.

ԵՐԲ որ Արուեստիւնը «գնաց բարով» ասաց Մանուէլին և հեռացաւ նորանից, այնուհետև նա սկսաւ երևակայել մի բոլորովին իրեն անծանօթ աշխարհ: Նա գիշերը երազումը տեսնում էր, որ իրը թէ քաղաքումն է, մանն գալիս նորանում, որ Մանուէլին գտնի, տեսնում էր նորան իրանից հեռու կենդանած, կանչում էր, բայց Մանուէլը չէր լսում, սկսում էր բարձր բղաւել և իւր ձայնը թեքը լսելով զարթնում էր և ափսոսում, որ զրկուեցաւ Մանուէլի տեսութիւնից: Շուտով աչքերը խփում էր, որ դարձեալ պատահէր Մանուէլին, բայց հակառակ իւր նպատակին, պատահում էր օձերի, վիշապների, որոնցից ստատիկ վախենալով սկսում էր փախչել, բայց և առաջևը օձեր պատահելով և բոլոր շորս կողմումը, ճնում էր ստատիկ շփոթուած, ցանկանում էր վերև դէպի օդը բարձրանալ և այս նպատակին հասնում էր նա: Թռչում էր Արուեստիւնը և սկսում բարձրից ծիծաղել օձերի վերայ և նոցա գլխին օփսուն կարգալ, որ սոսկալի էր ամէր հօրից: Այսպէս վազելով օդի մէջ, իջնում էր Արուեստիւնը մի բլուրի կամ

բարձր քարի վերայ, բայց իսկոյն զարթնում էր և ափսոսում, որ զրկուեցաւ թռչելուց։ „Ինչո՞ւ“, ասում էր նա, „դէպի քաղաք չէի թռչում...“ դարձեալ աչքերը խփում էր, որ երազի մէջ թռչի դէպի քաղաք, բայց սորա հակառակ, իւր գլխերի մէջ գլուխնում էր զանազան ձեռագիր մատեաններ, որոնց մէջ գրուած էին լինում փակագրերով արձանագրութիւնք, խրթին շարադրութիւնք, զարհուրելի պատկերներ, թաքնամաններ. շարչարուելով տանջուելով կարդում էր, բայց ոչ մի բան իւր կարդացածիցը չէր հասկանում, սատանիկ նեղանալուցը յանկարծ զարթնում էր և տեսնում, որ շատ քրտնել է. յիշում էր իւր երազը, բայց ոչ մի բան իւր կարդացածիցը միտը չէր ընկնում։ „Ո՞ւհ“ ասում էր նա, „էն խրթին շարադրութիւնը, որ միտս ճնարը, կը գրէի։ Տէրտէրը կը զարմանար, կասէր „էս ո՞նց ես գրել“, կասէի, „երազումս եմ կարդացել“ . . . .

Այսպէս մէկ քանի ամիս անցած՝ տէր Հայրը մի երեկոյի յայտնեց Արութիւնին, թէ վաղը առաւօտուն պիտի երթայ քաղաք, և նորան էլ ուզում է իւր հետ տանել ցոյց տալ քաղաքը։ Արութիւնի երեսի գոյնը թռաւ սատանիկ ուրախանալուցը, և մի քանի բոպէ ոչինչ չը խօսեց, կարծելով, թէ երազումն է լսում այն խօսքերը։ Նա էլ չը կարողացաւ ընթրիք անել, ուրախութիւնը հացի տեղ բռնեց, բայց վերահաս գիշերը տարի դարձաւ Արութիւնի

համար և նորա քունը երկինք փախաւ։ Վերջապէս լուսացաւ, Տէր Պարկոսը նստեց իւր քնահլան ձիուն, Արութիւնին էլ իր թարքն առաւ, և մի քաղցր խոստակցութիւնով վարժապետ ու աշակերտ Ճանապարհ ընկան դէպի Թիֆլիզ։

—Տէրտէր . . .

—Ի՞նչ ա, որդի . . . բա՛նդու, բա՛նդու մի անի, թամքը կը ծռես, ձիու մէջքը խարար կըլի . . .

—Չէ, ես շիտակ եմ նստած . . .

—Ի՞նչ իր ուզում ասել.

—Հա՛ . . . Էն օրը Դարդանց Օսէփը մի բան հարցրուց, չիմացայ թէ պատասխան էի տուել . . . շատ ամանչեցի . . .

—Ի՞նչ հարցրուց.

—Ասում ա „դժոխքումը քա՞նի հոգի կան“ ասեցի, չեմ գիտում . . .

—Բա էդ էլ չես գիտում.

—Ես որդիանց գիտենամ, ոչ մի գրում չեմ կարդացել, համ էլ իսկի մտքովս չի անց կացել, որ քեզ էլա հարցնեմ . . .

—Ո՛րդի, որ ամէն բան էլ գրէին, ոչ թուղթ հերիք կանէր, ոչ թանաք։ Ա՛նկաղ արա, ես քեզ ասեմ։ Երբ որ Քրիստոս Հոգուն 'ի դժոխս իջաւ, բոլոր հոգիքը ազատեց, միայն թողեց չորս՝ Կայէնին, Յուդային, Սողոմոնին ու Անակին։ Դրիդոր Լուսաւորիչը, որ ձեռքը Քրիստոսին տուած՝ դժոխքի դռնովը դու-

էր գալիս, յետ մոխիկ առաւ։ Քրիստոս խնացաւ, որ իրա հօր համար ա մոխիկ ուզիս, „Հը՞“ ասեց, „մեղրդ ա գալի՞ս . . . Թող քու խաթրու դժոխքի սունը անկաջիցը հանեն աչքումը դնեն“ . . . Էնպէս էլ արին։ Նա ձեռց ընտեղ։ Բայց Սղոմոնից սատանէքը փախենալով, դուրս արին։ Դժոխքից դուրս եկած՝ Զիթենեաց սարի տակովն անց էր կենում Սղոմոնը, մէկ էլ բարձր մոխիկ առաւ, տեսաւ Աղամին Քրիստոսի կողքին նստած։ Սղոմոնը՝ երբ որ Աղամին տեսաւ, ասեց, „Օրհնեա՛ տէր“։ Աղամին էլ իրա ձեռքը Քրիստոսի դոշին (կուրծքին) դնելով, ասեց, “Աստուած օրհնէ“։ Քրիստոս էլ Սղոմոնի խնամատարութիւնը զովեց, ասեց, „Ես հէնց գիտէի, որ դու Դժոխքում կենող պառուղ չես“ . . . Այ, Էսպէս։ Հիմի խնացա՞ր։

—Խնացայ, խնացայ . . . Էդ լաւ ա . . . Ես հիմի էրկու բան սորվեցի,—մէկ որ՝ թէ դժոխքումը քանի հոգի կան, մէկ էլ որ՝ թէ օրհնեա տէրն ու Աստուած օրհնէն երբուանից ա ձեռցել . . . Հիմի ես ամէն բան էլ գիդեմ, ձեռցել են մենակ էն բաները, որ գրքերումը չկան . . .

—Չէ, ախպի, էլի շատ գրքեր կան, որ դու դեռ չես տեսել։ Ճարտասանութիւն, Տրամաբանութիւն, Պատմութիւն, Աստուածաբանի մեկնութիւն . . . էլի ուրիշ հազար ու մին մեկնութիւններ կան։ Ես չունիմ էդ գրքերը, թէ չէ ես ինքս կը սորվացնէի։

Բայց էլ ինչիգ ա պէտք, որդի աւելի կարդալը։ Բա չես լսել, որ ասում են—

Հասա՝ ու բարեկն է մի գրեր,
Վայ բարեկ մանուզի գլխին։

Տէր Արտոյիանի տղին Հանանչում ես, էն խոզարածին. ինչ խոզարած. բոլ արջ։ Մի զարդակ եւ էս խոզացուիեան ա սովորել, ուզում ա իկ տէրտէր դառնայ։ Ինձ խնդրում են, որ գործակալին յայտնեմ, որ գնայ Առաջնորդին բարեխօս լի։ Հիմի էլ հէնց նրա խաթրու եմ գնում։ Էկան հէր ու որդի ազաչանք արին, ես էլ չուզեցի խաթրներիցը անց կենամ . . . Էհ, իմ ընչիս ա հարկաւոր, ես չեմ օրհնողը. մեզ էն օրհնողի շնչին։ Բայց ես Հասցել եմ զարմացած։ Հարցնում եմ, ասում եմ „Եկեղեցու եօթը խորհուրդը գիտես“. ասում ա „Չէ“։ Շարական ասել գիտես, ասում ա „չէ“ վարժ կարդալ գրել, ածանցուցի մարիկ տալ գիտես, ասում ա „չէ“ Ս՛րհնեալ հոգի, ասում եմ, բա դու ինչ պիտի տէրտէրութիւն անես“։ „Ես ինչ անեմ, ասում ա, հէրս ափսոս կարել ա, իկ հէնց տէրտէր գան, որ իմ տեղը քեզ Հայ։ Չես կարող, ասում ա, սաղը կարել, մեռածը թաղել։ Ասում ա, „Էրս ասում ա, „դրա թաղած մեռելը տեղը չի կենալ“, հէրս բարկանում ա, ասում ա, իկ „գնիկայ մանդ երկեն կրի՛ լի, խելքը—կարճ“։ Ես, ասում ա յետոյ կը սորվացնեմ։ Մի տարը թուման ա, Առաջնորդի ջանը,

ինչ կասի, ասում՝ա, որ չի որնիլ։ ԳրքաՀՀ, ասում՝ա, գրախտի գու

ը բաց կանի՝... Մի ասող ըսի գրան, թե «գու. ինչդ ինչ գիտես, թե գրան ինչ սարվացնեու Աղոթքներն ու մաղթանքները դիփ կիսատա ա թողում, սիրացուի կողքին բռնում՝ա, որ շուտով քարոզն ասի։ Աւետարան կարդալիս գարդակ հագում՝ա, ու նՀՀմացնում՝։ ոչ մի բան ամբողջ չի գուրս թողնում՝ բերնիցը, մի քանի տատ անպատՀատ կուլ կը տայ, շատավանկ բառերը, գրուստ նահատակուել են նրա լեզուիցը։ Շարաթան տալիս ես իսկի չի իմանում՝։ Ղրանց եկեզեցու շարաթանի շատ տեղերը, ինչ որ գա տերբակը ա գառել, գեռ չի տառել։ Դրա համար մի և նոյն ա, որն ուզում՝ա. ըլի։ Բայց ինչպես թանգ ա ծախում՝ իրա տերտերությունը։ Ամեն խորհուրդ կատարելիս, փոքն ես դլխիցն ա առնում՝, էն էլ մեկն երկուսով։ Ում ուզում՝ա, չըհաս ա անում՝, ում ուզում՝ա, հաս։ Ձկ գա շատ բաներ ա անում՝, որ ես չեմ ուզում՝ասել... գա շատ գալաթներ ա անում՝... Ես գործակալի պաշտոնակատար եմ, որ ուզենամ, դրա միրուքը վեր անիլ կը տամ, բայց դրա ծերությունն եմ խնայում՝։ Մեկ էլ որ պետք չի էդպես բաները աշխարքին յայտնել, մեր ազգին կոտր դնիլ... Հարա՛. որդի, էսպես բաներ շատ կան աշխարքիս վերայ։ Դու գեռ երեխայ ես, Աստուած պահի, կը մեծանաս, շատ բան կը տեսնես։

—Ես որ տէրտէր դառնալու ըլլամ, մինչև որ ամեն բան լաւ չը գիտենամ, չեմ դառնալ։

—Ըզգի, մարդս պէտք ա բնական ուսում ունենայ, սովորելով ոչինչ չի դառնալ։ Ա՛յ ինչքան մարդարէք են էլել, առաքեալներ են էլել, նրանց ոչ մինը ուսում չի առել, բայց Հոգւոյն Սրբոյ շնորհքը նրանց էնքան ա տուել, որ Աթէնքի համալսարաններուն էլ չի կարալ մարդ էնքան սովորիլ։

—Դէ ամեն մարդու չի տալիս Աստուած . . . Ես ինչքան պաս եմ պահում, աղօթք եմ անում, բայց որ չեմ սովորում դասս իրան իրան անգիր չի ըլում, դորդ ա, շատ քշերներ էրազումս կարդում եմ զանազան գրքեր, բայց միտս չի մնում . . .

—Ուրեմն դու ուզում ես, որ շատ ուսումն առնես, ամեն բան գիտենա՞ս։

—Հա՛ . . .

—Լաւ, Աստուած մուրազդ կատարի։ Հիմի էս ա գնում ենք քաղաք, թէ որ կը հաւանես, ես քեզ կը թողեմ ընտեղ, կամ յետոյ կը բերեմ։ Ես գիտեմ, որ քու հէրը քեզ չի օգնիլ, բայց եթէ ես ատ կը ճնամ, քեզ չեմ թողնիլ ընդուիթիւն քաշես, թաք ըլլի, դու խելօք ապայ, լաւ ապայ դառնաս . . . .

Տէր հայրը կարող էր Արուիթիւնի դատողութեան ընդդէմ շատ փաստեր բերել իւր կարդացած գրքերից և հաստատել նորա անուղիղ լինելը, բայց որ սկսաւ համազգալ և խրախուսել այս ևս անկարելի

չէ։ Ցէր հայրը, նորա հետ և մեր բոլոր անուշան Աստուածաբաններրը առ հասարակ, 'ի մանկութենէ ունեցել են մի չափազանց գիւրագրգռոց բնաւորութիւն և սասսիկ ձգտողութիւն դէպի բարին և կատարեալն, բայց շրջապատուելով սուտ և անիմաստ մարդիկներով, աշխատել են նոցա համանմանիլ և, եթէ կարող են, գերազանցել անգամ, չիմանալով, որ թէպէտ յառաջ են գնում մեծ մեծ քայլերով, բայց ոչ դէպի ուղիղ գիտութիւն, և լուսաւորութիւն, այլ դէպի խոր տգիտութիւն և շոշափելի խաւարասաստան։ համանմանել այն մարդիկներին, կամ գերազանցել նոցա, կը նշանակէ աւելի տգիտանալ և մոլորուիլ, քանթէ էին իսկզբանէ անոնք . . .

Գարգ ասեմ։ Մի երեխայի մէջ զանազան բնական պատճառներով, գոյանում է ձգտողութիւն դէպի գրագիտութիւն։ Ստիպում է նա իւր ծնողացը, որ նորան տան գեղի տիրացուին կամ տէրտէրին դիր սովորելու համար։ Ծնողքը կատարում են նորա խնդիրքը, տեսնելով, որ արդարև նա շատ սրամիտ է, պատճառ ; նա տան մէջ ինչ որ երդում են, իսկոյն սովորում է, հեքիաթ, առակ են ասում, նա իսկոյն կրկնում է առանց մի բան մոռանալու, մի նոր աշխատ է գալիս, նա սկսում է նրա քամակից մեն գալ և հետուից նրա երգածը լսելով, սովորում է և զարմացնում շատերին։ Գիւղերի գիր սորվեցնող վարժապետները, որ առ հասարակ լինում են կարծրա-

սիրտ և փայրենարարոյ գահիճներ, այս գազաններն անգամ այսպիսի ազայոց վերայ առանձին ուշադրութիւն են դարձնում և նոցա հետ փոքր ինչ քրնքրուշ են վարվում։ Այս հանգամանքը մի կողմից ունենում է այն հետևանքը, որ ազան խրախուսուած, աներկիւղ յառաջ է գնում իւր ուսման մէջ, իսկ միւս կողմից նա ստանում է իւր վերայ մի մեծ համարում և կարծիք, թէ իւր մէջ բնական ձիրքը կայ, նա միւսների պէս բթամիտ մահկանացու չէ։ Վերջապէս պատանի ազազանդը տիրացուի գիտութիւնը (որ մի ժամագրքից և սաղմոսից աւելի չէ) սեփականելուց յետոյ համարվում է ուսումնաւարտ դրնում է նա, այնուհետև տէրտէրի հետ քէլեխ ուտելու, հարսանիքի, մկրտութեան, մի խօսքով ընկնում է հասարակութեան մէջ վաղօրոք, մինչ դեռ իւր հասակակից անգրագէտ պատանիքը չեն կարող համարձակել մօտ մօտենալ պարոն քէֆխուդաներին։ Այս գիպուածից մեծ օգուտ է քաղում նրա գիւրազգացութիւնը, մանաւանդ երբ նա սկսում է գրել սորա նորա նամակը, պարտաթուղթը, պայմանագիրը և այլն։ Պատահում է սորա նորա տանը հին գրեանք, որոց որդի ժառանգութիւն մնացած, որ զգուշութեամբ և ահու դողդոջով պահպանում են, այն յուսով, որ իրանց տանից երբ և իցէ մինը կարդալ կը սովորի և մեծ օգուտ կը քաղէ նորա հոգեշահ խրատներից և կամ խորհրդաւոր գիտու-

թիւններից։ Այս գրքերը առ հասարակ քնում են գոնէ քաղաքի պատմութիւնը, նոր-թնարտաբրաց առաջները, Աղուէսագիրքը, Էշիմիրաէն, գոգոֆաժուն և այլ և այլ բժժանք և յիմարութիւնք։ Հաւատում է պատանին այսպիսի գրքերը և սկսում է գիշեր ցորեկ կարդալ։ Մոռանում է անպէտ գործը և ուշ չի դարձնում ոչ մի բանի վերայ։ Գիշերը նորան ձրագ չեն տալիս, նա կարդում է կրակի շեղջի լուսով։ Զարգանում է նորա երևակայութիւնը, աւելանում է ուսման փափաքը, յղանում է վերջապէս իւր ուսման ծարաւը գոփացնելու համար զանազան հնարքներ, որոնցից ամենահեշտը և գիւրահասը թիւում է նորան վարդապետութիւնը, կամ վանականութիւնը։ Նա հասնում է իւր այս նպատակին։ Պատահում է վարդապետների, կրօնաւորների, որոնցից ստանում է բաւական շատ երևակայական գիտութիւններ և այսպէս ամբարուած բազմակողմանի առասպելներով, վերադառնում է սև գլխով դէպի աշխարհ և համարվում է ամենից գիտուն, մինչդեռ ամենից յիմարն է, ըստ որում նա թէև կատարելագործուել է, բայց ոչ ճշմարիտ գիտութեամբ, այլ ճշմարիտ տգիտութեամբ և երևակայութեամբ։ Ցաւալի հանգամանք . . . .

Այսպիսի և որանից աւելի գատը դիպուածների ենթարկուել էր և մեր ամէն հօր հանձարը։ Մտաբերելով իւր երբեմն ունեցած ուսման փափաքը,

Արութիւնի մէջ տեսնում էր նա իւր մանկութիւնը և համակցում նորան։ Լինելով անչափ պարզամիտ և միակողմանի համոզմունքի մէջ հաստատուած, նա ընդունակ չէր երևակայել անգամ, թէ Արութիւնի ապագայ վարժապետները կարող են լինել բոլորովին այլ ուղղութեան և գաղափարի տէր մարդիք, որոնք հարկ կը համարեն նախ և յառաջ Արութիւնի գլխից հանել այն ամէն հասկացողութիւնը, որ իրանից ստացել է, որպէս զի իւրեանց տալու ուսումը ապահով և մաքուր տեղ գտնի նորանում . . . .

Տէր Հայրն սկսաւ պատմել Արութիւնին իւր կեանքի երևելի դիպուածներից, մինչև հասան թէլէթի սարի ստորոտը։

— Դէ հիմի վէր արի, ասաց տէր Հայրը, ձին մեղք է։ Որ վեր բլինք էս սարի գլուխը քաղաքը կերևայ։

Արութիւնը վայր իջաւ ձիուց, և մի քանի քայլ ծանր փոխելուց յետոյ, թռաւ զատի վեր արագաքայլ եղջերուի նման, և տէրտէրին շատ դաժ թողնելով, ինքը բարձրացաւ սարի գլուխը և կանգնեց կէնա-ծառի մօտ, ուր տեղից երևեցաւ նորան քաղաքը։

Նաւթլուղից սկսած մինչև Վերա յանկարծուստ բացուելով Արութիւնի աչքի առջև, ապուշ կթեցուց նորան։ Զբաղես, երևակայութեան աշակերտ, և սատիկ զգացող Արութիւնը Ճնաց տեղնիատեղը կանգ առած, էլ չը կարողացաւ մի քայլ յառաջ փոխել։

բազմաթիւ եկեղեցիներու ոսկեզօծ խաչերն էլ, կարծես գիտութեամբ, փայլփլում էին, քարշելով դէպի իրանց արեգակի ճառագայթները, որ աւելացնեն Արութիւնի զմայլմունքը։ „Հրաշալի՛ տեսարան՝ բացագանչեց վերջապէս Արութիւնը։ „Հէնց էս ա գրքնէ՛ քաղաքը, ասում էր նա, և քիչ էր մնում, որ Ցաղիփի նման „շարա՛շ-շարա՛շ՝ կարդալով, թռչի տարի վերայից և ընկնի իւր ներքևն ընկած խորերն ու ձորերը։ „Էս անպատմելա՛, ասում էր Արութիւնը, „էս անպատմելա. Սօղոմոնի հրաշագործութեամբը կը լինին էսպէս պայծառացրած . . . Ա՛խ, Աստուած թե տար ինձ, ես էս սահաթիս կը թռչէի, ու կը սկսէի սրա վերայ պտուտ պտուտ գալ . . Քաղաքացիք կը զարմանային, կասէին „էս ո՞վ ա, երկնքիցն ա գալի... Ի՞նչ լաւ կը լինէր է . . . Էն վախտին Մանուէլին շուտ կը գտնէի . . . Տէրտէրը կը մեծար զարմացած . . . Սղիսէի նման Հա՛յր Հա՛յր կանէր, հէնց կիմանար, թէ Սղիսայի նման երկինք են տանում ինձ . . . .

Մինչև Արութիւնը այսպէս մի քանի բոպէ կը զուարճանար քաղաքի երևութով, ուր Հայրը մօտեցաւ նորան, ուր վայր իջնելով, ձիու կապը տուաւ նորան, ու ինքը սկսաւ մտքակի կոթը մեկնելով դէպի քաղաք, ցոյց տալ, թէ ինչ տեղ է Աստաշնորդի տունը և ի՞նչ տեղ կանտրատորը և գործակալը, և թէ այն, այս ինչ եկեղեցին է, և այս, այն ինչ։ Վերջապէս մտան քաղաք։ Վախենալով, որ մի գուցէ Արութիւնը

մայրուի ու կորչի կամ գրոշիայի տակ ընկնի, տէր հայրը առաջուց զգուշացրեց նորան, որ այս կողմ, այն կողմ չը նայի։ Այսպէս հասան մինչև Հաւրաբար, ուր ձին մի թափլայում կապելուց յետոյ, տէր հայրը ուղարկեց Արուիթիւնի ձեռով գործակատարի համար բերած մեղրահացերը և այլ և այլ գիւղական բարիք։ Գործակատարի տունը ցոյց տալու համար, տէր հայրը կանգնեցրուց Արուիթիւնին մի փողոցում, ձախ ձեռը դրաւ նորա ուսին և աջ ձեռը մեկնելով դէպի մի կողմ, ասաց.

—Էսպէս կերթաս, յետոյ աջու կռանդ վրայ շուռ կը գաս, ընտեղ մի նեղ քուչա կայ, էն նեղ քուչումն էլ որ մի քիչ կերթաս, էլի մի ուրիշ քուչայ կը գայ առաջդ, նրանով էլ որ մի քիչ կերթաս, մի տուն կը տեսնես, մի պուճուր բախչա առաջին։ Ընտեղ կը հարցնես, կասես Տէր Փիլիպոսենց տունը ո՞րն ա, կասեն. այ, էս ա։ Կմտնես տուն, փափախդ վէր կը կալնես ու էդ կը տաս իրանց, կասես տէրտէրն ուղարկեց։ Իմացար։

—Իմացայ, իմացայ . . . Էսպէս կերթամ, յետոյ աջու կռանս վրայ շուռ կը գամ . . . կը գանեմ, կը գանեմ . . . .

—Ես գիտեմ, որ կը գտնես, դու ղուչաղ ես . . .

Դէ գնա . . . Տէր ուղղեցէ զգնացս քո 'ի ճանապարհս խաղաղութեան . . . Էս տեղը մոլորդ չը գցես, ես ընտեղ կը սպասեմ քեզ. . . .

ԳԼՈՒԽ Դ.

—

«ՈՐ ԲԱԴՆԱՑ ԶԲԵՌՆ ԸՆԿԵՐԻՆ, ԿԱՏԱՐԷ ԶՕՐԷՆԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ»:

ՀԱԼՎԱԲԱՐԻ անվերջ մինչ մէջ, տախտի վերայ ծալտպատիկ նստած երկու կին մարդիկ, ուրիշ ջահել քան թէ միջահասակ, խօսում էին զանազան հոգեկան և մարմնական պիտոյքների վերայ, բայց կարծես թէ, բոլորովին առանց նպատակի և ուղղութեան: Այս երկոցունց մինն էր Արութիւնի քոյրը՝ Օսանան, իսկ միւսը՝ Մանուէլի քոյրը՝ Հռիփսիմէն, որ Օսանային մօտիկ դրացի լինելով, եկել էր նորա մօտ ժամանակ անց կացնելու: Երկուքն ևս լինելով երրորդ գիւղական աղջիկներ, իսկ այժմ քաղաքում հարստացած, շատ սիրում և համարվում էին միմեանց: Թէպէտ Օսանայի մի փոքր հպարտ և մեծամիտ բնաւորութիւնը երբեմն անտանելի էր թւում Հռիփսիմէին, բայց նա նկատելով նորա մէջ մի խորհրդաւոր ցաւ սրտի, և առ ինքն ունեցած պարզ և ճշմարիտ սիրոյ յարաբերութիւնը, համարում էր նորան իւր առաջին և միակ բարեկամուհին, որին պատրաստ էր իւր բոլոր գաղանիքը յայտնել: Իսկ Օսանան Հռիփսիմէին համարելով արդարամիտ և ազ-

նուաստիրա, բայց իմացականութեամբ գեռ ես տհաս, սիրում էր նորան, բայց չէր խոստովանում նորան իւր սրտի ցաւի պատճառները: Նոցա խօսակցութիւնը սկսաւ երկարանալ և զանազան փոփոխութիւն ստանալով, յարմարուեց Հռիփսիմէի յետագայ հարցին.

—Ա՛խչի, Օ՛սանա, ի՞նչի ես դու էսքանց միշտ տրխրած, մի օր չեմ տեսնում, որ դու առաւօտից մինչի իրիկուն միապար ուրախ կենաս: Զմեռուան արևգակի նման շուտ շուտ ամպի տակ ես մտնում: Սիրք եմ անում ինձ ու ինձ ասում եմ, նարար ի՞նչ պիտի ըլի սրա գարդը: Գառք Աստուծոյ, ասում եմ, ուտիքը լաւ, հագնիքը լաւ, մարդը լաւ, ախպերները լաւ, էրկու էրեխայ ունի, մինը քանզմիւսը սիրուն, շարմաղ, մի ասող չունի, թէ դաշքիդ վերևը ունք կայ՞, թէ դանզրդ ծուխա, դէն նստի՞: Ասենք թէ սկեսուրդ մի քիչ անբարիշ կնիկ ա, բայց ով ա հիմի սկսուր վրայ մտիկ տալիս:

—Ա՛խ Հռոմսիմ, դու շատ գիժ աղջիկ ես, դու մարդի սիրա չես կարող հասկանալ: Դու ի՞նչ գիտես, բալքի թէ ես շատ էլ ուրախ եմ: Կամ եթէ գարդ էլ ունենամ, ինչ զարմացք առ: Ո՞վ չունի գարդ: Շատ տրտրդ մարդ պիտի ըլի, որ իսկի գարդ չունենայ . . .

—Լա՛ւ ա, լաւ ա, գիտենք, որ դու մի էրկու այրքէն ես կարդացել, շատ ես հասկանում: Ուրիշների վրայ էլ ծիծաղում ես: Ես եմ, որ մի բան էլ ա չեմ

պահում սրտումս, ինչ կայ, չքկայ, դիմ և քեզ ասում եմ։

—Դե լաւ, որ ըռէնց բէգամաղ ես ը�, անխելք դէր ես քեզ իմ գլխի անդրը պատմում, որ ուրիշ անգամ էլ զահլա չը տանես, համ էլ բալդի թէ մի քիչ թեթեւանայ բեռս։

—Ես գեռ օրօրոցումն եմ էլել, որ իմ օրօրոցի փայտ մեր հարեւան Նարգիզ խանումը խաչա քաշել մօրս կամքով, թէ Սանեն իմ Ռուստամբէգի համար պիտի ուզեմ։ Ես գեռ չորս տարեկան դառած, չը դառած ոսկէ գնդիկով մի մեծ խաչ մանէթ կախ տուին շնորհիցս, թէ դու Ռուստամբէգի նշանածն ես։ Ես էլ շատ ուրախացայ։ Մտքումս ասում էի, հալբաթ էս մի լաւ բան ա, բայց թէ ինչ բան ա, ես էդ չէի գիտում։ Ռուստամ-բէգն էլ գորգ ա, ինձանից երկու տարով մեծ էր, բայց նա էլ չէր ուզում հասկանում։ Անմեղ սրտով մենք շատ սիրում էինք մէկ մէկու։ Որ չէր ըլի, որ կամ ես չերեւէի նրա աչքին կամ նա իմ։ Լապէս մենք իրարու սիրով վառուած՝ փաղուայ հէքիաթների նման, ով տարով կը մեծանար, մենք օրով էինք մեծանում։ Ռուստամ-բէգը գեռ տասնըչորս տարեկան էր, բայց մարդ տուողը կասէր քսանից պակաս չի ըլի, չունքի բեղատեղերը աւելացել էր, բայը չինարի գառել։ Օրու գիշեր աշխատում էր, որ ոչ մի ապից յետ չը մնայ թէ որս անելում թէ խաղալում, թէ ձի նստելում, թէ մարդաւորու-

թիւնում, թէ տան ու տեղի հոգս քաշելում։ Ջահ-
կէլ օրօք էսքան նեղութիւնների ու չարչարանքների
մէջ ընկնելով, այնումը չէր զգում։ Քանի որ դեռ
պատիկ էի, ես չէի փախչում նրանից, համ էլ խօ-
սում էի։ Մի օր հարցրի, ասում եմ, բա չես բեզա-
բում, որ էդքան դէս ու դէն էս ընկնում։ Թէ՝ չէ,
ասում ա, Օսան ջան, երբ որ քեզ տեսնում եմ, ա-
սում ա, թէ բեզարած եմ ըլում, հանգստանում եմ,
թէ քաղցած, կշտանում, թէ տխուր, ուրախանում...

Օ՛, սէրն ի՞նչ ասես, թէ չի անիլ . . . Ես էլ եմ
սիրել, ես գիտեմ, ասաց Հռիփսիմէն . . . .

—Մի օր,—շարունակեց Օսանան,—Մի օր իմ
մօրքուրենց տանիցը գալիս էի (իմ մօր քուրը մի
շատ լաւ կնիկ ա, գիր էլ գիտայ, ինձ նա համ գիր
էր սորվացնում, համ կարել, գործել)։ Էն էի ա-
սում։ Իմ մօքրենց տանիցը գալիս էի գուլրա անե-
լով, գիրս կռան տակիս, հէնց որ հասայ մեր տան
ներքևը մի ձոր կայ, էն ձորը, մէկ էլ տեսնեմ, Ռուս-
տամ-բէգը թուանքն ուսովը գցած՝ էրեսու վեր է-
լաւ։ Ցեղ չը կար, որ թագ էի կացել, Ճնայի տա-
ռած, աչքերս գետնին գցած, կաղնած. չունքի ես
հիմի հասկանում էի ամեն բան. գիտէի, որ նշանա-
ծիցը պէտք ա փախչել, պէտք ա չը խօսքան կենալ։
Ռուստամ-բէգը տեսաւ, որ ես շատ ամանչեցի, մի
քիչ հետ կաղնեց, թէ „Մի ամանչիլ, Օսանա ջան,
մեզ ըսանդ ոչով չի տեսնում։ Էդ ի՞նչ ա, ասում ա,

կառնատիրոջ, այրքեն ես սոխրանում, թէ՞ այր խէ շատ։ Ես գլխով արեցի։ Թէ „կուս խօ չես գառնալու՞։ Ես գլխով արեցի։ Թէ „էլ ինչի՞ ես գլուխդ օրօրում, թեզու չունես, կամ հա՛ ասա, կամ չէ՞։ Ես գլուխս կախ գցեցի ու ձեացի սուս արած։ Նա թէ „Օ՛սա՞նա, որ հնուած, դէ մէկ գլուխդ բարձրացրու, երեսիդ էլ ա մոխիկ սատ, խօ քեզ չեմ ուսելու՞։ Ես աչքի ցածրացրի գլուխս, ըսա որում, զորդ ա, շատ սիրում էի, բայց շատ էլ ամանչում էի։ Յետոյ նա թէ. „Գառնա ջան, անկաջ դիր ես քեզ մի բան եմ ուզում ասել, պէտք ա պատասխան տաս ինձ, կամ հա՛ ասես, կամ չէ։ Ես մէկ եթիմ (որր) ազայ եմ, ոչ հէր ունեմ, ոչ մայրիկ, ոչ քուր, ոչ ազգական։ Մի մէր ունեմ միայն, որ քեզ շատ է սիրում քան թէ ինձ։ Ի՛նչ կարողութիւն ունեմ, քեզ յայանի ա։ Մենք դեռ շատ պատիկ ենք էլել, որ մեզ նշնել են։ Ես հիմի մեծ ազայ եմ գառել, թէ որ չը հաւանեմ քեզ, կասեմ, ես չեմ ուզում, ոչով քեզ զօռով ինձ չի տալ։ Ինպէս էլ գու, թէ որ չուզենաս ինձ, կարող ես ասել, չես ուզում։ Ես ըսել եմ, որ քու հէրը մի քանի տեղ ասել ա, թէ իմ աղջիկը նշնած չի, իմ կնիքին ինչ իրաւունք ունի առանց իմ կամքի նշնելու։ Իմ մէրն ասում ա, որ քու հէրը շատ իրա ասած է, անկուրում մարդ ա։ Որ մին չէ ասեց, էլ սաղ աշխարքը նրան հա չի կարող ասել սաղ։ Բայց ես չեմ փախում։ Քանի որ ես սաղ եմ, քեզ ոչով չի կարող իմ ձեռ-

քիցն առնիլ, բայց թէ կը մեռնեմ, էն վախտին թէ կուզէ քար քարի վրայ չը կաղնի, ինչիս ա հարկաւոր . . . Դէ հիմի ասա մէկ խմանամ, տեսնեմ, դու էլ ինձ սիրում ես, թէ հէնց մենակ ես եմ գըժուել, որ ոչ գիշերը քուն ա գալիս աչքերիս, ոչ ցերեկը՝ զարար։ Առաջները լաւ էր էլի, ոչինչ չէի հասկանում, բայց հիմի . . . Ա՛խ . . . Կրակն էլի լաւ ա, մի անգամ էրում ա պրծնում . . .

„Ես, զորդ ա, շատ ամանչում էի, բայց գլուխս բարձրացրի, մարիկ ասամ Ռուստամբէգի էրեսին, ասեմ ես քեզ սիրում եմ, ինչ անելու ես, արա, կուզես, փախցրու, կուզես սպանի, որ ուրիշի ձեռք չընկնիմ . . . Բայց Ռուստամբէգի սիրթնած երեսը, աչքերից կաթկաթելիս արտասուքն որ չը տեսայ, սիրտս քիչ մնաց թէ կուրծքիցս թռչի. գլուխս շրջեցի, ձեռներս թուլացաւ, գուլպէն ձեռիցս վէր ընկաւ, կրակացայ թէ վերցնեմ, աչքերս մթնեց, վէր ընկայ . . . Ցեռոյ խմացայ, որ երբ որ ես թիլացած վէր եմ ընկել, Ռուստամբէգը ամանչել ա, թէ վերցնի, փախել ա կշտիցս, գնացել ա մօրն ա խմաց տուել, որ շուտ գայ ինձ օգնութիւն անի . . . .

„Վերջապէս, էլ ինչ գլուխդ ցաւացնեմ։ Իմ հէրը մի ողջում ախպէր ունի քսանոց Յովակիմ անունով, բայքի թէ Հանաչես, քսանոց մեզանից մօտիկ են կենում։ Առաջ վարժապետութիւն էր անում, հիմի ոչինչ չի շինում . . .

—Գիտեմ, գիտեմ . . . Սոֆիոյի մարդին չես առնում: Ասում են շատ կարգացած, իմաստուն մարդ ա...

—Դա առաջ մի տուտուց զարդ էր, հիմի ա, որ խելքը գլուխն ա եկել, շունչի շատ տեղեր ընկաւ, շատ նեղութիւններ քաշեց, ուզում էր փիլիսոփայ դառնալ, բայց չը կարաց . . . Ինչ և իցէ: Էդ Օմակիմը ամեն բաղաքային ժամանակ գալիս էր մեր տուն, մի քանի շաբաթ մնում էր, ինձ դիր էր սովորացնում, քաղքիցը միշդ բաներ էր առնում ուզարկում, մէկ խօսքով ինձ շատ սիրում էր, ասում էր քեզ ես պիտի մարդի տամ: Բայց դու ում որ հաւանես, ես էլ հաւանեմ, նրան կը տամ: Մի բաղաքային ժամանակ էլի եկաւ մեր տուն, մի երկու շաբաթ մընաց: Մի իրիկուն, իրիկնահացից յետոյ, իմ հէրն ու դա մի մի բարց դրին գլխների տակին երկէն-բարակ ձգուեցին տախտի վրայ, ու սկսեցին խելքներին զօտտալ: Ինպէս միտս ա, ոնց որ էս օր: Առաջ սկսեցին սրբերից, ճգնաւորներից պատմել, հուշաթ անել, յետոյ, երբ որ խօսք բացուեցաւ քաղքի վրայ, Օմակիմը սկսեց պատմել թէ ինչ նոր բաներ կան քաղքումը, յետոյ թէ՝

—Ա՛ւեսոյը, գիտես ինչ կայ: Մեր Օսանան իսկի գեղի խարջ չի: Վէսոյ ա սրան քաղքումը մարդի տալ: Ափսոս չի՞, էս սիրուն շարմաղ աղջիկը գեղումը թողնել . . . Յետոյ հէրս սրա վրայ մի առակ ասեց, թէ՝

„Ասում ա, մի թագաւոր ա էլել, թէ մի հարուստ մարդ, բաւ միտս չի. երեք տղայ ա ունեցել, իրենին էլ խրատ ա տուել, թէ ո՞ր քաղաք, ո՞ր գեղ որ գը-նաք, ամէն տեղ էլ մի մի տուն շինեցէք: Մեծ ու միջնակ ազէն ամէն տեղ էլ զորղրղորդ տներ են շի-նել տուել, մեծ մեծ փողեր մտել, բայց փոքր որ-դէն, որ բաւ ա իմացել իրա հօր խրատի միտքը, մի տեղ խաղաղարար ա դառել, միւս տեղ կեցահէր, մէկէլ տեղ՝ մի բան, մի ուրիշ տեղ մի զադ, մի խօտով ամէն տեղ էլ բարեկամութիւն ա դցել: Խրատ տուող հէրը փոքրին ա գովել, թէ „իմ ասիս էլ հէնց էդ էր . . . Հիմի, Օմակիմ, իմ ասելս էլ հէնց էդ ա: Ես էլ չեմ ուզում, որ Օսանին գեղումը տամ: Քաղ-քումը կը տանք, որ մի մի գնացած վախտներս վա-զուայ ազի նման տանք տուն ունենք, թատրումը չը վէր գանք, ախոռումը քնենք: Ղորդ ա, քու տան գուռը ինձ համար ամէն օր բաց ա, բայց քու կը-նիկը խա չի՞ գալու տրխնիս հանի, տանեցս լուանայ, երբ որ աղջիկս կը լի, նա ամէն բաներ էլ կանի՞»: Էս ասեց հէրս, ու դուրս գնաց գուռը, որ տեսնի շը-ները ո՞ւմ վրայ են հաչում:

„Դու ուրիշ տեղ տուն չես կարող շինիլ, անմեղ տեղը քու տունն էլ կը քանդեսա՞» . . .

Էս իմ մօր ասած խօսքն ա, որ խակի մոխցս չի ընկնում: Էն օրուանից մինչև հիմի, որ էս ա տասներ հինգ տարին թատամ ա ըլում, իմ հէրը չորս տեղ

տուն ա շինել, բայց ոչ մինումը իրա իշտահը չի տալիս, որ մի գիշեր պառկի։ Ինձ տուաւ էստեղ, որ տեսնում ես ինչպէս խալխ են, մարմի բերնի թիքէքը համբրում են, միւս երեք քուրաս էլ տուել ուրիշ ուրիշ գեղերում, որ էլ ասիլ չի ուզիլ, թէ ինչ օրում են, մինը մինից բեթար, ծրուան հացի կարօտ...

—Հա՛, էն էլի ասում։ Երբ որ հէրս դուրս գնաց դուռը, Օվակիմն սկսեց իրա խօսքը, թէ

—Ցղէն ես կը ճարեմ։ Ես, գիտէք, լաւ մարդ ճանանչել գիտեմ։ Զոմզաան իրա առած ազը էնպէս չի ճանանչիլ, անց որ ես մարդին կը ճանանչեմ . . . Քրթամ, մրթամ պէտք չի, առանց էդ էլ եօլա կերթայ։ Բայց պէտք ա որ Օսանի կամքումն ու սրտումն լի։ Ես, գիտէք, նոր ժամանակի մարդ եմ, մեր պապերի սովորութիւնը ինձ դուր չի գալիս։ Նրանց ժամանակն անց կացաւ։ Իմ հէրը ինձ համար շատ լաւ տեղերից աղջիկ էր ուզում, բայց ես փոդի թամահութիւն չարի, ասեցի, իմը Սօփիան ա։ Ղորդ ա դրա խաթրու ինձ տանից դուրս արաւ, բայց ես իմ ասածն արի։ Հիմի դու ի՞նչ կասես, Օ՛սանայ, կուզես որ քեզ համար քաղքումը լաւ տղայ, խելօք տղայ գտնեմ։

—Ես ճնացի սուս արած։ Մօրս երեսին մոլիկ տուի տեսայ որ ափրինել ա, իմացայ, որ նա հաւան չի նրանց մտածմունքին, բայց վախում է խօսելու։ Ցեռոց ես ասեցի—Բիձայ Օվակիմ, դու խօ գիտես, որ

ես նշնուած եմ, ինչի՞ ես ընենց ասում։ Նա թէ՝ Գիժ խօ չես, էդ ի՞նչ նշնուիլ ա, պատիկ փախաղ օրօրոցիդ վրայ խաղ են քաշել։ Էդ ի՞նչ յիմարութիւն ա։ Հիմի դու մեծացել ես, կարող ես քու խելքով, քու սրտով ազայ գտնիլ։

„Ես ուզեցի թէ ասեմ, որ ես Ռուստամբէգին շատ սիրում եմ, շատ հաւանում եմ, բայց ամանչեցի, մընացի կմկմալիս։ Օխակիմը հասկացաւ թէ ես ինչ եմ ուզում ասել, ինձ հարցրուց, ասում ա, — Սիրում ես դու էն ազին։ Ասեցի „Հա՝։ Յետոյ նա թէ՝

„Դէ որ էդ տեղն ա հասել բանը, էլ ես չեմ խառնուիլ այսուհետև։ Ես հէնց իմացայ, թէ դու չես սիրում, քեզ զօռով ուզում են նրան տան, թէ ինչ ա, օրօրոցի վրայ Թուրքի նման բէշիդ-քեաբթամա են արել։ Գիժ գեղջի պիտի ըլի, որ քաղքըցուն երանի տայ, քաղքին թամահ անի։ Խելօք մարդը գեղումը հազար փառքով լաւ կապրի, քան թէ քաղքումը, բայց գեղջիք իրանք որ կոպիտ են, չեն գիտում ապրիլը, ա՞լ ա մեղաւոր։ Մի ասող ըլի դրանց, այ օրհնուած մարդիք, ջուրը խօ փոզով չի՞։ Մի լուացէք էդ կեղտոտ շորերնիդ, գլուխներդ, միանեղդ խատակ պահեցէք, քան թէ ամեն օր խօզի դաստաբխանա էք շինում թանդիրը, խնջանահոտը վերանում, ատունը հոտով լցնում, օդն ապականում։ Քարերի, ծառերի ու ջրերի բոլ տեղը մարդն խատակ չապրի՞, Ստուած ալէտք ա պատժի էդպէս մարդին։ Մի կարգ,

մի կանան չը կայ, հայվանի նման ուտում՝ են, հայ-վանի նման մեծանում։ Որը բուղի նման շլինքը հասատացնում ա, գոռում, գոչում, գլուխը հողերին քարերին խփում, կատաղում մարդի միս ուտում, որը լղարում ա քոսոտ ձիու նման, ըստուր, ընդուր կեղտոտում ցաւով գցում։ Բայց փոքրից սկսած ընչկլի սիպտակամրուք հալևորներին, մի լիզու ունին մի սուր խօսքեր, որ, Աստուած ազատի, թէ որ էդ էլ չունենային, ակռաներին դրանց կուտէին։ Ում որ մարդ մի քիչ խելօքի տեղ ա դնում, տեսնում ա, որ նա ամենից յիմարն ա։ Յիմարին էլի կարելի ա բան հասկացնել, բայց ի՞նչ ասես էն մարդին, որ կրակ ընկնել յանձն կառնի, որ խօզի միս չուտի։ Ա՛յ, օրինակ մեր Աւետիքը . . . .

Հէրա գոնիցը տուն մտաւ։

—Էդ ի՞նչ ա, ասում ա, Օմակիմ, էլի չարացել ես։

Օմակիմը թէ

—Չէ, չեմ չարացել։ Օտանին խրատում եմ, որ գու ինչպէս կը հրամայես, էնպէս անի, բան որում, նա երևայ ա, չի իմանում աշխարհքումս ինչ կայ, ինչ չը կայ։

Նա թէ՝

—Տեսնես Օտանի ախին ո՞վ ա մոլիկ անում։ Իմ աղջիկը չի՞, ձեռքիցը կը բռնեմ մի թուրքի, մի քըրդի, մի կուրի, ում ուզենամ, ներան կը տամ։

„Հէրս էս խոտերն շատ բարձր էր ասում, ու շատ բարկացած, էնպէս որ չիխուռնանքս էլ սկսեցինք մէկ մէկու երեսի մտիկ տալիս, թէ ինչի սա յանկարծ չարաչար։ Դրա բարկանալու պատճառը շների հաչացն էր։ Ասում էր՝ մէնի մէջը թաքուն, թաքուն, եկել էր հերթի մտա կուչ եկել, որ անկանջ դնի, իմանայ, տեսնի իրան օգուտ են խօսում, թէ ինչաս։ Շները չէին ճանաչել մէնումը, սկսել էին հաչել։ Հէրս վրայ էր հասել ճանաչել։

Միւս օրը, երբ որ Օվանիսը ճամփայ ընկաւ դէպի քաղաք, Հէրս սկսեց երևացնել իրա բարկութիւնը։ Առաւօտուայ հացի ժամանակն էր, մէս կերակուրը պատրաստել էր, ինձ էլ ասեց, որ սուփրէն գցեմ։ Սուփրէն գցեցի, հաց, սոխ, պանիր, կաթը, մածուն, ինչ կար, չը կար տանը, մէջ տեղ բերի, որ բալքի թէ պրանով հօրս սիրտը շահեմ, հանդարտացնեմ, բայց նա մի բաշ վեր կացաւ տեղիցն ու ձախու ձեռը գօնջ արած, աջու ձեռով խանչալի գատրիցը բռնած կանգնեց ու աչքը գցեց մօրս վրայ։ Մէրս աչքի տակովը ամէն բան տեսնում էր, բայց գլուխը չէր բարձրացնում . . . .

„Մեց որ երկինքը, որ, երբ որ կարկուտ, կամ մի մեծ սելաւ տալու ա բլում, առաջ մէնում ու սեւանում, ամպերը գալում են ու բանեց բնտեց պէնքն պէնքն ա անում, ընենց էլ իմ հօր երեսը ամպեց ու մէնեց, որոտաց ու գոռաց, ինչ

որ ասեց թուրքերէն, ես չիմացայ, բայց գիտեմ, որ ուշունց կրնէր, էլ ուրիշ բան չը կար մէջ տեղը, խանչալը որ կայծակի նման ոստոստաց մօրս գլխին, ես թրատայ ընկայ հօրս խոխորը։ Էլ չեմ գիտեր ինչ էրաւ, որ Աստուած բռնեց շուտ ինձ խելք ու միտք, ուժ ու զօրութիւն տուաւ, ես միայն էն գիտեմ, որ մի աչքաճաշակութիւնը պիտի թուչէր մօրս գլուխը, թէ որ մի քիչ ուշ կարէի հօրս առաջը . . . Հօրս ձեռքը խանչալը վէր ընկաւ . . . Մի կէս սհաթ ոչինչ չըխօսեց. յետոյ ասեց մնացեալը փոխուեց, սիրբիանեց, գիզնեց, էնպէս որ իմ մեղքս էկաւ, ուզեցի թէ ասեմ, լաւ ա, ինչաս չունի, էլ այսաւ հետև էզպէս բան չանես . . . երևոր շուտ տուաւ գէոդի ապօթարան, (հէնց իմացաւ թէ ոչով չի անանում) երեսին խաչահանեց, թէ ընահրամի քեզ չար ստանայ՞։ Էս ասեց ու խանչալը վէր կապաւ դրաւ տեղը, գուրս գնաց . . . .

Մէրքս ինչ որ նստած էր, էնպէս էլ մնաց նստած քարացածի նման։ Երբ որ հէրս գուրս էկաւ, ես սկսեցի մօրս մխիթարել, որ սիրտը չընեղացնի։ Նա թէ—քեզ մի էր ասում, մէջ տեղ ընկնա՛ս, կը թագնէիր մէկ անգամից կը պրծնէի դրա ձեռքիցը, քան թէ ասէն որ պիտի թուր խաղցնի գլխիս . . . ես դրա եսիրը խօ չեմ . . . .

Դէս մօրս թագեցի տանը նստած, ինքս գուրս եկայ որ մնիկ տամ, տեսնեմ հէրս ա՞ր ա գնում։ Նա

գնաց գեղամիջումը կաղնեց, որ տեղ որ միշտ մարդիքը մոդ են բռում, մի քանի ուրիշ մարդիկ էլ եկան կաղնեցին նրա մօտ, յետոյ դիսիունանքը մը-տեղ գնացին մի տուն մտան։ Ցան տէրը քոխվէն էր, զոնաղ արաւ նրանց, թէ, „մի նոր կարաս եմ բաց արել, եկէք, տղէք ջան, մի հաճն առնուք“։ Պետի մի մի թունդի գինի խմեն, էդ նրանց մաքով կընշանակի հաճն առնուլ . . . .

„Կէսօրն անց կացաւ, հէրս տուն չէ կաւ։ Երբ որ արեգակը մէր մտաւ, ճրագ վառելու ժամանակն էր, մէկ էլ տեսանենք հէրս աչքերը կարմրացրած գալիս ա։ Դեռ տուն չը մտած. տաւարածի վրայ բարկացաւ, չեմ գիտում ինչի՞ համար, նա էլ մի բան մտհանա արաւ կշտիցը հեռացաւ, որ ծեծ չուտի, յետոյ հէրս տուն մտաւ ու սկսեց թոնթորալ ու ինքն իրան խօսիլ։ Ցետոյ թէ

—Քեզ եմ ասում, ա՛ հնիկ, դու ՞ր օրէնքով, ի՞նչ իրաւունքով առանց իմ կամքի աղջիկ ես նշում։ Դիշերուայ կիսին ուրիշի աղէն ի՞նչ բան ունի մեր հերթի վերայ. բալքի մենք մեր տանը մի թաքուն բան ունինք, չենք ուզում, որ աշխարք իմանայ։ Հը՞...

„Մէրս տեսաւ որ սուս անելով աւելի կը բարկացնի, սկսեց խօսել. ես զարմացայ, որ էնպէս առանց վախենալու սկսեց խօսել։ թէ

—Ինչի՞ ես քարացրել սիրտդ, ա՛յ մարդ, ինչի՞ ես մոլորուել։ Ես քու զարաւաշը խօ չեմ։ Այ աղջիկը

ինչքան որ քունն ա, էնքան էլ իմն ա: Ոչ գու, ոչ ես չենք ուզում, որ սա անբաղդ ըլի. միայն անենք, խելք խելքի տանք, ոնց որ լաւ կըլի մեր աղջկայ համար ընէնց անենք: Հէնց համարենք, թէ նշնուած չի. նոր ենք ուզում նշնի: Ես էս աղջիկը լաւ տղայ չեմ ճանաչում մեր գեղումը. մեր աղջիկն էլ նրան ա հաւանում, նրան ա սիրում: Դու ինքդ էլ նրանում մի փուտ չես տեսնում, 'ի զուր տեղը ուզում ես, որ անբաղդացնես էրկուսին էլ. . . .

„Մի խելք մարդ որ լսի էս խօսքերը, կասի մի՞թէ էնպէս մարդ կը գտնուի աշխարքի վրայ, որ դրա հակառակ խօսի: Թէ որ կը գտնուի, պէտք ա էդ մարդը շատ յիմար ըլի: Բայց ով որ գիտէ, թէ ի՞նչ ասել ա յիմար, նա չի ասել էդպէս: Դու ի՞նչ ես կարծում, Հռոմանիմ, իմ հէրն ինչ պատասխան կը տար իմ մօր խօսքերին, դու խօ քիչ շատ ճանաչում ես նրան, գիտես որ նրա անումը քիչ ա մնացել թէ Հնդաստան հասնի: Ամեն գեղում էլ պատուում են նրան, ասում են, գորդ ա, աշխարհահան ա, գորդ ա կարգացել չի, ամա օխտը վարդապետի զարգամբան գիտայ . . . .

—Ես մի հազար անգամ լսած կըլիմ իմ հօրից՝ թէ նրա նման խելք ճարտար մարդ չը կայ ոչ մի գեղում, ասայ Հռիփսիմէն, աւելացնելով—իմ մարդով, պէտք ա, որ ոչինչ չխօսի, պէտք ա, որ զարուլ անի մարդ ասածին: Բայց որ իմ հէրն ընէր, հէնց իրա ձին կը քշէր: Միտս ա, բազի վախտ, որ մէրս մի խե-

լոք բան կասէր, հէրս չէր հաւնել, կասէր, ինկայ մաղն էրկէն կրլի խելքը կարճ։ Ինիկն ու ձին, ասում էր, մի ջինս են. կապը, որ ձեռքդ թողեցիր, էլ ներանից քեզ խեր չը կայ։ Ինիկն ու ատամանէն մի ջինս են։ Եւ ասում էր, աշխարքի տունը քանդեց, դիմունանցն էլ դժոխք տարաւ։ Ինիկ չէ՞ր, ասում ա, որ Օհաննէս Միքայէլ գրուխը կարել տուա։ Թէ որ հնիկ արմատը ատամնա չի, հարա՞ ինչի՞ Մըշու Սուրբ Կարապետի եկեղեցումը ներս չեն թողնում. . . Ես ի՞նչ գիտեմ, էնքան բաներ էր ասում որ։ Պաքի իմ հօր վրայ ինչի՞ եմ բարկանում, մեր մարդիկը էնպէս չե՞ն։ Մախլասի . . . Ցեռոյ։ Հէրդ ի՞նչ ասեց։

—Հէրըս էնպէս որոտաց, որ հէնց խմացայ թէ տունը գլխներիս փուլ եկաւ. պէտք ա ասած, որ իմ հէրը միշտ թուրքերէնով էր ուշունց տալիս։ Ամաչ մի քանի ուշունցներ տուա, յետոյ սկսեց հայերէնով, թէ

—Ա՛յ հնիկ, ես անմեռում եմ, որ դու քու կապը կրտրել ես. դու ուզում ես ինձ վրայ մարդութիւն անես, դու ինձ խրատ ես տալիս։—(Զէնը բարձրացրուց)—Ա՛յ հնիկ, դու չես գիտում, որ ես հնիկոյ խելքով չեմ ապրում։ Դու չես գիտում, որ քու հան ինձ համար չէ ա, չէն հա՞։ Ես մարդ եմ, մարդ... Ես իմ թքածը չեմ լիզել։ Իմ գլխինը լաչակ չի։ Իմ ասածն ասած ա . . . Հանեցէք էդ մանէթը յետ ուղարկեցէք, թէ չէ քաշքիրս մնա են էլել, էրկուսիդ էլ էս սհաթս փարչափարա կանեմ. . . .

Էս ասեց Հէրս ու յետ դառաւ գէպի ինձ, առաջ բղաւեց վերաս յետոյ թէ

—Դիտե՞ս ինչ կանեմ քեզ, թէ որ այսուհետև տանից դուս ես եկել, կամ էն տղի աչքաւին երևացել . . . Քեզ ոչ թէ խանչալով, հարա, ճաշառով, ճաշառ գիտես, այ էն հին սգոցը որ պատի գլխին գրած ա, նրանով կը մորթեմ, խմանում ե՞ս, թէ չէ . . . Դէ, շուտ. հանիր էդ փողը շինքիցդ...

Դնս ինացի սառած, սիրթնած, խելքս գլխիցս թռաւ, չիմացայ, թէ ինչ անեմ: Վէրս, արտասուքն աչքերին, մօտացաւ, հանեց տուաւ իրան: Նա էլ տուաւ մեր թուրքն նօքարին, որ տանի յետ ապ: Էս վախտը էլ ես չիմացայ թէ ինչ ասեց մէրս, մէկ էլ էն տեսայ որ գնանի վրայ փռուեց: Նա քանի ջանում ջան կար, բղաւեցի ու ընկայ հօրս խոխրը. Էս վախտին Հէրս ինձ շղռուեց պատովը տուաւ: Էլ ես չեմ իմացել ինչ ա անցկացել մեր տունը: Երեք օր անց կացած ինձ պատմեցին ամեն բան . . . . . Երբ որ իմ Հէրը ինձ խփում ա պատին գլուխս պատռում ա, ես ձեռում եմ թիլացած, վէր ընկած: Մեր հարևաններին լում եմ գալիս են տեսնում ես մի տեղ թիլացած, մէրս մի տեղ, Հէրս ճնացել ա երկուսիս մէջ տեղը կանգնած, իրա գործը վերջացրել ա, էլ չիմանում, թէ ինչ անի: Մեր յիմար թուրքն էլ, որ տեսնում ա բան էս տեղն ա հասել, ուզում ա որ միանգամից վերջացնի ամեն բան: Չամ տանում

ա նշանը տալիս ա Ռուստամբեգին, համ ասում, — էլ այսուհետև տարու

—Մէրբա զարուլ շարաւ։ Թէ մեր անուամբ կը կարուի, պիտի աշխարքումն առանց գառնանք։ Խաղան էդ բանի վրայ ուրիշ իմաստ ա մտքիկ տալիս։ Սկըսումն խաղեր կապել, բաներ անել։ Հարամ։ Հիմի գրուատ տանելիկու տարի ա, մեր տանը չեմ էլել մարս էրևալը չեմ տեսել, տեսակը ունիմ, որ ասում են գեղումը լաւ կարդում ա, չեմ տեսել... Էն տարիերի հով հով տեղերը, ցուրտ ցուրտ ջրերը, տրման տրման ծաղիկները... Սրեղ սրտիցս արուն է կաս... Ես գիտեմ, որ շատ չեմ ապրիլ....

—Դէ լաւ ա զարդ մի՛ անի։ Մեր Մանուէլն ասում ա տեսակիդ պիտի գայ քաղաք։ Գլուխս տարել ա։ Ասում ա Օսանին հարցրու՝ տես եվ պիտի գայ։ Ասում եմ, Օսանէն ինչ ա գիտում, թէ նա երբ պիտի գայ։ Դէ լաւ ա, աչքերդ արփի... Էս տարի մեր գեղումն էլ էր մի աղայ ինքն իրան սպանել, էլի էդպէս բանի համար։ Մի աղջկան սիրում էր, պիտի առնէր։ Էդ աղջկայ մեծ քուրը մարդի տուած էր։ Դա էր իր պատիկ քուրը մէրուխին անում, շունչի մեր շունչին։ Որա մարդը տեսնում ա մի քանի անգամ խօսելիս, խայրնալիշ ա բլում, ասում ա, էն որդին ինչի ա քեզ մօտ գալիս։ Ինիկը պատճառն ասում ա, մարդը չուզում հաւատայ, ոտի տակին ա գցում սպանում, յետոյ տանումն մի տեղ կախ տալիս, թէ գնացել ա ինքն իրան խեղդուել։ Տղէն էս բանը իմանալն ու դարանչէն սրտին առնելը մին ա

անում. . . Կծպիտ են, կծպիտ, գեղջիները։ Մեր Մա-
նուէլը լաւ ա նաշխում նրանց։ Էս օր ճաշին խօսք
փէր էկաւ գեղջոնց փայ։ Նա ինէ—էս օր մէյ գա-
նում էլ, մեր գեղիցը մարդիկ են էկել. ասում եմ,
«բարով էք էկել, ի՞նչ էք անում, ի՞նպէս էք»։ Ասում
են, «լաւ, փառք Աստուծ, պահել ա բարի աղօթ-
քիդ։ Դու ո՞նց ես, ի՞նչքան փող ես աշխատել»։ Էդ
ախմախներն, ասում ա, էլ չեն ասում ինէ ի՞նչ ես
տեսել, ասում են, ի՞նչքան փող ես աշխատել։ Կա-
նանաս ինձ հարուր ինումներով առուտրի ըլեն
ուզարկած։ Ասում եմ, ասում ա, հօրս ասեցէք ինձ
համար մի քիչ ալուր բան ուղարկի, էս տեղ քա-
դաք տեղ ա, ամէն բան փողով են առնում։ Ասում
են. հաւը տանը կենայ, կուտն ուտի»։ Քեզ ասում
են ախպէրդ ունես նրանք քու նօքարը խօ չէ՞ն, որ
քեզ համար վարեն, ցանեն, կասեն, ալան, բերեն
քեզ տան, որ դու ուտես, քեզ համար մարդ դառ-
նան, յեւոյ դաս ասես ինչ որ հօրական ապրանք
անէնք, կէսն ինձ ա։ Հրէն, ասում են Ներկարարի
աղէն էլ ա ուզում առել, էլ հօր ըմօրը չի ճանաչ-
ում։ Հօրը փայ բարկանում ա, ինէ երբ որ տես-
նում ես ինձ հետ պատուաւոր մարդիկ են խօսում,
դու ինչի՞ ես միրուքդ ատրացնիկով մէջ տեղ ընկնում,
ինձ ցաւը գցում նրանց առջեւը։ Ասում ա, «ասում
ես էնպէս ոչայ չեմ, Աստուած ապ, ես լաւ մարդ
դառնամ դիւնանցդ էլ աչքիս լուսին նման կը-

սիրեմ, էն՝ որ նա ցածրութիւն է համարում, ես ինձ համար բարձրութիւն կը համարեմ, ես նրա նման թեթեւամիտ փրանտ չեմ ընել՝: Ինձ չեն հաւատում, ասում է, թէ միշտ էդպէս են ասում, յետոյ դալիս են մեր գլխին ազատ դառնում: Քաղաք եկած փախտերնիս էլ, քամահրեին դէպի մեզ անում . . . Ասում եմ, ասում է, էդ վատ էր, հիմի քաղաքացիք գեղջոցից չեն արհամարհում . . . Բայց նրանք էլ նոց իրանց ձին են քշում . . . .

Այս միջոցին ներս փաղեց մի պատանի մարդ, կարմրած՝ քրտնած, երևում էր, որ շատ փաղել էր, բան որում չէր կարողանում շնչառութիւնը հանդարտեցնել . . . .

—Ը՞հը, հրէս էկաւ մեր ազատադան, ասաց Հրոխիմէն, ասած է, „անում մուր, խաչէն գրցիր . . .“ Ի՞նչ խարար է, էդ ինչի՞ ես կարմիր բռէնց:

—Եկել եմ անեկանջարդուկ, ասաց պատանին և վրայ ընկաւ Օսանոյի ականջից պինդ բռնեց:—Աստ անեկնարդուկ ի՞նչ պիտի ասես . . . .

—Մանուէլ ջան, կամաց հուպ տուր, էնց սոր-բես, անեկանջս ցաւում է, ասաց Օսանան:

—Ես էդպէս բաներ չեմ պիտա . . . Ա՛սա . . .

—Դէ թէ լաւ բան կրչի, թէ որ կամ ախպէրս կրչի էնած, կամ մէրրս, ես քեզ համար մի լաւ, մի շատ լաւ ժամաշապիկ կը կարեմ, խաչերով, գաւերով

ղաշխարով . . . Մի խոսքով Ենգիզը կը կարեմ, որ ոչ մի ժամանակ նրա պես բուռ չբրի . . . Դէ սատա։

Արուքիխանը նկել ա, ասաց Մանուկը ուրախությամբ, ափանցը ձեռքից թողնելով։

—Ողորդ ես ասում։ Բա դու արտեղ տեսար, թեչիկ չի բերիցիր բնձ մնաս։

—Ա՛յ, թեչագիս տեսայ, ամիսաջ դրիր պատմեմ։ Շիտակը դուրս եկած տուն էի գալիս, մին էլ տեսնեմ մի ապայ խուրջինը շալակին, Ճեռցել ա Շամբուրեցանց Սկիզեցու մնա շինարը գիս ու գէն ծամանելով կանգնած։ Սիրտս ասեց, գնա տես էդ ում ա։ Վազեցի մնաս, տեսնեմ մեր Արուքիխանը . . . .

—Վա՛յ, քոռանամ ես, ում գիտայ ձեամիէն կորցրել էր . . . .

—Դէ համբերիր, ասեմ է . . . Ա՛ռուքիխան, ասա սում եմ, էդ դու ես . . . Մախլասի, էլ ինչ ասեմ, էլ ում կարայ մեր ուրախությունը լեզուավ ասի . . . Վերջապես հարցնում եմ, ասում եմ, էդ ինչ ա, ուր ես գնում։ Դա թէ—գործատեղի մնաս սիրուն ասա նէլի էս բանները, ասում չեմ գանում . . . Էն ասա հարիր խուրջինը ձեռիցն ասայ ուսագս գցեցի, ասեցի, դու բեզարած կըլիս, թող մի քիչ էլ ես ասանեմ։ Բանները ասարանը գործատեղենց ասունը, ընտանեցոց էլ գնայինը թասուլին գիանը։ Ցերակրին ասում եմ, սրբոց ունց էիր մնաս գնում էս խատ էրեխեն։ Դա թէ, ղորդ ա ուղարկենցի, բայց մեկ էլ փուշմանա

նեցին։ Ասած ա, ասում՝ ա, «Լրիվին բան գի, եգ-
նէն գնա՝»։ Ապրիս, ապրիս, ասում՝ ա, որ Արուբիխ-
նին քանդեց ես ապիլ։ Ինոց հարցրուց, ասում՝ ա,
գու մի՝ ապէն ես, Ճանաչա գալիս ես, բայց լու
միասա չի բնիգուն։ Ես ասեցի հոգա անուանք։ Ես նոր
սիսեց գլիս պարհպանիլ ասեց, ես էլ ասէն ասաց, շատ
լաւ սիրանիր ա։ . . . Ասումեն շատ գիրաւուն էլ ա։ . . .

—Ինոց մի՞ր գնացին, բա քեզի չի բերեցիր Արու-
բիխնին։

—Ինոց, իրանք գնացին Օվանիսեանց ասուանք, ես
էլ խսկի միասա չընիգաւ, թէ ուրիշի ասուն են գնում։
Արուբիխնի հետ ես էլ գնացի։ Ես ուզեցի, որ բնա-
անդից շուտ գամ քեզ իմանց անեմ։ Սոփիան չը թո-
ղեց, թէ Ճամ Արուբիխնի մնա, միասին չայ կերեմք,
յետոյ կերթաս։ . . . Շատ լաւ գնիկ ա, էգ Սոփիան։
Բա Օվանիսը՞։ . . . Ասումեն գրա պէս գիրաւուն մարդ
չը կայ էս քաղքում։ Մեծի հետ մեծ ա, պարիկի
հետ, պարիկ։ Արուբիխնից մի քանի բան հարց-
ուց։ . . . Ա՛ֆիֆերիմ Արուբիխն, լաւ պատասխան
տուաւ։ . . . Օվանիսը շատ գոմեց, ապրիս, ապրիս,
ասում՝ ա, ես չէի գիրաւում, որ գու էգպէս խելոք ապրայ
էր գաւնաս։ Պարիկ վերադարձ, ասում՝ ա, մի խնդրաս
փոնդրաս գալ էիր։ . . . .

Դէ ապրիր լաւ ա, Ծ՛ատանայ, ասաց Հովսեփեանին։—Հիմի
սիրարդ էկաւ, էլ Էնքան չես սիրիր։ Պահիր մնաց
Մանուէլի հետ մրանգ կերթան Զանգի շիրանը, ես-

ում են բնտեղ բու են սորվացնում։ Դէ մնա բա-
րով։ Հիմի սկեսուրդ կը գայ, մոքումը կասի «էս ինչ
ա, հէնց միշտ մեր սանն ա նստած։ Ո՞վ գիտայ, ին-
չեր կըլի խաբար տալիս հարսիս . . . .

—Ես հիմի կերթամ մի տեսնեմ ախպօրս, թէ
որ ակրաէրը թողնի կը բերեմ ինձ մօտ . . . Ա՛խ-
բես, ապրես, Վանուէլ Ջան, որ ինձ ուրախացրիր...
Ժամաշապիկդ չեմ մոռանայ, ասածս, ասած ա . . .

—Քեզանից ժամաշապիկ չեմ ուզում, թող ըլի
Արութիւնին չը թողնես գնայ գեղը, ասաց Վանուէլը
և դուրս գնաց . . . .

ԳԼՈՒԽ Ե.

—

ՆԱԽԸՆԹԱՑ ԳԼԽԻ ՍԿԻԶԲԸ.

ԶԱԲԱԹ աւուր երեկոյեան ժամերը նոր արդէն
աւարտուել էր Տփխիսումը, երբ Հաշմարարի մէյդա-
նից մօտիկ անելքի մէնի բարիօնի վրայ նստել էր Ա-
րութիւնը և անտանելիարեմ նայում էր դէպի մէյ-
դանում անց ու դարձ անող մարդիկը, որանցից որը
գրօշկայումը նստած՝ փոփոխիր ծուռ գրած և պա-
պիրոսը բերանին՝ վառցնում էր գրօշկապանին, որը
ոտով էր վարում դէս ու դէնս Քիչ քիչ մութը վե-

բայց հասաւ, մէյդանի չորս կողմով շարուած գու-
քանիներում սկսան վառուիլ ճրագները և քշեռ-
ները մին քան զմիւսը բարձր ձայնով չրրխկալ։
Որն սկսաւ կանչել — մօմ ածէ . . . կայլի մօմ ածէ . . .
խրատուլի . . . խրատուլի . . . որն էլ 'ի զուր ա-
բա՛ ա հա՛ բղաւելով զինգացնում էր կախ տուած
փոքրիկ զանգակը և քրշեռը դարդակ չրրխկաց-
նում։ Ով ինչ բարիք որ ունէր վաճառելու, իւր ձայնի
ուժովը հրաւիրում էր գնողներին։ Կանանչի ծա-
խողը անգամ, իւր ձայնի բոլոր ուժը մի տեղ հաւա-
քած բղաւում էր, լաւ կանանչի՛ն . . . լաւ կա-
նանչի՛ն . . . օ՛հ — օ՛ — հօ՛ — հօ՛ . . . արա՛ն, է . . .
մի բարակ և քաղցր եղանակ միայն մանդրուքի
խանութների առջևից էր լսում, ուր նստած էին
երեխայք և մի սեղան, խունկ ու մում վերան՝ առ-
ջևները դրած՝ հրաւիրում էին պարոն ուսանո-
ղին, որ խունկ ու մում առնեն. ուստի և երգում
էին հանի՛ ցէք. ուստէք, խո՛ւնկ ու մում ասրէք,
հոգու վարձք արէք . . . Այսպէս բարակ ու հաստ,
քաղցր ու կոպիտ, բարձր ու ցածր ձայները գրօշ-
կանների գոգոցի և զանգակների հնչիւնի հետ
խառնուած՝ գրամիրացնում էին քաղաքը և ապուշ
կիսեցնում Արուսիխնին։ Այն, որ մի խմացականու-
թեամբ զարդացած և նուրբ ճաշակ ունեցող մար-
դուն կարող էր ձանձրութիւն պատճառել, Արու-
սիխնի վերայ բոլորովին ընդհակառակ ազդեցու-

քիթն էր անուշ։ Նա այս բոպէին թէպէտ իրան մեռածել էր և գուցէ գնում էր շատ կրնասէր գրուելու, եթէ ներսից մի ձայն չը հրաւիրէր նորան։

—Ա՛յրի ներս, այրի, Աբրահամ, տասց ձայնը— Էգուց ես քեզ էր տանում մեռած կանում տեղն տեղ էլ, թէ՞նչ կայ, չը կայ, դիւթ էլ նշանց էր տալիս . . .

Վեր կացաւ Աբրահամը և մտաւ ներս, ուր տէր հայրը նստած էր տախտի վերի ծայրին և երկնի սերպարտեան ձեռքին՝ խոսում էր քաղաքի թանգարանեան վերայ, իսկ Օվսէփիմը, խոսում էր թանգարանեան պատմաբանների վերայ, մի այսպիսի ամով և կցիտաւր նախադասութիւններով, որ քիչ շատ փորձուած մարդը կարող էր նկատել այդ երկուքի հասակաց և հայեացքի իրարու հակառակ լինելը։ Տախտի դիմաց գրած էր մի գրասեղան, որոյ վերայ կոյրն մի քանի մեծահատոր գրքանց։ Աբրահամը մտաւ այդ սենեակն և սկսաւ հետաքրքրուելով նայել նոցա վերնագրերի վերայ, բայց նստանում ոչ մի հայերէն գիրք չը գտաւ, բայցի մի հատորից, որ խոյն վերցրաւ և սկսաւ այլ անցուածել նորա էջերը։ Առաջին անգամ պատահելով մի աշխարհաբար գրքի և այն բարդրագրեալ իրեն հասկանալի բառերով գրուած՝ անչափ ուրախացաւ։ Աբրահամը և չը խորհեցաւ այնպէս տանել իւր հոգու փոփոխումը, որ Օվսէփիմը չը նկատէր։

—Ա՛ռաքելեան, ես ուզում եմ, որ քեզ գրուածից էլ գիրքը, արա, մի բարձր ֆարդա, ուզում ենք ինչպէս ես ֆարդում, ասաց Օմարիմը։

—Ո՞ր գլխից սկսեմ, հարցրեց Առաքելեանը։

—Հենց էլ սկզբից սկսիր, ինչ ուզել ֆարդում ես։

Առաքելեանը սկսաւ ֆարդալ յիսապայ տոպիրը՝

«Փոպոյրը որ մանում եմ՝ հենց խմանում՝ թէ աչքատրը տալ ա ընկել։ էլ ձէ խէր կայ, ձէ բարբարեաթ։ Հարցն ու ջուրն էլ որ փոպով բրեն ծախում ու առնում, էլ ձեմ գուռը գնաս, ում ձեռք գէմ անես։ Ասելի փոխու էլ տեսել եմ՝ որ գուբաններում էլ սիրուն կիրուն մանէլիները, ասէն ասած՝ ամէն մի փոպ համարելիս՝ էնպէս գրաես՝ թէ փոպասիրանչ հոգին հեսան ա գուս գալիս, էնպէս են սրտիթում իրանց խասիեթի վրայ, հենց խմանում՝ թէ առաջնեերիցը թէ հասնի, կիրուչի։ Մէկի ձեռք գէմ արա, շան որթի բրեմ, ձէ մի բուռը հոգի արժանանամ՝ թէ սուտ բրեմ ասում։ Ասում ենք գինիք, գինիք, ծոմ, ցամաք, մի ծեզ էլ չեն տալ՝ որ աչքդ հոխես։ Թուհ մարդ իրան հոգին պէտք է ծախի, որ փոգի թամահ անի։ Հապար տարի էլ՝ որ քո տպեզ պրբեբուցանեն էլ՝ շրինքդ ծուես, հանգնիս, տոմս մեռնիս, հապար տարի անուրի փորով գիտաս, մին էլ ա քեզ տուն չի հանչիզ մի տարը ջուր խմացնել։

Էն մարդն էլ՝ որ քո տանը հերկել, խմել, ամառով, տարով քու ագ ու հոգի վրայ ա էլել, աչքը

աչքիդ առնէլիս՝ հէնց գիտես՝ թէ գուլով խփեցին։ Կգնես ա քեզ գէմ անում, ու աչքը քամակը քցում։ Տօ փոզդ էլ ջհանդամը գնա, գու էլ, տօ գուռումատդ, ասնք՝ թէ աչքդ ա քօռացել, ինձ չես ուզում՝ որ ճանապարհս կամ առփրիդ գլաղը նշանց տաս, տօ գլխիդ քար ընկնի. ինչ կերել ես, քիթդդ գուս գայ՝ խնդրել եմ Աստուածանից՝ գահրամար ըլի, էն գինումը առաջդ գայ, աչքերդ բռնի, տօ մէկ բարով, Աստուծոյ բարին էլ ա գլխիցդ գհաթ է էլել, որ գունդդ ցցում ես, ու եդ փախչում։ Մէկ բարի լիա, բարի օր էլ ա առուր՝ է. հօ բերնիցդ քրէհ չեն ուզում, ինչ ես քարացել՝ էդ էլ հօ փոզով չի՝ այ փոզակեր հոզակեր . . . .

—Էդ ի՞նչ գիրք ա, հարցրեց ռէր հայրը, միջահասելով Արութիւնի կարդալը։

—Վէրք Հայաստանի, պատասխանեց Ավակիմը, վէրք բառին մի ցաւակցական ձայն տալով.—Դա մի շատ պատուական գիրք ա, բայց ափսոս, որ մեր ժողովրդի մէջ չի տարածվում էդպէս գրքերը։

—Թէ որ էժան ա, ես մի հատ կառնեմ, ասաց ռէր հայրը, և կարծեմ ամէն մարդ էլ կառնի . . .

—Բանն էժանութեան վրայ չի, ռէր հայր՝ մեր ժողովուրդը շատ մթնատէր ու խաւարատէր բնութիւն ունի։ Դրան թէ որ էնպէս բանես ասում, որ իրան խելքիցը բարձր ա, ինքը չի հասկանում ոչ քու լեզուն, ոչ քու միտքը, բերանիցը ջուրը գնում

ա Ճեռմ ա զարմացած մարիկ տալիս քեզ, գովում, բարձրացնում ա, թէև ոչինչ օգուտ չի տանում, բայց եթէ իրան օգուտ, հասկանալի ու խելքիցը մարիկ բան ես ասում, ծիծաղում ա վրէդ, ասում ա, ուռուց ուռուց գուս ա տուել գլխիցը, ո՞վ չի գիտում որ էդպէս ա, էդպէս հէքեաթներ, ասում ա, ես հազարը գիտեմ։ Բայց, 'ի հարկէ, երբ որ էդպէս գրքերը կը շառանան, մեր ժողովրդի աչքը կը բացուի, ճաշակը կը նրբանայ, գրաբառի պատիւը կը կորչի, էն ժամանակը էդպէս գրքերը կբառանան իրանց վայելուչ յարդ ու պատիւը։ Դրա գրողը մի ճշմարիտ ազգասէր մարդ ա էլել։ Պիտի մի հարուր տարի անց կենայ, որ էդպէս մի գրող էլի գուրս գայ մեր հայերիցը։ Ով որ մարիկ ծանօթ ա մեր ժողովրդի կեանքի հետ ու մի զարգացած խելք ու միտք ունի ու սիրող սիրտ։ Միայն նա կարող է հասկանալ, որ էդ գրքի խօսքերը հեղինակի պտի արիւնոտի ա գրուած։ Էդ հեշտ բան չի, բայց ռամիկ ժողովուրդը ծիծաղում է էն խօսքերը կարդալիս, որի հեղինակի աչքերից արտասուք են բերել ... Է՛հ, մախլասի ... Դու, Ա՛բուլֆիւն, հասանում ես էդ գիրքը։

Ա՛բուլֆիւնը ոչինչ չխօսեց, բայց այն ամենը ժբպիտը և ամօթխածութիւնը լիանկանոն շարժուածքը որ նա երևացրուց, այս աւելի մեծ պատասխանիտեղ բռնեց Օմակիմի հարցին։

—Քեզ եմ բաշխել էդ գիրքը, ասաց Օվահիմը, քանի որ երեխայ ես, էդ գիրքը քեզ համ կուրախացնի, համ կը սրամտացնի։ Բայց, երբ որ մեծ ազայ կը դառնաս, էն ժամանակն էլ ուրիշ տեսակ ուղղություն կը գործի վերաբ։

Արությունը իւր հոգու մէջ շատ և անչափ շնորհակալ էրաւ Օվահիմից, բայց բերանացի չը կարողացաւ արտայայտել իւր ներքին զգացմունքը, ըստ որում նորա գաստիարակը կամաւէրտիգ էր համարել տալ նորան այն յատկութիւնքը, որոնք հատկացվում են բառերուվ շնորհք, կրթութիւն, քաղաքավարութիւն, և կամ նա ինքը չի ունեցել գոյանից ոչ մինը . . . .

Այս միջոցին նորա մտաւ Օվահիմի կինը Սոֆիան՝ նորա յեղբից մտաւ մի ուրիշ ջահել կնիկ մարդ, մաքուր ու պարկեշտ հագնուած, քնքուշ ու գեղեցիկ գէմքով, զգուեց Արությունին մի այնպիսի ջերմ սիրով, որ հաղիւ թէ երբ և իցէ մի եղբայր վայելած կը լինի իւր քրոջից այսպիսի զգուանք։ Այո՛, անմանօթուհին Արությունի քոյրը Սուսանն էր, որոյ աչքերի արտասուները և բերանի քաղցր ժպիտը, այս բոլորին, յայտնում էին նորա ներքին ըզգացմանց անչափութիւնը։ Մի քանի բոլոր սիրեց լռութիւն, և ապա խօսեց Սուսանն և խնդրեց ամէր հօրից Արությունի մասին թոյլտուութիւն։ Տէր հայրը կատարեց նորա խնդիրքը և մի քառորդ ժամ

չանցած Արուխիխնը գուրա եկաւ Օվակիմի տանից մի ձեռքում վէրք Հայաստանին բռնեց, իսկ միւս ձեռքը իւր քուրը առած . . . .

—Օվակիմ, էդ աղջիկը ձեռից չը խլի՞ Արուխիխնից, հարցրեց տէր Հայրը, երբ որ քոյը եզբայր գուրա էլին եկել արդէն:

—Ջէ, տէրտէր ջան, ինչ ես ասում, պատասխանեց Սոփիան, դա մէ հէսաբ աղջիկ է, վուր դրուա հոգի է: Ափս

չէ Օսանէն . . . .

—Ի՞նչ ես դարդ անում, քու տղէն խա չէ՞, խրլում են, իմոզ խլեն, ասաց Օվակիմը: Լա տեղ քաղաք տեղ ա, ներան շատ չեն պահիլ: Շատ էլ որ ուզենայ Օսանէն, նրա բոխին ոմ մոտիկ կանի: Նա մի պառաւ սկէսուր ունի, որ, Ասուած ազատի, գեանջրցի ա, քաղքրցի դառած, որ մի բանի վրայ խօսում ա, էլ օխտը տարի սուս չի անում: Լաւ ա, որ քաղքրցի չի նրա հարսը: Բա ո՞նց պիտի անէր որ լսէր, իմէ դքու աչքն էլ առաբի, կէսուրը մնդա չէ՞: Թոզնեք էս: Նա տէղրաներ էլ ունի, որ մադը մաղեցը ջոհում են: Մինն իմ աշկերան էր, հիմի ուսաայ ա գառել, էլ մարդի չի հաւան կենում: Շարուր իմ ուսմանեներով ա խօսում, չես գիդա ինչ գաղափարներ ա անում, բայց որ աչքին խփես, ձեռիցը չոփ չի վէր գցիլ. էնքան գայիմ քար ա . . . Ջէ, տէր Հայր, նա գեղի տղայ ա, կերած խմած սոմոր, քաղքաւմը ներան ոմ էնքան հաց կը տայ, որ նրա աչքը կշտանայ . . . .

—Ի՞նչ է ասում, քա՛. մաշ ինչկի հիմի ո՞վ է պահի նրան, նա . . .

—Ինչկի հիմի ո՞վ է պահի նրան—կրկնեց Օվակիմը բռնօթին քաշելով և կարծես թէ բարկութիւնից հանդարտուելով—Պահիլ էլ կայ, պահիլ էլ։ Մարդ իրա էրեխեն խօ չի դէն գցիլ։ Իրանց գեղումը մի էրկու այր բեն էին սորվացրել, էլ ուրիշ բան չը գիտէին, թէ դէ դէդ ա սոփրել ես, բաւական ա։ Մի օր տաւարն էին ուղարկում, միւս օր հորթեր, մէկ էլ օր գութան։ Լապէսութենով նա էլածն էլ մարդը կը գցէր, թէ որ, ծնդատին, տէրտէրը հասած չըլնէր։ Էս ա շորս տարի՝ ա տէրտէրի մնան ա, գեռ նրա հէրը մի թաբաղա թուղթ չի տալ դրա համար։—

—Վ՞ոյ, նրա դէդի աչքերը քօռնայ, մաշ էլ ինչ կնիկ է էլի . . . .

—Դէդի ձեռին ի՞նչ կայ, ա կնիկ, նրանք Ղարաբաղցի մարդիք են, կնիկը նրանց համար գրօշ չաժի, կարող ա՝, որ մի աւելի խօսք խօսի, գու խօ չես, որ պօշիկ քիթալի պէս, ամեն բանի մէջ ընկնես։ Նա մի Էնդէս ժրագրուխ կնիկ ա, որ նրա հետը մի կնիկ չես գտնիլ էս քաղքումը։ Նա ա, որ դիմանում ա էն տանը, նրա տեղ որ գու ըլես, էրեսիդ եմ ասում, կէս օր չես դիմանալ. ինչկի Հնդատան մին կը փախչես, ասաց Օվակիմը և բարկանալով և ծիծաղելով, և ապա գաւազանով դէպի տէր Հայրը շարունակեց խօսքի թելը.

—Ց՛էր հայը, զարմացք բան ա, ես գեռ իմ օրումը էդպէս ինիկ չեմ անում։ Մանդը էրեխանց ամէր, ախչիկանց էրած, հիմի արի ներանց շորերը կարի, կարկատի, լուա, թափ տու, հագցրու, տունը սրփի, տեղերը գցի, հաւաքի, օրը էրկու թոռան հաց թխի, կուժն ուսիդ գի, բորիկ ասով, գնա հեռու գետից օրը օրանում թ անգամ ջուր բի, կերակուրն էփի, մշակներին կերակրի, զոռաղներին հաց տու, էրեխանց գլխները շարաթը մի անգամ, էրկու անգամ լուա, մարդի տրեխներն հանի, ոտները լուա, ձեռի, մէջքը քսի։ Էլ որ մինն ասեմ . . . հիմի արի աղջկերանց համար բաժինք արա, խալիչա, կարպետ, խուրջին, մանրատաշ, ապաքանակ, մէ զար, ջնջիմ, գաջարի գործի, տաւարածի ու աղերանց համար հորագործ շալ ու շարվար արա, մարդի համար տափագործ, ներկի, կարի, հագցրու . . . Ո՞ր մինն ասեմ . . . Հիմի արի ձիձու պահի, արբեշում քաշի, աղջկերանց ու իրա համար արբեշումէ գերիացու գործի, արդերանց համար, շապկացու ու գոտկացու։ Ի՞նչ եմ ասում, հազար ու մին բան ա անում, ես ո՞ր մինն ասեմ։ Հա, հիմի արի կովերը կթի, հորթերը կապտի, գնա արա, օրը մէկ էրկու խնոցի հարի, եղը հանի, հիմի կալ-կուտի ժամանակ ա, գնա արեգակի տակին էրեխեն ձեռիդ կանգնի, կամը քշի, եղի, հաշան արա, քամերուն ծգտի, շատարարի, շուանները ածա, ուղում համար խախանի, թէ որ պիտի ծա-

խանդ, սենեկին, քարերը ջնկին։ Հիմի բաղաքացի մա-
մանակ ա, գնա բաղը քանդի, կժերով գինին տուն
կրի . . . Ինչ, ինչ եմ ասում։ խելի ոչ կը հասնի,
ոչ քուֆահ կրի, որ մի շաբաթ օր ու գշեր ա-
սեմ, թե ինչեր ա անում։ Գանձի անգամ ես դրանց
ասելը պատահել եմ շաբաթներով, ամիսներով կա-
ցել եմ, մի օր չերթա, որ ես դրան սենեկի հանդարա
դասած։ Գնդի մեկ էլ կնանիքն էլ դեղրի թաղիցն
սկսած ընչկի վերի թաղը, խանգմին չեն գնիցանում։
Որն ասում ա, մի ամբի միթանաս ձևի, որն ա-
սում ա, մի ամբի ձեձիմա հինի, որն ասում ա,
ասաս մրձրձանել ա, մի ամբի շիտակի . . . Դա էլ
ոչոմի չէ չի ասում։ Որ մի արարգ կնիկ բրեր, կասե-
ինք, Ինչ, ինքն էլ չի իմանում թե ինչ միձակի միջի
ա, բայց չէ, ես բու գիտեմ դրանց։ Դա ՏԷր Ասանի
թոռն ա։—Հեղինեկ կուսի քուր ազգիկը։ Լուսա-
հոգի Հեղինէն մի աշխարք մնաց եկած՝ գիտուն կուս
էր։ Գիր-գրհանին դա ա մեծացրել։ Գորգ ա գիր
չը ասիցրեց, որ ինչ ա կուս չը գտնոց էն սի-
բուն շարմաղ ազգիկը, բայց անգիր ասածներ էր
ասիցնում, կարել, ձևել, գործել, որ Հեղինէն բու
գիտեր։ Դրա կարոմի սրերի պատկերները որ մարդ
անենի, կը ձեռց զարմացած, հարա . . . .

—Գնիթազմա . . . բաղաքանչեց Սոֆիան։—Աշ
էր թաուր ազգիկը ինչի՞ էն մարդին էին ասել,
վար չէ սիրում դրան . . . .

—Դիտ խաս չ�՞ս, ա՜ հնիկ, էն փոխուն սիմ գիտէր, թէ վերջումը ինչէր կըլլու . . . Աւետիքը ջահել ժամանակը մի էնպէս ոգով էր, որ աշխարքը ճանաչել էր գարմացած . . . Եա գիտս մի ամսանուն եմ էլել, որ իմ մէջը փոխանակուել ու դարս մէջն ա ինձ ձիւն տուել, պահել, ոգորմի՛ իրեն, լուսահոգին մի բոյով, բուսաթով կնիկ էր։ Ցզամարդիկ յիս չէր մընալ, էնպէս գառով էր։ Արը որ բոպի փոխաս խոսք էր բաց բլուտ, ասում էր. ինձ քիչ ես ձիւն տուել, ինչի ես էլ Աւետիքն նման գառով չեմ։ Ասում էր. ես միշտ մի ձիւն քու բերանումն էլ գնում։ Մէկէլը Աւետիքն, բայց նա շատ նոխանանան երեխայ էր, միշտ էրեսը չանգռում էր, չէր իմանում, որ հարսը ձիւն ուտես, գու էլ, ասում ա, մի գգաղուած՝ ձմռանը գաղ էիր, որ մի լաց էիր բլում էլ ասս չէիր կենում . . . Ես նրանց ասեն եմ մեծացել միչև վեց տարեկան դառնալու։ Յետոյ հէրս եկաւ Աւետիքն էլ ինձ հետ բերաւ քաղաքը, ցէր Յհանէս մնաս աշկերտ տուաս, որ գիր սովորենք։ Խեղճ հէրրս ուզեց, որ վանից որ նրանք ինձ բաւուխիս են արել, ինչն էլ Աւետիքն անէ, ուսում տայ, մարդ շինի, բայց Աւետիքը հէնց պատկուց էր գիտ։ Դասը չէր սովորում։ Ինձ շատ սիրում էր, ասում էր գու քաս սովորի, յետոյ ինձ կը սորվացնես։ Էսպէս մի էրկու տարի անց կացաս, ոչինչ չը սովորեց։ Գրի վրայ խակի հանէս չանէր, ելը որ մի քիւրը, մի քիւանը, մի քաս

ձի էր տեսնում, սիրտը թռթռում էր։ Մեր վարժապետ Տէր Օհանն էլ մի աշակերտի դահիճ մարդ էր։ Մի օր փաթախկա զցեց Աւետիքի ոտները. Աւետիքը քիչ մնաց թռէ կատաղի, փոյթ ընկաւ տէրտէրի մէջքիցը էնպէս քաշեց, որ տէրտէրի աչքերիցը արտասուք էկաւ։ Տէրտէրի բարկութիւնը էկաւ, թէ էս լաւ նշան չի . . . Մի լաւ ծեծեց, յետոյ դուս արաւ։ Դա էլ մի անփախ, ռներկիւղ երեխայ էր, մի դշեր վեր էր կացել մեր տանիցը փախել գնացել գեղը։ Էն գնալն էր, որ գնաց, էլ յետ չեկաւ . . . Ղորդ ա գեղումը մեծացաւ, բայց մի էնպէս զոչապոչայ դուս էկաւ, որ գեղացիք դիմի էլ նրա արեւոմն էին օրթում ուտում։ Մի տեղ ունէր նա ջահել վախտը, որ կատենայիր սուրաթ լցի։ Ուրիշ գեղ գընացած վախտն էլ իրարու մատով էին նշանց տալի։ Մի խաստրով մի գեղ էր, մի Աւետիք։ Հասան խանի տարին Շուլավերդի Սօսի աղի հետ էն զոչապուխիւնները էր անում, որ ով չէր նրան աղջիկ տալ։ Սրբ որ քուրդ ու դղրլաշ չասիմիշ արին Ռասուլանայ նեմեցներին, նրա չորս կողմի գեղերի խալխն էլ դիմումանքը փախել էին գաել Դաղէմի տակի խրթանմը։ Մեր Աւետիքն էլ իրա ընկերներովը հաց էր բերում, բան էր բերում նրանց համար։ Հարս ու աղջիկ, ծեր ու պառաւ ամէնքն էլ Փրկչի տեղ էին գնում նրան, սիրում, պաշտում։ Դա էլ քանը հինգ տարեկան վառուած, կատաղած տղայ, մի օր Խրա-

մուտքը տեսել էր Գիւլզարհանին մի քանի աղջկայ հետ մանգալիս, քիչ էր մնացել, թէ ձիուցը վէր բնկնի: Եվ չէր հարցրել, թէ ո՞ւմ աղջիկ ես, ո՞վ ես, ո՞վ չես, կամ նշնուած ես, թէ չէ: Ով ուզում էր ըլէր, ո՞վ չէր նրան աղջիկ տալ. նշանած էլ որ ըլէր, մի գիւլա էր նշանածի ջանը, թէ որ իրա կամքով ձեռք չէր վերցնիլ: Ժամանակը էնպէս էր, որ շունը տիրոջը չէր ճանաչում: Մէրը մեռել էր, մնացել էր հէրը, որ մի ժամանակ Ղարաբաղի խաներին զարի զարի էր բերել, հիմի ծերացել էր տան մեծութիւնը տուել էր իրա մին ու ճար տղին: Գեղջիք դիմի էլ փախել էին գառել ձորերը, խրամները, նա մենակ թուանքը ձեռին բռնած, գեղի վրայ զարաւում էր քաշում: Ասա՛ որ մի հարուր քուրդ ու զգլխաշ գուս գան կշտիցդ, դու մենակ ինչ պտիս անիլ, ա՛ պատաւ . . . Հա՛, էն էի ասում: Աւետիքը Գիւլզարհանին տեսնում ա թէ չէ, ձիուցը վէր ա գալի, աղջկայ ձեռիցը գայիմ բռնում: Դրա կշտի աղջիկները փախչում են, որ գնան խաղիին իմաց տան: Գիւլզարհանն էլ մի քիչ հառբա, զօրբա ա անում, ամանչում ա, թէ խօսի, կամ ծիկայ տայ, բայց գըժուած Աւետիքը չի թողնում: „Ես, ասում ա, ընկնց գուզդուն չեմ, որ ձեռքս ընկած ճուտը թող տամ: Ես, ասում ա, քեզ սիրում եմ, անուշդ ինձ տուա: Ես, ասում ա, քեզ պիտի ուզեմ: Աղջիկը աչքերը գետնին ա գցում, սուս անում: Դէս, դէն, գեղջիք

հասնում են, որ ձեռքիցը խլեն, հէնց իմանում են, թէ ուզում ա փախցնի: Աւետիքը, որ նրանց տես-նում ա ամանչում ա, ձին նստում ա, հեռանում: կարմրատակած Գիւլ-Զըհանին տանում են իրանց թօրունը, նրա ախպէրքը ասլանի նման ազէք էին, մինը քան զմիւսը զօշապ, որ տեսնում են Գիւլ-Զը-հանին, կատաղում են, ուզում են որ հասնին Աւետ-քին գիւլախորով անեն, բայց մէրն ու կուսը, որ Աւետքի վրայ վաղուց աչք ունէին, հարցնում են Գիւլ-Զըհանին, թէ հաւանում ես էն աղին: Աղ-ջիկը կարմրում ա, գետնին ա մտիկ տալիս ու սուս անում: Ցնանում են, որ հաւանել ա, էլ չեն թող-նում, որ մի վատ բան ըլի: Վերջապէս Աւետիքն էլ իմանում ա, թէ նա ո՞վ ա, ո՞վ չի, սկսում ա իրա մէջ փքուիլ, որ էնպէս լաւ աչք ա ունեցել: Նա, ա-սում ա, նրան վաղուց եմ տեսել էրազումս: Նա, ա-սում ա, նրան գետնի տակին էի մտնում զալի, նա ինձ երևին պատահեց: Նա, ասում ա, իմ զամանէն ա: Կրակ կը տամ, ասում ա, աշխարքս կերեմ, չեմ թող-նիլ, որ նա ուրիշի ձեռք ընկնի: Նա ինձ սիրում ա, Ես գիտեմ որ նա ինձ սիրում ա: Էսպէս մի քիչ տնին ա տալիս Աւետիքը ու հէնց էն օրը մինից մի մա-տանի ա առնում տալիս մի պատուի, թէ տար նը-շանն տուր, թէ որ չեն վեր առնել նշանը, հարցրու, պատճառն իմացիր ու ասի ինձ ասա: Նշանը սիրով ընդունում են մէրն էլ, ախպէրքն էլ, բայց ՝ բիձա

Արզումանը, որ իրանց տան մեծն էր, ջիգրը գալիս ա, որ իրան մարդի տեղ չեն դրել, չեն գնացել մի քանի ազատակալու մարդիք իրանից խնդրել, թէ „Ուզում ենք քու օջաղիցը մի բուռը մոխիր վերցնենք“, բայց սուս ա անում, ոչինչ չի խօսում։ Յետոյ, երբ որ ժամանակը հանդարտում ա, գիւղացիքն էլ քաշվում են իրանց գեղերը, տները. հարստանիքների վախտը, որ գալիս ա, ճանապարհը իրիկունը մեր Աւետիքը ոչխար, բան ա առնում ուզարկում, վերջը ինքն էլ գնում ա, որ տեսնի ինչ պիտի առնի, ինչ պիտի տայ։ Հացը որ ուտում են պրծնում, „դէ, ասեցէք, ասում ա, ինչ պիտի տամ։ Ախպէրքն ասում են, „Մենք քեզանից ոչինչ չենք ուզում։ Ասուծու տուածիցը մենք ամեն բան էլ ունենք, կիսին չենք արժանի, մենք մեր քուրը չենք ծախիլ։ Մենք էլ, էհ . . . Որքան կարող ենք, մեր քուրը չենք զրկիլ . . . Բայց բիձա Արզումանը, որ ջանում էր գնում Աւետքի արածը, աչքերը մէկ էնպէս օրորում ա իրա ախպօր աղերանց վրայ, որ նրանք, քիչ ա ճեում, թէ պատերիցը կրպչին։ „Դուք ո՞ւմ շունն էք, ասում ա, ինչ իշխանութիւն ունիք, որ մէջ էք ընկնում։ Ո՞ւմ աշխատանքիցը պիտի ձեր քուր համար բաժին անէք“, ու էնպէս շատ բաներ։ Բոլորն էլ ճեում են յուր ումունջ նստած։ Աւետիքը չի ուզում երևացնի, որ իր սրտին գիւլլի պէս դիպան նրա խօսքերը, սառը սառը

հարցնում ա, «Դէ դու ասա, ասում ա, թէ՝ ոլորտ ասամ»։ Արգումանը ակրոդորմէն հանում ա ջրիցը ու միրուքը ամրացնելով ասում է՝—«Մի լաւ սաղ մրասցու, շաղ ու գրոբը կով, մի լաւ ոչխար էլ հնարը։ (Ասում ա ու ակրոդորմէն էլ գարդակ շրրրխկացնում, մինամ թէ հնար ա անում։) Հարուր թուղթի շուրջը լաւ գինի։ (Իրանց գինուն էլ չի հաւանում որ թեչա Ալեքսիրը նոր փողով առնի։) Հարանախագր համար մի լաւ մահուդ չուխայ։ քսանը հինգ մանէթանոց։ Հարանամար համար մի լաւ քաթիրայ, իրիք թուաշանուց։ Ջանանիկու ջուխտ գնանջու ատրի քոշեր, բարեկամ գնանը քանց համար, հինգ թուման էլ սրպատակ արծաթ։ Մէկ էլ ինձ համար մի շիրմայի մրրի սանդր կառնես, ու կը գաս ձեռս կը պաչես, կասես մեղայ Աստու, ես էլ ձեզ կօրհնեմ, կերթամ ձեր մուրազին կը հասնիք։

«Բուրքն անիծած ա, խոսքն օրինակ։ Ասում ա դանգզին մարդի շատ գա էրգի, իմ գա վուրգի շատնա ատրի . . .» Ալեքսիրը գլուով բերնին հուշ ա տալիս, մինչև որ Արգումանը պրծնում ա իրա հնարը։ Բայց որ մեղայ Աստուն էլ վերջիցը աւելացնում ա, Ալեքսի աչքերը ոլորով լցնում ա։ Դրակիման վեր ա թռչում տեղից ու աջու ձեռով խանչալի գասաին էնպէս շրրրխկացնում ա, որ էրեխէքն ու հարսները վնասասին գցած՝ ասեն պուճախներն են պրծնում...

«Դու ամ ես, ասում ա, որ ես քեզ մեղայ Ա՛ստու

ասեմ, ես իսկի ակրաէրին չեմ ասում։ Ես իմ հոր տղին եմ, ասում ա, դիտես, թէ չէ։ Քու պէս մարդու գլուխն, ասում ա, ինձ համար մի ոսկ չարժի. դուն գոգանեան գիւն բարեանը մանրամ գրը, ես ինձ համար թէկզ ազջիկ կը գտնեմ։ Թող, ով որ ձեր ազջիկն ուզում ա, մի յդան գուս գայ, որ գեռ իրա մոր փորիցը չի էլել . . . Էս ասում ա Աւետիքն ու կատազած գուս ընկնում, ասես գուսն էլ մի Ենգէս շըրթեցնում ա, որ գուսը կրունկատհան ա լըում, վէր ընկնում։ Դրսումը շները վրայ են թափում, որ մի լաւ քրձրձեն, գգազուած Աւետիքը, որ մինում բանչարը ազամազամ անում, ասանի պէս կոծոտոցներն ձեռում են վէր ընկած՝ բոլորներն բաց ու հուփ ասելիս։ Դա էս չի տեսնում, ջգրուած հանում ա ասուն, տախտի վրայ պառկում։ Պառաւ հէրն էլ տեսնում ա, ու լաւ էլ իմանում ա բանի միտքը, բայց ոչինչ չի խօսում։ Դնում ա գոռով հանում ա շորերը ու եարգանը վրէն քցում, որ չը մրսի . . . .

„Արգումանը, որ իրա ամեն մի կոծոտոցին մի սուրբ ոչխարով չէր փոխիլ, որ տեսնում ա կորրատած՝ վէր ուծած, աչունը գլուխն ա խփում։ Էն սհաթին հրամայում ա իրանց թեուրը ներսարներին, (որ քանիրդ շուն շատ էին, քանիրդ գէլ ուվարէս), որ ձիաները թեամքեն։ „Ես, ասում ա, էս ազջիկը կը տանեմ շորագնալու թոռոմներումը մարդի կը տամ, էգ գազան մարդատպանին ոչինչ չեմ տալ։ Ցան մեծն

բերն էր, ով կը համարձակէր նրա ձեռքիցը բռնել։ Աստը ու ամենը մին ա անում։ Դրանք ճամփա են ընկնում թէ չէ, նշան գնոց պառաւ կնիկը, որ բնակ նստած՝ ամեն բան էլ տեսնում ա, փաղում ա Աստծուն իմաց ա տալիս։ «Քու տունը քանդուի, ասում ա, վեր կաց, նշանածդ փախցրին»։ Էս որ լսում ա քնահարամախ Աստուծը, փափախն էլ ա մոռանում, տրեխներն էլ. գնում ա ընկնում գժուածի նման, շապկանց, ոտ ու գլուխը բաց, էն ցուրտ, դրեամախ կէս գիշերին, վազում ա, մի քանի տան հերթից իմաց ա տալիս իր ընկեր ազերանցը. «Հասէք, ասում ա, նշանածս ձեռիցս խլում են»։ Ընչկրի նրանք վեր կը կենային, թուանքի ազգութուն, բանին մարդ կանէին, մեր Աստուծը վազում ա, իր ձին գոմիցը գուս ա քաշում, հէնց վանց որ ինքը ակլոր ա լսում, ձիուն էլ ակլոր նստում ա ու գուս թռչում գեղամիջովը։ Թռած տեղը ձեռքը գցում ա մի չափարի միջից մի մեծ բրհիր ա հանում, որ նրանց հանելն ու մեկ էրկու թուրը նոքարի խրփելը մին ա անում։ Հէնց որ նրանք վէրն ընկնում կիսամահ, փոց օրդում են կանչում, մեկէնները ահուց ձիանելիցը վեր են թռչում, ցարուսումը թոռ կենում։ Մէկէլ որ բրհիրը ուզում ա վեր բերի Արզումանի գլխին, Գիւլ Զըհանը, որ իրա բիձու թոռրին նստած ա լսում, թռչում ա, Աստաբի շինրովը կախ ընկնում։ «Թէ մատանց, ասում ա, ուրուն մի անիլ»։

Աւետիքն էլ բարձրացնում է գիւլ-ձրհանին գնում իրա քարքին յետ գառնում։ Հէնց որ յետ է գառնում, նոր իրա ընկերները, որը ձիով, որը ոտով, եարաղով, բանով, ապանեներու նման մէրուքը դուս են քաշում, „Հայ ո՞ր տեղ է, Հայ, ո՞ւր է“, կանչում են։ Բայց Աւետիքը էլ չի քաշում, որ նրանք Արզումանին դիպչեն, ասում է, որ էն քարերին էլ վերցնեն, տանեն, որ մի ճեռաս չըլի։ Նրանք էլ, որը չուխէն է ասիս Աւետքին, որ չը մրսի, որն իրա փոփոխան է գնում նրա դիմին, որն էլ քաշում է Արզումանի մերին, որ յետոյ շատ բէյդանաղ էր էլել Աւետիքը, քէ ինչի էդպէս նամարդուքիւն են արել, բայց մէկ էլ տեսել էր, որ քարոզը ինքն է ամանչում իրա արարմանքիցը, Աւետիքն սկսել էր սիրտը շահել, քէ „ճեռաս չունի, էդ էլ նրա համար շիրմայի տանդրի տեղ կը բռնի, որ ինձանից մի մեղայ Աստուի հետ ուզում էր“։ Մի շաբաթ էր, գիտի սրա վրայ էին խօսում, յետոյ շուտ արին պատկեցին, որ գեղջիկը մի քիչ հանդարտուին . . . Ա՛յ, ինչպէս է ուզել նա էդ ապջիկը, ա՛ կնիկ, հիմի իմացար...

—Վո՞ւմ, քա՛ . . . Բացագանչեց Սոփիան—ինչիր ին անում էլի էդ գիղջիկը . . . Աչ գուն ասում խ, նրանք Ղարաբաղցիք ին, կնիկը նրանց համա գրոշ չաժէ՞ . . . Լաւ կի գաւ գարարէք ին էլի ասրում կընիկայ համա, ա՛ւ . . .

—Քեզ դժար ա, ա՛ կնիկ, բան հասկացնելը, անմեզ տեղը սրտիս ցաւերը նորոգում ես, բայց դու կը հասկանաս իմ միտքը, ինչքան էլ որ պարզ ասեմ... Ի հարկէ գրօշ չաժի։ Ամէն օր խօ ջահիլ չի մնում մարդ։ Պատկուեց թէ չէ, իրա պառաւ հէրը նոր սկըսեց քարոզել դառնալ նրա գլխին, որ մինչև էն ժամանակը ոչինչ չէր խօսում։ Ասում ա, «Ո՛րդի, ինչ որ ես արել եմ, դու ոչ կարաս անի, ոչ էլ կարաս մտքովդ անց կացնի։ Դու ասում ա, շատ զօրաղ ես, բայց դու քու զօրաղութիւնդ զօրաղութեան համար ես գործ դնում, ոչ մի նպատակ չունես և չես էլ կարող ունենալ։ Ես շատ զօրաղ էի և լաւ նպատակ էլ ունէի, բայց տեսնում ես, ասում ա, ինչ եմ աւելացրել։ Ես կարող եմ, ասում ա, քեզ սորվացնել ամէն բան ու յայտնել քեզ իմ միտքը, իմ մուրազը, որ ինաց փորում ես, բայց 'ի զուր տեղը քեզ կը դժուացնեմ, դու ոչինչ չես կարող անել։ Մի ձեռը ծափ չի տալ . . . Չէ, ո՛րդի, ասում ա, էդ զօրաղութիւն չի, որ դու անում ես։ Էդ ա կնկայ տէր ես դառել, էդուց էլօր էլ որդոց տէր կը դառնաս, նրանց պահել, պահպանել ա հարկաւոր։ Բանդ շինի, ասում ա, նօքար բռնի, ասաւարդ աւելցրու, մարդի մէջ մտի, մարդաւարութիւն սովորի, զօնաղ սիրի, խնդճի օգնի։ Թէ որ ուզում ես անում ունենաս, հացով կաց, հացի ձէնը հնդստան կը հասնի։ Դամ գնա, ազօթք արա, հաղորդուիր . . . .

„Ինչ պատաւ մարդը, ՏԷր Հայր, չեմ գիտա թե՞չ՝ համար, միշտ նիհեղեցու դրսումն էր կաղնում, ժամ իսկի չէր մնում։ Միայն տարին մի անգամ կը մըտնէր ժամ, որ Հաղորդուի, Ճնացած ժամանակը ժամի դրսումը մի փարշնի ծառ կար, միշտ նրա տակին էր կաղնում, մեռնելու ժամանակին էլ կուտակ արաւ՝ որ իրան էն ծառի տակին թաղեն։ Դա կարդալ էլ գիտէր, Հայոց Պատմութիւնից լաւ տեղեկութիւն ունէր, որ ես Ճնացել էի զարմացած, բան որում աշխարհական մարդ, կարդալ գիտէր, էն էլ ոչ թէ այսմաւուրք ու ժողովածի, այլ Հայոց պատմութիւն, Խորենացի, Եղիշէ ... Բայց գիր գրել չէր իմանում, մանչասի նա մի խորհրդաւոր մարդ էր, ես չը կարողացայ մի բան իմանալ իրա բերնիցը, ոչոմի ոչինչ չէր ասում։ Իսկի ոչով չէր էլ խօսացնում, նա միշտ խաչիցը դրաղ էր մեն դալիս։ Բաղի վախտ նրա հայ մարդիքը շատ բաներ էին պատմում նրանից, էնպէս որ ըսելիս մարդու մազեր դիք դիք էին կաղնում։ Դա մեր վարդապետներին աչքով աչք չունէր տեսնելու, ասում էր մեր ազգի տունը սրանց ձեռին ա, բայց չեն շինում, քանդում են ... մանչասի Աստուած ողորմի հոգուն, իդիմի մարդ էր .... Հա՛, ես ինչոր ասելու էի, թամամ չասեցի։ Մեր Աւետիքը պատիւնց թէչէ, էն սէրի տաք տաք վախտը Գիւլջըհանը սկսեց նրան քարոզել, հաւատի բերիլ։ Ինչ որ աղօթք գիտէր դիմ էլ սորվացրեց։ Սկսեց պատ-

մել ձգնաւորներից, կուսերից, մէկ խօսքով ամէն բան։ Ինչ որ լսել էր իրա մօրաքրից։ Աւետիքն էլ, որ քանի ազատ էր, ամիսներով, տարիներով տունը չէր կենում, մէկ լսում էր, թէ Երևան ա, մէկ թէ Զարարատ ա, մէկ էլ թէ Քարթլ ա, որտեղ մի գոչատ մարդի անում էր լսում, նա նրա կշտին հազիր էր լսում։ Խալխիցը որ լսում էր, թէ իրա հէրը պապը շատ ուաշիդ ադամարդիք են էլել, խանների, շահերին գլուխ չեն ելել վէր բերելիս, նա գժվում էր չոլերն ընկնում, որ գոչատութիւնումը նրանցից անց կենայ, որ չասեն, թէ «գու քու հօր ադէն չես», բայց պատկուց թէ չէ, էլ տանիցը դուս չեկաւ, թէ «իդիթն մալի գեօղն գաբաղընդա գնարաք»։ Շատ տեղեր էր ման եկել, քիչ շատ քաղաքավարութիւն էր սովորել, հայերէն, վրացերէն ու թուրքերէն լաւ խտակ ու ճարտար խօսում էր, ռուսերէն էլ կոտրտում էր։ Մարդամէջ ընկաւ, մարդիքն սկսեցին պատուել, պաշտել, նա էլ տեսաւ, որ ոչով իրա չափ խելք ու քնամալ չունի, սկսեց նրանց գլխին փիլիսոփա դառնալ։ Ժամ գնաց, հաղորդուեց, լուսահոգի Տէր Վարթանը սկսեց Այսմաւուրքից, Ժողովածուից նրա գլուխը քարել, խղճմտանքը անհանգստացնել, մեղքերը շնչին դարսել, մի խօսքով էն առիւծի նման ադին շինեց մի գառը։ Նա, որ մի ժամանակ ոչ հաւատ ունէր, ոչ յոյս, լաւ որում նրա հաւատն ու յոյսը իրա թուրն ու թուանքն

էր, հիմի, ոնց որ ասում են, «օխտը վարդապետի զաղամ բան գիտայ։ Հիմի որ հազար թուման տար, նա ոչ պար կը գայ, թէ ինչ ա պար գալով Ցհանէս մկրտչի գլուխը կորել են տուել, ոչ մարդի հետ պռոշտի կանի, ոչ իրա էրեխին կը պաչի, թէ ինչ ա պաչելով Յուդան Քրիստոսին մատնել ա, մարթ անելը խոշ նրան հազար ու մին նզովքներով ու ապաշխարանքներով արդելած ա։ Պղնձէ քաղաքի պատմութիւնը, եօթնեմատատարաց գիրքը նա քեզ անգիր կասի։ Մի մարդ, որ էսպէս տուտուց բաների գերի գառնայ, նրանից էլ ինչ սէր, ինչ խելօքութիւն պէտք է պահանջել։ Նա հիմի շատ մեծ արժանաւորութիւն ունի մեր վարդապետների համար, բայց ինձ համար նա հիմի մեռած ա։ Էս մի ժամանակ նրան շատ սիրում էի, բայց հիմի թէ նա ինձ համար թէ մի ջհուդ, որ Թալմուդին հաւատում ա, Աստուածաշնչին չէ . . . Էս հիմի հասատա գիտեմ, որ եթէ Արութիւնը մի քանի ամիս Ճնայ էստեղ մի օրինաւոր վարժապետ մնա. այնուհետև նա կը փչացուի խաբար կըլի, ոչ մի բանի պէտք չի գայ, բան որում նա չի իմանում գնա թէ ինչ ա ինքը և ինչ պէտք է գառնայ, բայց յետոյ կիմանայ։ Հէնց որ իմացաւ, այնուհետև նրա բանը բուրթ ա։ Էս եթէ կարողութիւն ունենայի, վեր կառնէի իմ մտա կը պահէի . . . Բայց . . .

—Օ՛վակիմ, զարդ ա գու ասում ես, բայց իմ խելքը բան չի կըարում քու խօսքերիցը։ Դու մեր Աստուքին Ջլեզդան յիմարացնում ես։ Ես գես նրա նման խելօք մարդ չեմ տեսել։ Եթէ նրան հասկացնես բանի գօրութիւնը, մի՞թէ նա իրա կարողութիւնն ու գեորա չի օգնիլ, որ իրա որդին էս տեղ օրինաւոր ուսում առարի . . . .

—Դու էգպէս ես ասում, տէր Հայր, բայց իմ կարծիքով Աստուքը, որ մի բոլորովին անգէտ մարդ լինէր, աւելի հեշտ կարելի էր օգնութիւն յուսալ քան թէ հիմի, որ, քու կարծիքով խելօք է։ Նրա մտքով ուսում տալ՝ կը նշանակէ կամ էնքան, որ կարենայ գրիլ իրա ասածն ու տուածը, կամ էնքան, որ կարենայ թաղել ու կնքել։ Էդ խելք ա՞։ Թէ որ կըսկսես հուջաթ անիլ օրինակներ բերել լուսաւորուած ազգերի կեանքից, նա չի անիաջ գնել, կասի դասը իմ թան հասամզադա դրրա՞, ինչ որ իմ պապերս արել են, ես էլ էն կանեմ։ Եթէ կսկսես Աստուածաշունչից վկայութիւններ բերես նրան համոզելու համար, նա որ անգիր ըլէր, իսկոյն կը համոզուէր, բայց որովհետև խելօք է, նա էդ մի և նոյն գրքերիցը աւելի շատ վկայութիւններ կը բերի ու կը յամառուի իրա ասածի մէջ։ Նա կասէ Աստուածն էլ էր շատ իմաստուն, բայց կուապաշտ դառաւ, կնկանը գլուխ վէր բերաւ, գժոխք գնաց։ Մարգարէքը, առաքեալները, ճգնաւորները բոլորն էլ

յիմար մարդիկ էին, բայց Աստուած նրանց ընարեց, իրա հոգւոյն արբոյ շնորհքը նրանց տուաւ։ Բացի էս, նա կասի, մարդիս ճանապարհն ինչ որ գրած ա, էն կըլի, «նագրման փոգուլմազ»։ Ցնոոյ կրսկսի հազար տեսակ մասալներով հասասակել, որ որդին հօրը ոչինչ օգուտ չի կարող տալ։ ուրեմն որդուն արած բաւութիւնը կորած ա։ Գրիգոր Լուսաւորիչը, կասի, մեր հաւատի գլուխն ա, բայց չը կարաց իրա հօրը գըժոխքիցը հանել էր։ Էնքան արաւ միայն, որ գժոխքի սունը անկաջիցը հանեցին, աչքումը գրին։ Անգէտ մարդի գըլխումը էսպէս առասպելներ չը կան, և ես պարմանում եմ, որ ում գլուխ որ քացախով ու գարմանով լիքն ա, նրան խելօք են ասում . . .

Տէր Հայրը Օվակիմի խօսքերի մէջ նկատելով իրա պատկերը, բոլորովին լուեց։

—Բայց 'ի Հարկէ, ես ասենեն քեզ մեզադրում նրան, նրա նախատաշարմունքները էնքան զօրութիւն չունեին, որ կարողանային Արութիւնի առաջը փակել։ Եթէ միայն նրա սրտի մէջ կրնկնի մի ուսումնասիրութեան կայծ։ Բայց եթէ առհասարակ խօսելու լինինք գեղջցոնց վերայ, էդ ուրիշ բան է։ Պէտք է քաղաքը ուսումով լցնուի, որ լափունը տայ ածի գեղերը։ Բայց դեռ մեր քաղքացիք չեն իմանում ուսման յարգը կարևորութիւնը, գեղջցին ինչ տեղից կիմանայ։ Զօրով բան չի ըլի, ասենն բան պատմատի ու ժամանակի ա սպասում։ Պատմատն ու

ժամանակը իրարու խորին տխրէր ենք։ Շատ անգամ պարունք ա գալիս, որ ծառերի ծաղկելու ժամանակն ա, բայց շատ ծառեր չեն ծաղկում, մինչև անգամ չորանում են, բան որում նրանք մի ուրիշ սրտաճաք են ունենում։ Դիտուն մարդիկը ասին բանի սրտաճաք դիտեն, բայց մենք դիտուն մարդիկ չունենք, որ էդ զարհուրելի սրտաճաքներն երևացնեն ժողովրդին, որ տեսնեն իրանց աչքովը, աշխատեն նրա ազդեցութեան տակիցը դուս գալով, որ ծաղկելուց չը զրկուին չը չորանան։ Ցէրաէր Ջան, հասկանում ես իմ ասածը . . .

—Ինչ չեմ հասկանում, սրհնուած, դու հենց ինձ էրեխի տեղ ես դրել . . .

—Դէ որ հասկանում ես, էլ ինչ ասեմ, շատ խոսելը, ճեպացածն էլ յետոյ կասեմ, հիմի փորս վեց ոլոց ա անում։ Սնփիս Ջան, շուտ արա, տուփրէն գցի...

ԳԼՈՒԽ 2.

—

ՔՈՍԻՐ ՈՒ ԵՂԲԱՅՐ.

ԵՐԲ որ Սամանն իւր եղբօրը տարաւ իրեն մօտ, սկսաւ սրտամէջ նրան, թէ ինչեր են լինում քաղաքի մէջ, թէ քաղաքի ուսուցիչները լաւ են, սոր-

վայելում են մի քանի լեզու, թեև շատ անգամ գե-
ղեցիկ ապրում երեխեք են գալիս և բարձր ուսումնք
ստանալով, գտնում են վարժապետներ, գրագիր-
ներ, չինովնիկներ, թեև ինչպես նրանք հարուստ մար-
դոց ազգիկ են ուզում և իրանք էլ հարստանում։
Սկսում սրամիտ գանգատներ մարդոց կենաց, թեև որը
ինչպես պատուական ազգայ մարդ գտնում, որ այժմ
էլ ոչոմի չի հաւանում։ Այսպես, երբ որ ասերբիք
գնացել էին իրանց գործին՝ քոյր ու եղբայր առանձ-
նացած՝ միասին վճռում էին այն հարցը, թեև ինչ-
պես լաւ կը լիներ Արուեթիանի համար—ճնշել քա-
զարումը, թեև յետ գտնալ էլի գեղի գիւղ։—

—Լսիր կանես, որ գեղը չը գնաս, ասաց Գառնան,
տրա ընտանեդ ինչ սիրաբ սոմորեաս։ Էդ ակրաբին ինքն
ինչ գիտե, թեև քեզ ինչ սորվացնել։

—Էդ մի՛ ասիր, — ասաց Արուեթիանը, մեծ հա-
մարում կարծիք ունենալով իւր ակրաբի վերայ—դրա
պես ակրաբը էս քաղքում չի լրի, դա անչյալա փի-
լիսոփայ ա, Կարեոգրեկոսը որ գիտենայ, դրան Կպիս-
կոպոսի խաչ կը տայ . . . .

—Ինչ ես ասում ոբդի, դու գեռ երեխայ ես...
Էս քաղքումն էնպես ակրաբներ կան, որ դա ինչ
ա նրանց կշռին։ Դա Օմահիմի մոր քրոջ ազգն ա,
ես դրան չեմ ճանաչում։ Մի օր խոսք բացուեցաւ
քու վրայ, ես հարցրի Օմահիմին, նա թեև ինձ ասաց
որ բարեսիրտ մարդ ա, բայց գլխում խելք չը կայ,

ոչինչ գիտութիւն ստացած չի . . . Հարա՞ . . . Դու հինց գիտես, թէ դա ա, որ կայ, էլ գրանից լաւը չը կայ աշխարքում: Ըստեղ Գիմնազիումը էնպէս բաներ են սորվացնում, որ դա իրա օրումը լսած չի ըլի: Մեր Հարևանի տղէն հիմի գնա գիմնազիի վրայ իրեք կլասումն ա, բայց նրա մէջն էնպէս բաներ ա ասում նրանից, որ մարդ լսի, կը մնայ զարմացած:

—Ի՞նչ ա ասում:

—Ասում ա, իմ տղէն հիմի գիտէ, թէ էստղանց ինչկիկն Մոսկով տրոյկի տակը քանի ջէր պրատուտ կը գայ: Նա, ասում ա, գիտէ, թէ Աղամից ընչկի հիմի քանի միլիոն ա անց կացել: Ա՛յ, մենք ասում ենք արևդակը պատուտ ա գալիս, նա ասում ա, դէ՛, սուտ բան ա, երկիրն ա պրատուտ գալիս՝, ու էնպէս հազար ու մի բան, նա որ մենն ասում . . . Աբա քու տէրտէրն էդ գիտէ՞, քեզ ասել ա՞ . . . .

—Նա որ քաղքումը մնամ, էդ գիտի կը սովորեմ:

—Հարա՛ ի՞նչ կանես, որ չես սովորիլ: Ռուբիշները խոշ իրանց մոր փորումը չեն սովորում: Որ մրոտնես վանքի շիոլը, յեռոց լաւ տէրտէր կը դառնաս. ուզենաս գրագիր կրլես կանձխատորումը կամ թէ չէ վարժապետութիւն կանես, շիոլ բաց կանես, էրեխէք կը սորվացնես, ժամումն էլ տիրացութիւն կանես: Թէ որ խելօք կլես, մի հարուստ մարդի աղջիկը քեզ կը տայ, համ կաշխատես, որ տէրտէր դառնալուց

յեռոյ քաղքումը մեռաս մի հարուստ եկեղեցում տէրտէրութիւն անես։ Դամ թէ չէ, թէ որ կուզես, կը մտնես գնիստդիա, ընտեղ լաւ ոսկիով կը սոփորես, յետոյ թագաւորական դուլուդ կը մտնես, շինոմեիկ կը դառնաս, տարէց տարի չիներդ կը բարձրանայ, մեծ մարդ կը դառնաս, համ քեզ կըլիս շահ, համ թագաւորիս։ Հարա՞ . . . .

—Որ գնիստդիումը լաւ սոփորեմ, մօղրով էլ կը դառնամ, յեռոյ, չէ՞ . . . .

Մօղրովս ինչ ա, դու նրանից էլ մեծ կըլիս։ Ուեզդնի նաչալնիկ կը դառնաս, Պոլիցիմեասթր, եներալ գուբերնատոր . . . .

—Պա՛ պա՛ պա՛ պա՛ . . . Էդքան կը բարձրանամ։ Ո՛ւհ, ամա մեծ մարդ կըլիմ հա՛. էլ ո՞վ կարայ ինձ հետ խօսի . . . Ղորդ, հանաքը դէն կենայ, ենարալ չէ որ, որ գիտենամ, թէ մի հասարակ գիլրանդ էլ ա կը դառնամ, անպատճառ կը մտնեմ գնիստդիա։ Ա՛յ, մեր գեղրցիք լիդու չեն գիտում, օրէնք չեն գիտում, մի դարդակ եասափուլի առջև ճուռ են փափփանին վէր կալած՝ կուչուկուչ գալիս։ Քանի անգամ տեսել եմ իմ հօր մրքիցը մօղրովը քաշքըշելիս։ Դու, ասում ա լիդուդ քեզ պահի, թէ չէ սիրիր կը դարկեմ։ Էնքան բաներ եմ տեսել որ . . . ես հիմի որ մինն ասեմ . . . Սիրաս արնով լցուել ա, աչքերս պէնցին պէնցին արել . . . Ջեմ կարում մրտից գցեմ, ամեն միտս գալով էլ ջանս ասում ա,

մաղերս փշաքաղում. . . Ես հիմի Աստծուն ապաս-
չանք եմ անում, որ հոգիս չառնի, ինձ լեզու տայ
շնորք տայ, որ ես գրանց դիփունանց ջիգրը հանեմ,
յեռայ . . . Գիտես ի՞նչ կայ, Օ՛ասնա-Ջան, գու ինձ
էնպէս տեղ տուր, որ ես մի լաւ ռանվար սովորեմ:
Հայերվար ինչքան գիտեմ, կէսն էլ աւել ա: Ես որ
չինոմիկի գառնամ, որ էլ ոչով չը կարենայ ինձ վրայ
ձեռք վէր բերի, էն ժամանակը ես գիտեմ, թէ ին-
չը կանեմ: Շատ բաներ կանեմ. դիփունանց ջիգրն
էլ կը հանեմ . . .

Մեր Հարևանի տանը մի մարդ ա կենում, նորա
անվել Ռուսէթիցը, նա բնտեղի հնարամարտն են ա-
սում, ի՞նչ են ասում, նրանում ա աւարտել իրա ու-
սումը: Էլ աշխարքումն բան չը կայ, որ նա հիմի
չըլի գիտենալիս: Շատ մարդ կայ, որ մէկ երկու այր-
բեն ա սովորում, էլ մարդի չի հաւան կենում, բայց
նա էնպէս ա որ, մեծի հետ մեծ ա, պստիկի հետ՝
պստիկ: Մեյն մի քիչ շատախօս ա, ամեն մի բանի
վրայ խօսելիս ուրախանում ա, բերանը փրփրացնում.
Ձեռներին, ոտներին ա անում: Շատ անգամ էնպէս
խօսքերը ա ասում, որ մենք չենք հասկանում, ա-
սում ենք հա, էդպէս ա: Նա ամեն օր հէնց ու-
սում առնելու վրայ ա խօսում: Ասում ա, -Ով որ
մի քիչ տեղեկութիւն ունի Պաղեստինից Ալեքսանդ-
քից, հէնց իմանում ա թէ մի մեծ ուսում ա ստա-
ցել, բայց որ հարցնես, թէ ինչի՞ ա Հայ ասում
ինքը, ի՞նչ բաներ են անց կացել Հայ ազգի գլխովը,

պատճառն ինչ ա էլել, ոչինչ չի կարող պատասխան տալ, պատասխան էլ տայ . . . Ասուած հեռի արասցէ ամէն լուրից . . . Հիմի դու որ ասեցիր հայերէնը ինչքան գիտեմ, բաւական է, դրա վրայ միտս ընկաւ: Հիմի քեզ որ հարցնեն էդ խօսքերը, լաւ պատասխան կը տաս:

—Դէ ինչ որ ինձ չեն սորվացրել, ես ինչ տեղից կը գիտենամ: Ղորդ ա, ես շատ վախտ ինձ ու ինձ միտք եմ արել, թէ ինչի թուրքերը, ռուսերը թագաւորութիւն ունին՝ մենք չունինք, տէրտէրին հարցրել եմ, բայց նա էնպէս պատասխան տ տուել, որ ես էլ՝ էլ չեմ ուզեցել աւելի խօսացնել . . .

—Որ ասում եմ քու տէրտէրը ոչինչ չի գիտում, դու չես հաւատում: Արարած աշխարքումս մեր ազգի նման ընտիր ազգ չը կայ, մեր աշխարքի նման էլ լաւ աշխարք . . . Ես էնպէս բաներ եմ լսել որ . . . Ասուած տայ, դու ինքդ կը կարդաս, կը տեսնես... Չէ, ես քեզ էլ չեմ տալ տէրտէրին, որ ասնի, ես նրան ջուղար կանեմ: Մանաւէլի հետ մրտեղ կերթաք փանքի շկոլը կամ թէ չէ՝ գիմնազիա . . . Հարթաթ մի տեղ կը գտնուի քեզ համար . . . .

—Լաւ, էդպէս արա: Ես էլ մի գիր կը գրեմ, որ ապերը ալուր բան ուզարկի ասնիցը . . . .

Արութիւնը դեռ ես չէր աւարտել իւր նամակը, որ տէր Մարիոսը ներս մտաւ:

—Ա՛ռութին, որդի, ախր մենք ուշանում ենք, ըստեղ քաղաք տեղ ա, գարին, գարմանը թանդ ա,—

ասաց տէր հայրը, նստելով աթոռի վրայ, որ Օտանան առաջ քաշեց:

—Տէրտէր ջան, Արուխիմին թողէք մեզ,—ասաց Օտանան գունատուելով:

—Հը՞ . . . Ես հէնց երազումս տեսայ, որ դու Արուխիմին պիտի ձեռքս խլես. . . Բայց քու հէրը զարուլ կանի. չի՞ ասիլ, թէ՞ քեզ ո՞վ ասեց, որ իմ տղէն սանտես քաղքումը թողնես . . . Գիտես, նա մի քիչ ուրիշ թաւուր ա մտիկ տալիս քաղքի վրայ: Նրա համար քաղաքն ու Սոդոմ գոմորը մէկ ա . . .

—Ես իմ հօրը զարուլանել կը տամ, տէր հայր...

—Լա՛ւ, որդի, ես խօ չկամուիթին չեմ անում. ո՞վ կուզի, որ իրա աչքը քօռ ըլի: Արուխիմը ինձ մօտ աշկերտ չի էլել: Ես նրան որդու պէս եմ պահպանել: Ես կուզեմ, որ նա լաւ ուսում առնի, լաւ տղայ, խելօք տղայ դառնայ, ասաց տէր հայրը և ապա դառնալով դէպի Արուխիմը հարցրեց.

—Ա՛ռուխիմ, որդի, ուզում ես մնա՞ս:

—Հա՛, ասաց Արուխիմը, մանկան պէս ժպտալով:

—Լա՛ւ, որդի, դէ խելօք կաց, քեզ պարկեշտ պահպանիր, առաւօտ, իրիկուն ժամ գնա, ժամ ասա, անառակ տղոց հետ ընկնիր չը գառնաս, կոծի չը խաղաս, չը գնաս քուռումը լեզանալու, կամ Օրիորդաց մոտ գալու: Դու գիտես, ինձ շամանչացնես, էնպէս սրա, որ մի ժամանակ ես էլ պարծենամ: Ինձ շուտ շուտ նամակ գրի, մի նեղութիւն ունենաս, ինձ յիշանի. . . Դէ մնաս խաղաղութեամբ. Տէր ընդ քեզ:

Արութիւնը մեր կացաւ և համբուրեց ակը հոր աջը, նա էլ նորա գլխին ջերմեռանդ սրտով և աչքերը երկինք բարձրացնելով մի պահպանիչ ասաց և մեռանելին խաղաղութիւն մաղթելով, գուրս եկաւ։

ՎԵՐՋ ՄԱՆՈՒԹԵԱՆ։

„Ասուած մի արասցէ՝ որ մարդի գլուխը մէկ անգամ ծռվի. էն ժամանակը հազար կարգաւոր ու բժիշկ էլ որ հաւաքվին՝ խէր չի անիլ, քանի գլեսն էլի կծռվի ու վերջը, թէ գոռ արիր՝ խոպառ կըկոտրվի։ Գիժն ասած ա՝ մէկ քար քցեց ծովը, հազար խելօք վրայ թափեցին, չկարացին հանիլ։ Աղասին տեսաւ ասածը չվանի վրէն չեն գնիլ, գուր տեղն անց կկենայ, քաշվեց մէկ դրաղ, ազուխը դրեց աչքին ու բերանը բաց արաւ. „Փառքդ շատ ըլի՝ ով Արարիչ Ասուած, էլ ո՞ւր ենք ասում, թէ մարդ քո սուրբ հոգին ունի, քո պատկերն ա, որ քարից էլ շատ անգամ միտքը պինդ ա, գլուխը հատա։ Գող ու աւազակ էս տեղ տարերով բուն են դրել. էլի քո երկիրը նրանց ատկով չարել, վրէն պահել ա, հէնց մեր ազգին ա քո գուրումը հասել, որ չէս թողում իրանց աշխարքը շէն անեն, քո սուրբ անունը փառաբանեն, կեանք ազատեն ու կեանք վայելեն։ Չէ, Ամենակալ Արարիչ, գու քո ստեղծվածը, քո որդին էդքան չէս անարգիլ, չէս ոռնահարիլ։

Մարդս, որ ծնվում է, մի կողմից աւելի էլ ոչինչ չենք անում։ Տարիք են անց կենում, որ քիչ քիչ ման ա գալիս, քիչ քիչ լեզու, ուշ ու միտք գալիս, ձեռք բերանք տանիլը ու գարգակ հաց ուտիլն էլ ա, հաց գտնիլը չեմ ասում՝ սովորում։ Բայց փոյ էն էրէխին, փոյ էն ազգին, որ աչքը էնպէս գոգում բաց կանի, որ լոի տեղ խաւար կտեսնի, աչքը բաց գուզ ճամբէն կիմոգայ, քարէքար կընգնի, փոյ էն ազգին՝ որ բնական օրէնքը կիմոգայ, անբնականին կհետևի, որ էնպէս խրատ տուող չի ունենալ, որ ներան հոգի տայ և ոչ հոգին էլ հանի։ Ցարաբ որ լաւ կարգացող էր էլել՝ էրէխէրանց ջոկ, ժողովրդին ջոկ, գիշեր ցերեկ խրատ էր տուել, կարգացրել, լուսաւորել էր, հիմիկ մեր ազգը էս հային կրէր, էստեղ կընկնէր։ Ցարի հայրենն էլ մեզանից լաւ ա ապրում։ Հարամուց, Ֆորսկանից եա փախչում, եա փոյ իմոչում՝ կարուսում, գլուխը պահում։ Ծարի բունն էլ որ քանդում ենք՝ ջիվիում, իմեին գլխին ա անում։ Մենք ծարի դդար էլ ա չիանք, որ մեր բունը պահենք։ Ի՞նչ օգուտ էն գիրքն ու աւետարանը, էն խաչն ու երկրպագութիւնը, որ մենք չենք հասկանում։ Գնանի տակին էլ շատ գանձ կայ, մեզ ինչ։ Ա՛խ՝ մեր կարգացողներ, մեր կարգացողներ՝ ինչ կրլի՝ որ ինչ բան ժամանակ քնի, քէֆի հետ են անցկացնում, աւելի փոշի իմանա՝ անում, էսպէս բանի իմանա՝ անեն, մեզ լուսաւորեն, իրանք էլ

թիշամաց, հարամաց ազատվին, մեզ էլ ազատեն։ Մարդս մեկ անգամ է աշխարքը գալիս. Էնպէս պէտք է անի, որ գուս գալիս՝ էս գինուոմը անունը յիշուի, ասնվի, էն գինուոմը հոգին փառաւորվի, լսի փայ ըլի։ Ոչոյց ինչ օգուտ՝ որ ասածս քարերն են խմանում։ Ասենք՝ թեկ ագէտ խալխը էսպէս բանը լսել, առում ա. կարգաւորին ինչ ա էլել, որ նա էլ ա հասասաւորթիւն տալիս, թեկ էսպէս հրաշալի քաղաքը անէծքով ա կործանվել։ Առաջինք՝ սուրբ մարդի բերնից անէծք, գառը խօտը չի պէտք է գուս գայ, գուս էլ էկաւ, Աբարիչ՝ երեսս ասիր տակը, գու պէտք է մեկ մարդի խաթեր միլիոն հոգի կորցնես, թեկ պէտք է կորցնէիր, ընչի՞ առեղծեցիր։ Ա՛խ, հազար էսպէս գաւեր կայ սրատումն, ամմա բերանս փակում են, չեմ կարում ասել . . . .

(Գէորգ Հարատանի, երես 248—249)

ԳԼՈՒԽ Է.

—

. . . . . .

. . . . . .

ԳԼՈՒԽ Ը.

—

ՊԱՐԶ ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ.

Ղարիբեանց պատմութենից երկու տարի յետոյ:

ՊԱՅԻՍԻ սկիզբն էր: Կիրակի իրիկնապահին երկու պատանի մարդիք մեն էին գալիս Թօջի վանքի գերեզմանատունը, կարդում էին այս և այն գերեզմանադիրը և առնին մի տապանադիր վերջացնելուց յետոյ՝ աւելացնում էին Աստուած ողորմին և գոփում կամ փռնում էին փորագրողին և շարագրողին: Վերջապէս մինը ներանցից նստաւ մի գերեզմանաքարի վերայ և միւսին էլ կանչեց, որ գայ մօտը նստի, կարծես թէ մի գժուար հարց կամ խնդիր վճռելու համար:

—Տեսնես աշխարքիս մեռելները շատ կըլլին, թէ սաղերը, հը՞. ինչ կասես, Ա՛բուԹին:

—Քու սուտը շինուի, Մանուէլ, բա էդ էլ չես գիտնում:

—Դէ իմ մտքով պէտք ա, որ սաղերը շատ ըլլին. բան արում տարէց տարի մարդիքը աւելանում են, մի խօսքով յայտնի է, որ ծընվողները շատ են՝ քան թէ մեռնողները:

—Հարա էնքան որ պատերազմներ են պատահում, սով ա ընկնում աշխարքս, ցաւ, երկրաշարժ ու Թիւնք..

բա պատմութիւններումը չես տեսնում ինչեր ա գրբած . . . Աշխարքս ստեղծուելուց մինչև հիմի, որ ամ գիտէ միլիոն տարի բլի անց կացած. ուրեմն որքան մեռած կըլին, որ եթէ յանկարծ վէր կենային, հողաշնոր վրայ էլ ասեղ վէր գցելու տեղ չէր բլիլ: դիմի էլ մարդիք կըլէին:

Զորդ որ, ասա, բացագանչեց Վանուէլը . . . Աբութիւն, բազի վախտ ես էնպէս յիմար հարցմունքներ եմ անում, որ յետոյ ես էլ եմ ամանչում, որ էդ հեշտ բաներ էլ չեմ գիտացել: Էս օր էլ մի բան կարմբրեցի: Աշակերտներից մինը հարցրուց, ասում ա. եթէ այժմ ես մի տարեկան եմ, իսկ իմ հայրը քանը-հինգ, ես կարող եմ երբ և իցէ հասնել իմ հօր տարիքի կիսին, եթէ մենք միասին շարունակ ապրում էինք և եթէ կը հասնեմ, քանի տարուց յետոյ: Ես ասեցի էդ անկարելի բան է, զու էլ կապրես, նա էլ կապրի տարին քեզ համար էլ նրա համար էլ մի և նոյն ա, չէ, ասում եմ էդ անկարելի է . . .

—Մի ասիլ, մի՛ ասիլ, Վանուէլ, ես էս բանիս ասեմ. էդ անկարելի չի, խօսքը կարեց Աբութիւնը, ձեռքը ճակատին դնելով . . . Համարենք, որ որդին մէկ տարեկան է, իսկ հայրը յիսուն: Մէկ յիսուն տարի էլ որ անցնի, հայրը կը դառնայ հարիւր տարեկան, իսկ որդին՝ յիսուն: Տեսնում ե՞ս, ինչպէս հասաս: Ցիսունը հօ հարիւրին կէսն ա: Ուրեմն կարելի է: Համարենք որ հայրը 25 տարեկան է, իսկ

որդին $\frac{1}{25}$, երկրորդ տարին կը լինի $\frac{2}{26}$, երրորդ տարին՝ $\frac{3}{27}$, 10 տարուց յետոյ $\frac{10}{35}$, տեսնում ես. ինչպէս տասիներն աւելանում է: Վերջապէս 25 տարուց յետոյ որդին կունենայ $\frac{25}{50}$, որ ուղիղ կէսն է: Ցեսա՞ր, ինչպէս գտայ, բացատրեցից Արութիւնը ինքն իրանից բաւական ճնալով, որ էդպէս մի մութ խնդիր լուծեց, այսինքն իմացաւ, որ հարիւրին կէսը կանի յիսուն:

—Արութիւն, ես թուաբանութեան վրայ խսկի շատ միտք անում:

—Բա էլ ուրիշ ինչի՞ վրայ ես միտք անում:

—Ես մտածում եմ, թէ ինչպէս անեմ, որ սատանի հաւատը չը քաշեմ:

—Ցեսա՞ր, ինչպէս ես վճռել:

—Ա՛յ, ինչպէս: Եթէ մենք հաւատում ենք գերբնական էակների . . . .

—Պարզ ասա, էլ ի՞նչ ես վազում վարդապետի սրատուի նման գրաբար մրթմրթում . . . .

—Այսինքն՝ եթէ մենք հաւատում ենք էնպէս բաների, որ անհերևոյթ են, մենք չենք կարող ոչ տեսնել, ոչ շօշափել, պէտք է էն ժամանակը որը որ լաւ ա մեզ համար՝ էն ընդունենք, որը որ ցեսա, հերքենք, չընդունենք: Զորօրինակ: Ասում ենք, սատանայ կայ, հրեշտակ կայ: Սատանան մեր թշնամին ա, ասում ենք, հրեշտակը՝ մեր բարեկամը: Մենք կարող ենք երկուսին էլ չը հաւատալ, բա

որում ոչով չի կարող ներկայացնել ոչ մեկին, ոչ միւսին, բայց որովհետև հրեշտակը մեզ մի վատ բան չի անում, այլ ընդհակառակը լաւութիւն ա անում, մեր ազօթքը երկինք ա հասցնում, մեր հոգին արքայութիւն ա տանում, թող ուրեմն էդ բարի հրեշտակի կեանքը երկար պահի մեզ համար Աստուած: Բայց սատանայ, գև, քաչք, ալք, խթեթիլ, մեզնից լաւերը և այլն, որ ասում են, թող գրանք չքքուին, անհետանան մեր մարից, հաւատից, գրից, բեզուից, լսա որում գրան հաւատալը մեզ ինչա ա տալիս, օգուտ հօ չի տալիս . . . .

—Ախպէր, դու աւելի լաւ մարով ես գրագուած, խօսք չունեմ: Երանի քեզ, որ Այսմաւուրք ու Ֆոզոմածի չես կարդացել, թէ չէ էդպէս մարեր շուտով գլխիդ մէջ չէին ծրիլ ծաղկել, վերջապէս պատուղ տալ: Ես ինքս էլ եմ դրա վրայ շատ միտք արել: Ի հարկէ մարդուս տունը շինողն ու քանդողը նրա հաւատն է: Սուտ հօ չի գրած Աւետարանի մէջ «Ըստ հաւատոց քոց եղիցի քեզ»: Մեր գեղի տղէրքը էնպէս աներկիւղ, էնպէս զօլաղ են, որ նրանց տունը ընդատան ա հասել: Ոչ թրից յետ կը կենան, ոչ սրից, մի տասը տարեկան էրեխի էլ որ ասես, տպանի բերան կընկնի: Մի խօսքով ասէրքը եմ ասում որ ուր կը մնայ Ջհուդների Սամաանը: Բայց . . . էնպէս պատաւ մարդ ա դուս գալիս, որ սիպտակ մրքիցը չի ամանչում, սուտ օրթումա ուտում հա-

սատացնում, թե իմ պապը մի կապը քսած կաշի ա գցել ձիու վրայ, սատանէն որ նստել ա, կպել ա վրրիցը, դա էլ գնացել ա բռնել։ Հէրու ամառը գնդն էի գնացել, սրա վրայ շատ խոսեցի, որ շատ ջիգրա բերին, ես էլ քիչ մնաց որ կատաղեմ, սատիկ շարացայ, պատանեներին մի լաւ ուշունց տուի, յետոյ ասեցի. «գուք ձեր ձեռքով ձեր որդոցը սպանում էք։ Հաւատացնում էք, թե սատանայ կայ, գիշերը մարդի խփում ա, խափում ա տանում սարերի, քարերի գլխից վէր գցում, անմեղ էրեխէքն էլ ձեր յիմար խօսքերին հաւատում են, գիշերը գերեզմանատան, կամ մի քանդուած եկեղեցու մօտով անց կենալիս վախար մտներին ա ընկնում, մի շուտ մի ցից քար տեսածներին պէս, սրտատանք են բրում ահուց գալիս մեռնում, յետոյ ասում էք ոտ էր*։ Ձեր տունը քանդուի, ասում եմ, ես էլ Ձեր նման մի էշ գեղջի էի, ձեզանից էլ Պօղոսի տաղանդի ասած։ մի թարաղա էլ տուել էի, (չունքի ես ջինդար էի ուզում դառնալ) հիմի եմ տեսնում, որ ես խաբուած եմ էլել, ես ձեզ մի մին պատմանեներն ասում եմ, բնչի՞ չէք հաւատում . . . .

—Ա՛խ, էդ պատաս մարդիքը. էդ պատաս մարդիքը՝ . . . Ասայ Վանուէրը պուշները կծելով, — սիրտս էրել խրովել են . . . Ցա՛, էնպէս խօսում են

---

* սատանայի հարուած կամ խփած.

սուր սուր, գեռաս գեռաս ու էնպէս ցակուս ցակուս
վէր են հատում, որ լսողը կասի էլ սրանց ինչ ու-
սում, ինչ գիտութիւն ա պէտք, բայց մի մուռատ
ու անպիտան ջինդարից էնպէս խափվում են, որ տես-
նողն ու լսողը սիրտը բռնած՝ ծիծաղս կը թիրա-
նայ . . . Մի անգամ մեր գեղը մի ջինդար էր եկել,
թաղլահի բանի գիր էր անում մի երկէն զոլոլակ
թղթի վրայ ու հինգ հինգ մանէթով, ասաը ասաը
մանէթով ծախում, որ յետոյ մեր մարդիքն էլ մու-
շամբայ էին անում կռներին, մէջքներին կապում, որ
բաղդները բանի, լեզուները կարուկ ըլի, խօսքները
անց կենայ զասեղասելի մնա, գիւանխանէրումը։ Բայց
ոչինչ չէր լսում, ամէն տեղից էլ քօթի կում գուս էին
անում ջինդարի թիլսմի ոխին ոչով չէր մարիկ ա-
նում . . . Վախտատ էլ ինչ երկարացնեմ, էգ իմ
ասած ջինդարը էրկու մարդի խափել էր, թէ «ես
որ տեղ որ հին ժամանակներում թաղած փող ըլի՝
կը գրանեմ»։ Մեր ազատեկաչու մարդիքն էլ մի էր-
կու ջահէլ, ջանը ապ ապայ են վերցնում իրանց հետ,
ու ջինդարի ասածն ընկնում, ասում մի հին գե-
զասեղ, ասում են բանեղ պէտք ա, որ շատ փող
ըլի, բան որում քարով որ գեանին խփում են, գնդ
գնդում ա, գէ գիթի, ասում են, իրէք տեղ փայ կա-
նենք, մի փայը քեզ, էրկուսը մեր չորս հոգուն։
Ջինդարն ասում ա, «ես գեզեր, բաներ պէտք է առ-
նեմ, պէտք է ճաշ պատրաստեմ, սատանաներանց հը-

բուխրեմ ձաշի, խաղիրներն առնեմ, բայց փող չու-
նիմ։ Բերէք ասում ա մի երեսուն մանէթի տուէք.
թէ որ սուտ գուս գամ ձեր փողերը էլի յետ ձեզ
կը տամ, թէ կուզէք մի էնքան էլ կաւելացնեմ»։
Մեր մարդիքը գնում են մի տեղից պարապ անում
բերում տալիս իրան, նա էլ մի երկու օրից յետոյ
նրանց հետ գնում ա հին գերեզմանը մի թզենի վե-
րայ մի քիչ բան ա գրում, թզուղիը շպրտում ա
քամու բերանը գցում, քամումը մի քիչ փոպռա-
լուց յետոյ մի տեղ վէր ա բնկնում։ «Վէ, էդ տեղը
փորեցէք», ասում ա Ջինդարն ու ինքը գնում գնը,
որ ընտեղ էլ ուրիշ կերպ խաբեփայուքիւններ անի։
Մեր Ջահէլ տղէրը պառաւների երեւակայական խը-
բախտութանքովը ոգեորուած՝ փորում են բահով, քը-
լունգով, մինչեւ էս դիշեր, տեսնում են, որ ոչինչ
չի գուս գալիս, բան որում նա ասել էր երեք քա-
ռասակուսի արշին կը փորէք, բայց մեր տղէրը երկու
էնքան էլին փորել։ Վերջապէս գալիս են Ջինդարին
ասնում։ Մեր Ջահէլ տղերանց ջիգրը գալիս ա, սկը-
սում են բարկանալ վրէն, ոնբ ա, ասում են հարա-
փողը, դէ բեր ասում են մեր փողերը յետ մեզ տուր.
թէ չէ էս սահաթիս քեզ կը գցենք էս փոսի մէջը
հողը վրէդ ածենք։ Էս որ լսում ա Ջինդարը մի էր-
կու քայլ յետ է կանգնում ու աչքերը մեր տղե-
րանց վրայ պրպտալով ասում։ «Դուք ինչպէս կը
համարձակիք էդպէս խոսքեր հանել բերաններիցդ,

էս սահմանին ձեռքս բարձրացնում հարիւր հազար սատանայ կը գայ, ձեր մեծ թիքէն անկաշկանդ կը թռնեն, գիտէք, թէ չէ՞ . . . Էս որ լսում են մեր պատաւ ու ջահէլ տղէրքը բաշներքը սասում ա. մազներքը փշաքաղում։ Վեր են կենում քօս ու փոշման գնում իրանց տեղերը, ջինդարին էլ ասում են. „այ ամեն, խաչիփայ. մեր տուած փողը քեզ հալալ լիլ քու մոր կաթի նման, թէ երկինք, գետինք, ծով, ցամաք կը սիրես, մեզ մի փատ բան չանես . . . .

—Ա՛յ թէ խատիլ ա, հա՛ . . . Իրանց երեխանց կարգացնելու համար փող չեն տալիս, թէ աղքատ ենք, խարերաներին թումանոներով են տալիս։ Էս էդ գրերիցը էնքան ժողովել էի, էնքան գուս էի գրել, որ կշռէի, մի փութիս աւելի կը ընէր։ Ոչոմից բան չէի թաքցնում, գիւնանքն էլ գիտէին, որ իմ վարժապետը էդ բաներն ինձ լաւ ա սորվացրել։ բայց ես գործ չէի գնում, լսա որում գնա էրեխայ էի. վախում էի յանկարծ սատանէն, որ իրա գիշատնային դէմքը երևացնի ինձ, լեղիս կը պատռի։ Բայց մի օր մի ջահէլ տղայ շատ որ ափսոսա կարեց, թէ Արութին, հոգուդ մեռնեմ, զապէդ առնեմ ինչ ուզես՝ կը տամ, ինձ համար մի սիրոյ գիր արա։ Էնպէս գրի, որ փլանի հարան ինձ սիրի։ Էս էլ որ ձարա կարուեց, էլ վարժապետիցս չհարցրի. վեր կալայ գիրքը գնացի բաղը, որ ոչով չը տեսնի։ Խրատը կարդացի. ու էնքան գեօրա մի բան գրեցի տուի աղին, ասեցի. „դէ տար

սիրածիդ տան շէմքումը թաղեր, քեզ կը սիրի։ Էն ախմախն էլ տարել էր գիշերը թաղել, ու ինքն էլ հանարձակ ու անկեղծ սիրով գնացել էր մտել հարսի ծոցը. հարսը ծիկայ էր տուել, տանը ոչիք վեր էին կացել, հէնց իմացել էին, թէ փախած ուս ա մըտել տունը, որ գողութիւն անի, էնքան ջարդել էին, որ գլուխն ուռել էր. որ իմանային, թէ ուրիշ մրաքով ա գնացել, կսպանէին . . . .

—Ա՛յ թէ տարել են հա . . . Զարմացք բան ա. հօ տեսնում են որ սուտ ա, էլ ինչի՞ են հաւատում..

—Էդ հաւատը շատ հին ա, կռապաշտութեան ժամանակից ա մնացած, բայց, թէ ինչպէս է Սօղոմոնի անունը դրա մէջն ընկել, ես էդ չեմ գիտում, ըստ որում սէտք է, որ էդպէս բաներ Սօղոմոնից առաջ էլ ըլի էլած։ Բայց երևի Սօղոմոնի անունը էնքան բարձրացել ա ասիայի ազգերի մէջ, որ նրանք իրանց առասպելաբանութեան հէրոսն են շինել։ Սօղոմոնի վրայ էնքան բաներ են ասում, որ անկաջ պիտի որ ըսի։ Հէնց ինքն էլ ա զարմանում իրա իմաստութեան վրայ, իրա երգերի մէջ։ Ասում ա միայն երեք բան ինձ անյայտ մնաց աշխարքումս, թէ չէ ամեն բանի էլ վերահասու էլա։ Ես կարդացել Պղնձէ քաղաքի պատմութիւնումը, թէ ինչէր ա արել Սօղոմոնը . . . Վեր պատանին, օրթում են ուտում մէկ մէկու հաւատացնում, թէ փրան անդը մէկ ջինդար կայ, կապոմի գժեր ա լաւացնում, դևերին հա-

ւաքում ա ածում մարի (եղեգն) մէջը, կրակը գը-
ցում, էրում, չըլա ա մնում, ասում են, քառա-
սունք պահում, սատանեքանց, հուրիփարիներին մոգ
ա անում, խօսացնում, խորհուրդ հարցնում, ուխտ
անում, երդում պահանջում, աղ ու հացով, որ ինչ
հրամայի, կատարեն։ Արիում են ուտում, մէկ մէկու
հաւատացնում, թէ փլան տեղը մէկ ջինդար կայ,
էնպէս գիր ա անում, որ ով ինչ արած ա ըլում,
գիտի էլ ասում ա։ Դա, ասում են, էնպէս գիր ա ա-
նում, որ ինչ պարկեշտ կնիկ, աղջիկ, հարս ուզում
ա ըլի, խոյոն էվէտ ակլորվում ա, հէնց ասում են,
երկենեցրած զունդի վրայ մի քանի խաղ կը քաշի,
մին էլ տեսնես աղջիկը իրա ասատ, նայի մերկու-
թիւնը հագաւ, նրա առաջին էն վախտը մէնակ ջուր
ա էրևում, մօտի մարդիքը նրա աչքին չեն էրևում,
ասում են։ Հազար ու մին առակ ու մասալ սրա վը-
րայ տարածուած է ժողովրդի մէջ, ինչպէս չը հա-
ւատան։ Ասում են, „Մի վարժապետ իրա աշակերտի
մօրը հաւանել ա, աշակերտին սորվացրել ա, թէ՝
„Որ գնաս տուն, մօրդ գլխի մազիդը մին-մին պոկի բեր“։
Անմիտ էրեխէն էլ, որ գնում ա տուն, տեսնում ա
որ իրա մէրը գլուխը լուանում ա, ձեռքը մեկնում
ա գլխիցը մի մազ ա պոկում։ Խորամանկ մէրը խոյոն
հասկանում ա, որ բանի միջին բան կայ, սուս ա
անում, բան չի խօսում, բայց երեխի ձեռիցը մազն
առնում ա մնում տուն, մի զոմշի կաշուից մի մազ

ա պակուտ ապրիս իրան։ Երեխեն ոչինչ չի հասկա-
նում, ասում ա մայրը ապրիս ա փարժապետին, ա-
սում ա մարս գլխիցն աղ։ Փարժապետը գործ ա գը-
նում մայրը իրա իմանի հետ, մի էլ ասում են
հրիս իմ բրբիկ հա՝ իմ բրբիկ գնդամիջոցը գոմշի կաշին
գնալ փարժապետենց տունը փաղում ա սիրահա-
բուած . . . Հարսն։ Լսպիս հազար ու մին առաս-
պելներով հասասում են իրանց յիմար համոզմունը-
քը։ Բայց դու զարմանում ես, ասում ես ինչի՞ են
հաւատում։ Բա միայն չի՞, որ մենք հաւատում էինք
իմաստ մարդիկ ասում պատասխան շամշուլդու բերդումը։

—Հա՛ ասա . . . Ամենա նա էլ լաւ գլխին ա գալի
գեղջացոնց գլխին իրա պատաւ հնիկ ասելովը հա՝ . . .
Լսպիս բաներով լիքն են մեր գեղերը։ Հինց էս քաղ-
քում էլ շատ կան։ Մեզ մի հարևան ունենք, ամեն
գիշեր Ղամիսիմ ես ա գնում։ Ոչ մի բան իմ ջիգր
Լնպիս չեն բերում, ինչպիս որ հարսների նեղաւ իշն
ու ասելը ապրը։ Էդ նեղաւոց հարսները շատրատան
ջինդարից բեիմար են։ Բա դու չես ասում խակի՞, Ա՛-
բուիմ։

—Ինքան ասում եմ, որ մարդերիս համարդովը մին,
վնոց չեմ ասում։ Շատ ժամանակ չի, որ մեր գեղջի
մի հարսը մի Լնպիս ցլին խաղաց, որ քիփս Լկաւ։
Դու հո գիտես, որ մեր գեղջիք Ղարաբաղիցն են
Լկած։ Նրանց գալը հիմի մնա վաթսուն տարի կայ,
բայց Լնպիս գայիմ են իրանց պապական սովորու-

թիւններին, որ ոչ մի փոփոխութիւն չի կրել մինչև հիմի գրանց մէջ։ Մեր գեղի մէջ հիմի ոչ մի կնիկ չը կայ, որ բերանը բաց լրի, հէնց որ պատկառելու օրը կկաւ, խսկոյն կը փաթաթեն քիթի ու պռունգ, բերան, երես, մի հատա զանգրուկով էլ աչքերը կը ծածկեն, կերթայ մուրացին կը հանի։ Էս էսպէս։ Մօտ ժամանակներս մեր գեղջի մի ազգայ գնացել էր Էնպէս մի գեղից աղջիկ էր ուզել, որ անգ սովորութիւն չը կայ բերան փաթաթելու։ Բայց որ պատկել բերել էին տուն, խեղճ հարսի գունչը Էնպէս անգիտարար փաթաթել էին, որ քիչ էր մնացել թէ շունչը կտրուի։ Էլերջապէս, կնիկ արմատը խորամանկ կըլի։ Մի որ նստում ա, ու սկսում ա տեղը տալ։ Իրա սկեսրին, մարդին հարցնում ա տալիս սուրբ Գէորգի բերնիցը, թէ «իմ գուլի բերանը ոչով իրաւունք չունի փաթաթելու»։ Ինչ ես կարծում, բերան բաց անելը մեր բոլի Աստուածոց համար աւելի վատա է, քան թէ կնիկ սպանելը, բայց որ խաչն էր հրամայել, խսկոյն բաց արին, խաչի համար մատաղ արին։

—Մեր գեղումը էդպէս չի լսում, ամենաջ դիր ես քեզ ասում։ Ներկայացրու քեզ մի մեծ տուն։ Դրա մէջ տեղը, ներքեւ-պռշակի մէջ ձգում ա մի սիրուն, շարմաղ, կամ մի գեղեցիկ՝ ափրիկեցի թոշի կերպարանքով մի հարսի։ Գեղի կնանիքը, հարսներն ու աղջիկները գիփ էլ հաւաքում են տունը լցում։ Հարսի

մարդը գլխի վերևը կանգնել ա, ձեռները խաչ արել, շլինքը ծռել, մի խօսքով իրա հերոս գէմք ու կերպարանքին մի էնպէս տեսք ա տուել, որ կասես սրա կեանքի վերջին բոպէն եկել հասել ա. հիմի, ուրդիոր ա, պիտի սրա գառամինիքը կարդան երեսին ու շրջինքից կախ տան, խեղդեն: Հէնց էսպէս էլ պատահում ա: Հարսն սկսում ա քիչ քիչ շարութիւններ անել, ինքն իրա երեսին սիրա ա տալիս, մազերը պրոձոկում, ցրվում: Փոքր նստող կնանիքը որ տեսնում են շատ ա գժութիւններ անում ձեռներիցը բռնում են (նա էլ էն կուզէր հէնց): Ուղարկում են Նարեկի, Աւետարանի եանից, որ գլխի տակին դնեն, ով մի բժժանք, մի կիպրանոց, մի Եփրեմ խորի, Աստուածաղերս կամ մի ուրիշ աղօթագիրք ունի, բերում ա դնում գլխի տակին: Երբ որ գեղամիջովը դէս դէն են ընկնում, դիմի էլ իմանում են, թէ ինչ համբաւ կայ: Վերջապէս մոլա, ջինդար, գրաբաց, դարի դցող, փալ բաց անող ու ուրիշ սրանց նման մարդիկներով լցնվում են տունը, որ հարսի բոլոր գաղտնիքները իմանան, որ յետոյ իրանք լաւ գուշակեն նրա ապագան: Հարսը տեսնում ա, որ թամաշաւորները դիմի էլ հաւաքուել են, ամօթն էլ ա դէն գնում, չիսսկանութիւնն էլ, սկսում ա իրա գէլի հարսանիքը, բղաւում ճղում ա.

—Կորէք, կորէք, անիծածներ, իմ աչքը ձեզ չը տեսնայ . . . Հը՛, հը՛ . . . Ես քու աչքը կը հա-

նեմ, անդգամ . . . Եվ լայնդ չես անում մնաս գաս հա՞ . . . Ո՞վ չի թողում. մարդդ հա՞ . . . Սպա՜սիր, ես դրան նշանց կը տամ . . . Զոքէչոք մնաս բերել կը տամ՞ . . . Եվ ինչ երկարացնեմ, էսպէս շարունակում է հարսը, մէկին ահ ա տալիս, միւսի մեղքերը, որ ինքը առաջուց լսել էր, յայտնում է ամէնի առջև: Զրերը ու հիւանդոտ կնանիքն էլ հարսի ոգևորված տեղը տալիս ժամանակը, կամաց կամաց գալիս են, երեսներին խաչահանելով կողքումը նստում, ձեռքիցը բռնում, որպէս զի իրանց ցաւի ու դարդի մասին էլ խաչը մի բան յայտնի իրա դուլին, կամ ասել, մարգարէուհու բերնովը: Նա էլ, որին յոյս է տալիս, որի վրայ բարկանում է . . . Երբ որ ամէն բան հատնում ա, էլ ոչինչ չի մնում, որ ասի, մնում ա նմնմալիս, յեռոց խառնցնում ա, իրը թէ քնից, հանգստացաւ: Մարդիկը սկսում են քաշուիլ, Աստուծոյն փառք տալով, որ իրանց էլ էն օրը չը քցի: Ոչով իրաւունք չունի էսպէս ժամանակները կամ ծիծաղելու կամ բամբասելու, խաչը կունդ ու կծիկ կանի նրան, էսպէս են հաւատացած:

—Ինչուր ա ասել խեղճ Աղասին, թէ «Ա՛ստուած, քո փառքը շատ բլիի. էլ ո՞ւր ենք ասում, թէ մարդը քո սուրբ հոգին ունի. երբ որ նրա միտքը քարից ցինդ ա, գլուխը հատա՞ Մանուէլ, զարմացը բան ա, էսքան էլ ազիտութիւն, էսքան էլ ախմախութիւն

կրկին, որ մեր գեղջիկը ունայն էնդկս բաներ եմ տես-
սել, որ հիմի էլ չեմ ուզում հաւատալ։ Այս որ հիմի
ուրիշ տեսակ եմ մարիկ տարիս բաներ փրայ, հէնց իմ-
մանում եմ, թէ աշխարքիս բոլոր սխալանքս մարդիկը
խնամանցել են։ Ասելս ինչի՞ վերայ ա գիտես։ Էս անց
կացած գաստուրի մանանակը գնում էի գեղը, մի
քանի որ Ճանցի Աղբուրքի մտա մի Դարկիի անուն-
նով գեղ կայ, էն տեղ։ Մի կիրակի որ գուրս եկայ
գեղիցը, որ մանգամ մի քիչ դրա չորս կողմումը,
տեսնեմ՝ ի՞նչ կայ, ինչ չկայ։ Հէնց գեղիցը մի քիչ
բարձրացայ գնացի Աղբուրքա կողմը, մին էլ տեսնեմ,
քու ասած, գնի հարամներիդ։ Աղջիկ, հարս, մանուկ,
երեխայ, պառաւ, ծեր, գիրի էլ հաւաքուել են մի
տեղ, մի քանդուած եկեղեցու մտա, որը մնացել ա
անում, որը ապտիք, որը մամա փատում, որը խուտկ
ծխում։ Ցերակը տիրացու չկար։ Ինձ որ տեսան, հա-
մեցէք հա համեցէք անելով, մի քանի պառաւ ծա-
ռան գնանիր տարան իրանց տուփրի փրայ նստացրին։
Ասում եմ, «Էս էս տեղ առաջ սուրբ չեմ տեսել, էս
ո՞ր տեղից լեռ բնկաւ»։ Թէ «Քա չես ասել, փրանի
աղջիկը երազում տեսել ա, որ էս եկեղեցին գրաղ-
կու

գնց գրանա՞, «Երազում եմ տեսել՞», «Ինչպես գնալ ունեմ՞»։ «Արքին սիպտակ մորուքով պառաւ մարդ էր . . . Ա՛ռ չը կարացի թէ ծիծաղս բռնել էի, բայց մեր ջերմեռանդ ուխտաւորները փոխանակ զգաստ իրանց յիմարութիւնը, սկսեցին ինձ նախատել . . . Ես էի ասում՝ հիմի որ մի բարակ արտասա ձեռին, չեշմակն աչկերին, բարակ փերչատիկը մէնը հագած՝ միւսը ձեռին՝ մի աբա Ֆրանկ ուսում ստացած գրաճանաչ Ֆռանսա անեկաջ գնէր մեր խոտերին, կասէր փչում՝ են, էգպես մարդիկ չը կան մեր երկրում...

—Սեաոյ ես ի՞նչ կանէի, գի՞տես, ասաց Վանուէլը տեղէցը վեր կենալով . . . .

—Ի՞նչ կանէիր, հարցրեց Արութիւնը, նոյնպէս վեր կենալով տեղէցը։

—Արեսին մի էնպէս չամփոպոս կը տայի, որ աբրասան էլ մի կողմ կրնկնէր, չեշմակն էլ, կասէի՝ «Ղուռումնաց, գու ես սուտ ասում՝»։ Էսպէս էլ բանը կը վերջանար։ Դա կերթար քոս ու փոշման գեղրցու հինգ ախպոր հաճե առած . . . Նպոմից արմատները պուճախներումը պարծենում են, թէ ազգասէր են, բայց իրանց ազգէցը չեն մտանում, որ շորքնէրը չը կեղտոտուի։

—Դէ գնանք կամաց կամաց, Վանուէլ, մուրեն բնկաս, ասաց Արութիւնը և սկսան քայլել գէպի տուն, խօսելով իրանց ներկայ գրութեան վերայ։

—Ա՛ռութիւն, շորքրս մաշուել ա, գրքի փոդ չունիմ։ Ախպէրքս ինձ չեն օգնում, հէրս էլ ապդ չի,

որ ինձ համար ալուր բան ուզարկի, որ կերածս ու-
բիշի չերևայ։ Հօ գիտես, էս քաղքըցոց խասիաթը,
մարդի բերնի թիքէք են համբրում, բայց Օրթա-
ձալէքումը հարուրներով են մնում, փորներն ա-
ծում։ Թեզմ քուրս ինչ որ կար բան ա անում, գիտի
էլ ինձ վրայ ա մնում, բայց դորանով ի՞նչ պիտի
գառնայ։ Մնացել եմ տարակուսած, չեմ գիտում
թէ ո՞ր ջուրն ընկնիմ։ Հիմի մեր Ուսուֆնարանն էլ
էնպէս անկարգութեան մէջ ընկաւ էդ խաչագող
Սալմասանցու շնորքովը, որ էլ չաժէ ընտեղ գնայ։
Դու էլ միտք ունես գնացիա մանիլու, ես էլ բայց
կարծեմ դու էլ իմ դրութեան մէջն ես, գեռ ին-
ձանից էլ բեթար։ Դէ ա՛յլ խելք խելքի տանք մի
միջոց, մի հնար մտածենք, որ անբախտ չմնանք,
դուշմանի սրտով չըլնենք։ Ախր մենք մեր դարդը թո-
ղած՝ գեղըցոնց վրայ ենք միտք անում, նրանց դարդն
ենք քաշում . . . .

—Ես շատ եմ միտք արել, Մանուէլ, բայց ոչինչ
հնար չեմ գտել։ Էգուց գնանք մեր Օվահիմի մտա,
նա փորձված, խելօք մարդ ա, ինչպէս կասի, էնպէս
կանենք։

—Բայց ինչ կուզէ ասի, պէտք է էնպէս անենք,
որ ուսմունքներս կիսատ չը թողունք, էրուած տե-
ղեր շատ ունիմ . . . .

—Եթէ հնար կըլի, ինչի՞ ենք թողում կիսատ, բայց...

—Դէ, բարի քշեր, ես էս կողմովը պիտի գնամ...

ԳԼՈՒԽ Թ.

—

ՕՎԱԿԻՄԻ ՓԻԼԻՍՈՓԱՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ։

ՍՈՒԼԻՈՅԵԱՆ ժամը տասներմէկին՝ Օվակիմը նոր արդէն վեր էր կացել տեղից և խարսիթը հագին՝ գրասենեակի մօտ նստած չայ էր խմում, բայց ընկղմած լինելով մի խոր մտածութեան մէջ, չայը նորա աչքին չէր երևում։ Այս հանդամանքը ես եզրափակում եմ նորանից, որ նա երբեմն չայից շատ էր կում անում և բերան ու սիրտ էրում, բայց այսու ամենայնիւ քիչ էր վրդովվում։ Բայց երբ նորա խելք ու միտքը մի ոգևորուած ու ճարտար հռետորի գեր սկսեցին լցուցանել, տաք չայի լիքը ստականը թեւատ կարծելով, յանկարծ վերայ բերաւ թէ չէ, այնպէս վեր թռաւ տեղից, ինչպէս տաք ջուր գլխին ածած։

—Վա՛յ ես քու չայ մոգոնողի հէրն անիծեմ, ասաց Օվակիմը բերան մերանը սրբելով, բայց չըկարողանալով թողլ տալ իւր մտածողութիւնը, որ իրեն սատարիկ գրաւել էր, սկսաւ անենակի մէջ անց ու դարձ անել և ինքն իրան խօսել, այնպէս կցկըտուր և այնպէս խառնուփնթուր, որ լսողը մի բան չէր կարող եզրափակել։ Գուցէ ընթերցողը ցանկայ

լսելու, թէ ինչպէս էր Օվակիմը երբեմն ինքն իրան դելը տալիս, գնենք ուրեմն, օրինակի համար, նորա այժմեան խօսքերը:

. . . . Այո՛, այո՛, ո՞վ կարող է սորա ընդդէմ բան ասել, այս անհերքելի ճշմարտութիւն է . . . Մարդս չի կարող չը լինել այնպէս՝ ինչպէս, նա կայ, ուրեմն մեղադրել և գովել բայերը պէտք է իմ մարմրի ք

փոխարէն ստացաւ։ Հիմի գանք որ, ոչ առնող կայ, ոչ տուող, ո՞ւմ պէտք է մեզադրես. կամ թէ չէ՝ ծախող շատ կայ, բայց առնողը կարողութիւն չունի գնելու. կամ թէ չէ, ծախողի ձեռքինը մարդարիտ է, բայց ոչովի հաճար նա մի հասարակ հուլունք չոժէ։ Հիմի ո՞ւմ պէտք է մեզադրես, կամ ո՞ւմ գով ես։ Ցայտնի է, որ ոչով չի ուզում, որ իրա աչքը կոյր ըլի. ամէն մարդ էլ՝ իւր կարողութեան չափ՝ աշխատում է, որ լաւ ապրի։ Մէկն ուզում է ազա, գառնայ, միւսն ուզում է սարկուութենից ազատուի, մէկէն ուզում է շատ փող հաւաքի, մէկը ուսումնական, միւսը արհեստաւոր և այլն։ Սկզբումը սոցա ամէն մի տեսակը շատ քիչ է լինում, բայց հետզհետէ այնքան շատանում են, որ մի տեղ ճեալով սկսում են իրարու հաց կորիլ։ քաղցած ճեացողները սկսում են ցրուիլ, որ զանազան կողմերում իրանց ունեցած պարապմունքովը հաց գտնեն։ Էսպէս տարէց տարի տարածվում է՝ թէ արհեստ է, թէ ուսում է, ամէն տեղ։ Մարդուս կեանքը կախում ունի բնական և դրական օրէնքներից *։ Եթէ մարդը իւր տեղը փոխի, անհնարին է, որ այդ նրա ապրելու կերպի մէջ մի փոփոխութիւն չը ծագի։ Նըմանապէս, եթէ նորա դրական օրէնքները փոխես, դարձեալ անհնարին է, որ այդ նորա մտածելու

* Ա յտինքն բնութեան, կրօնական և քաղաքական օրէնքներից։

կերպի մէջ մի փոփոխութիւն չը ձգի։ Բայց այդ փոփոխութիւններ անելը այնպէս հեշտ չէ, որ երբ կամենաս՝ փոխես։ Յողովուրդ կամ մի հատ բնակած մարդ ասած բանդ զուռնա չի, որ ինչպէս ուզենաս, այնպէս փչես։ Բոլոր յեղափոխութիւնքը, որ պատահում են մի ժողովրդի կամ մի մարդու մէջ, կախում ունի նմանապէս բնական պատճառներից, գանազան դիպուածներից, անցքերից, ժամանակից։ Եթէ այս բոլորը այսպէս է, ուրեմն մարդս չի կարող չը լինել այն, ինչ որ նա կայ, ուրեմն տեղիք չը կայ՝ ոչ գովելու և ոչ մեղադրելու նրան։ Ասում են փլան մարդը շատ հանճարաւոր է, փսաան մարդը ագէտ է, կոպիտ է։ Բայց այսպանով չեն բաւականանում։ Պիտում են ագէտին ար համարհել, հոգի հետ հաւասարել, չքացնել, իսկ գիտունին, գովել, մինչի երկինք բարձրացնել։ Այդպիսիներին ես կասէի՝ ն՛դրադրք, սիրելիք, չորանը, տաւարածը, ձիաւորը, միլիոնատէրը, փիլիսոփան և կոշկակարը միահաւասար արժանաւորութիւն ունին խմատուն գառաւորի առջև, քանի որում գոյա ոչ մինը և ոչ միւսը չէք կարող չը լինել այնպէս, ինչպէս նա կայ, ուրեմն ոչ թէ մեղադրել պէտք է և գառապարտել, այլ քընելել, քննել, և քննել պէտք է։ Ով ինչպէս կը մրատածէ, այնպէս էլ կը խօսի։ Տգէտից գիտութիւն պահանջել, կնշանակէ մի խմատուն մարդի գլխատել և նորա գլուխը կպցնել մի անխելք գլխի տեղ։

Եթէ այս ներելի չէ և ծիծաղելի է, նոյնպէս ներելի չէ յիմարին մեղադրել նորա յիմարութեան համար, և ծիծաղելի է խնամուելն զոմել նորա խնամութեան համար, պատճառ՝ զոյանից ոչ միոր և ոչ միւսը չէին կարող, ասում եմ, այնպէս չը լինել, ինչպէս նորա կան։ Այո՛, այո՛, ո՞վ կարող է սորա ընդդէմ բան ասել, այս անհերքելի ճշմարտութիւն է... Ո՛չ, ո՛չ . . . Մեղադրել և զոմել բայերի միարը պէտք է իմ մարից, իմ լեզուից և իմ գրչից հեռացնեմ, ո՞վ կարող է իմ ձեռքիցս բռնել, ես չեմ իմ գլխի տէրը՞, բայց հասարակութեան կարծիքը . . .

Այս միջոցին Օվակիմի սենեակի դուռը ճռռացրին դուրսից . . . .

—Ներս հանեցէք, ո՞վ ես, ասաց Օվակիմը և գրասեղանին մատնադրով մի գիրք վեր առաւ և սկսաւ շուռ ու մուռ տալ նորա թերթերը ու ինքը իւր մարի մէջ ասել . . . Պատանի անգամ չեն թողնում մարդի, ո՞ւր ձեաց որ խոսել . . . .

Դուռը բացուեցաւ և ներս մտան երկու պատանի մարդիք։ Այս պատանիքը, առանց իմ ասելու էլ՝ կարծեմ կիմանայ ընթերցողը, որ Արութիւնը և Պատուէլը կը լինէին, որոնք անցեալ երեկոյին վճռել էին գալ Օվակիմից խնդրելու, թէ ինչ հարկաւոր էր նրանց անել, եթէ այլ ևս նիւթական կարողութիւն չունին, որ կարելի լինէր շարունակել իրանց ուսման ընթացքը։

—Բարով, բարով ... Ասաց Օվակիմը, մի ձեռքով մինի, միւսով միւսի ձեռքը սեղմելով, և ապա հրաւիրեց նստել, երբ ինքը՝ մի փիլիսոփայական հայեացք տալով իւր դէմքին, սկսաւ հարց ու փորձ անել:

—Ի՞նչպէս էք, ուսմունքներդ ի՞նչպէս է յառաջ գնում: Լսեցի, որ ձեր ուսումնարանի մէջ մեծ խառնակութիւն է պատահել, աշակերտներից շատերը ցրուել են, կարծեմ դուք էլ չէք ազատ մնացել էդ հաշածանքից: Ես ուզեցի էդ մասին մի բան գրեմ, մի քանիսին մեղադրեմ, բայց մէկ էլ ինձ ու ինձ միտք արի, ասեցի, որ ինչ որ պատահում է, չի կարող չը պատահիլ, եթէ երբեմն էլ պատահմունքի առաջն առնվում է, այդ էլ չի կարող այդպէս չը լինել: Բայց եթէ կը քննես տառնարիւն, գործի բուն եղելութիւնը իւր բոլոր շրջապատ ազդեցութիւններովն ու պատճառներովը կը ներկայացնես, բերնիդ էնպէս կը խփեն, որ լեզուդ յաւիտեան կը կտրես, ուրեմն սպասել պէտք է. մինչև երեխէն լաց չի լցում, մէրը ծիծ չի տալիս, մինչև մարդ չի քաղցածանում, փորը վեց վեց չի անում... Թուարանութեան մէջ գրուն մեծ նրշանակութիւն ունի, բայց թէ որ մտրը ուրիշ թըւանշան չը կայ, նա հէչ, չիք ... Մի ձեռք ծափ չի տալ, թուրքն անիծած ա խօսքն օրինակ, ասում ա „էլ երդրլա, քեարան սրնար“ (ժողովուրդը, որ հաւաքուի, գարան կը կոտրի): Բայց ժողովրդի գր-

լուխը որ հաստատ է, իրա իրաւունքը, սեփականութիւնը չի խանգարում, իրա լաւն ու վատը չի հասկանում, սուտը զորդի տեղ է դնում, զորդը սուտի տեղ, էլ ինչ ճշմարիտ խօսք ասես։ Թէ կուզի իմաստունին սուտ ասած, թէ կուզի յիմարին ճշմարիտ. այդ երկուսը մի գին ունի, մի և նոյն է։ Հայը օրուջ չի պահիլ, թուրքն էլ մեծ պաս։ Ինչ որ մէկի համար պիղծ է, միւսի համար սուրբ է, ինչ որ միւսի համար սուրբ է, մէկէլի համար պիղծ է։ Բայց այս հանգամանքի վրայ պէտք չէ ծիծաղել և ոչ պէտք է զոմել կամ մեղադրել այս դրութեան մէջ եղող մարդոցը, քանի որում ոչ մէկը, ոչ միւսը չեն կարող ոչ մի ուրիշ լինիլ և ոչ այնպէս չը լինիլ, ինչպէս ինքեանք կան նոյն բոպէին, թէ և երկուքն էլ բանական արարած են, երկուսն էլ ադամորդիք են և խելք ու միտք ունին։ Թուրքն էլ այնքան առողջ դատողութիւն ունի, ինչքան որ հայը, զանազանութիւն չը կայ, ինչպէս որ զանազանութիւն չը կայ ազէաթ ու իմաստունի մէջ, քանի որում երկուքն էլ շատ լաւ են կատարում իրանց գործերը այս կեանքի մէջ, մինը իրրև լաւ ազէաթ, միւսը իրրև լաւ ուսումնական։ Ցաւիլ, գարդ անել այս բոպէիս թշուառ գըրութիւնների վերայ, գարձեալ պէտք չի, քանի որում ով ինչ կարող է անել, չի կարող չանել, ազգասէր մարդը չի կարող ազգասէր չը լինել, անց որ բարեկացաւ ունեցողը չի կարող չունենալ։ Ոչով թող չը-

պարծենայ, թէ ես այսպէս արեցի, ըստ որում նա չէր կարող չանել այն, ինչ որ արաւ։ Թէ որ ուզենար խմեցնել, թէ ինչու նա չէր կարող չանել այն, ինչ որ արաւ, կամ չը լինել այն, ինչ որ եղաւ, պրա պատճառները պէտք է փնտռել նոյն մարդի մտքում հոգում մարմնում, նրա շրջապատ հանգամանքներում, բայց այս բաւական չէ, պէտք է փնտրես նրա հօր մէջ, մօր մէջ, պապի, պապի-պապի, տատի, տատի-տատի և այլն, մինչև որ կը հասնես Ադամին ու Եւային, եթէ էլ աւելի չէիր կարող գնալ, յետոյ յետ կը դառնաս, կամաց կամաց, ուշի ուշով, մեծ հեռատեսութեամբ ու նկատողութեամբ յառաջ գալ, քննելով նրանց եկած ճանապարհը, որ անցնես նրա նախնիքների գլխովը ինչեր են անց կացել, որ տեղ է նրանց ոտք փուշ մտել, որ տեղ ձեռքը կտրուել, որ տեղ ինչ արել, ինչ խօսել, ինչպէս մտածել, ինչ դիպուածների ենթարկուել, ինչից զրկուել, ինչ աւելացրել և այլն և այլն . . . Յետոյ կը տեսնես, որ դաշխարքս էսպէս եկել ա, էսպէս էլ պիտի գնայ՝, ինչպէս որ մեր սրտիցս պատերն ասել են . . . Ինչ կ՝ իցէ։ Իմ խօսքը ձեր ուսումնարանի վրայ էր՝ ես հեռու գնացի։ Ձեր վերատեսուչը շատ պարկեշտ, բարոյական մարդ ա, կարծես թէ հին Յունաստանից ելած եկած, խօսք չունեմ, բաւականի խոհեմ, գիտնական մարդ էլ է, բայց, մեղրս չեմ թափելը, դա ինձ մի քիչ մղդոի մարդ ա երևում։ Դա բաւ-

գաղափարակէ, բայց ոչ ազգային լուսաւորութեան։ Ազգն էնպէս չէ լուսաւորել, ինչպէս դա է կարծում, բայց հէչ չեղածիցը կամ շատ վատիցը դա էլի մի քիչ լաւ էր։ Շատ ափսոսացի, որ հրաժարացրել ենք։ Արէկ Գասանան ինձ մատ էր, ձեր գրութիւնը մէկ մէկ յայտնեց ինձ, հիմի գուք ի՞նչ էք մտադիր անելու։

—Մենք եկել ենք, որ ձեզանից խորհուրդ հարցնենք էդ մասին, ասացին պատասխանիքը միաբերան, որ մինչև այս բոպէն լուռ ու մունջ և ուշի ուշով լսում էին Օմահիմի խօսքերը և անդադարում իրանց մտքի մէջ, որ յեռայ իրենք էլ նոյն խօսքերը ուրիշներին ասեն և լուսաւորեն ժողովրդին։

—Ես սիրում եմ, թէպէտ զանազան խորհուրդներ ասել մարդոց, բայց ձեզ պէս ջահել մարդոց խորհուրդ տալը մի քիչ դժուար է։ Ես քանի որ ձեր չափ էի, շատ խորհուրդ տուողներ ունէի, բայց ես չէի կարողանում կատարել նրանց խորհուրդը։ Ես շատ լաւ գիտեմ, որ գուք չէք կարող չը լինել այն, ինչ որ լինելու էք, բայց թէ ի՞նչ էք լինելու, ես այդ չեմ կարող իմանալ։ Ես չեմ իմանում, թէ գուք էլի ուրիշ ի՞նչ բանի վերայ սէր ու հակամիտութիւն ունէք, որ էն աւելի լինէք, քան թէ ձեր ուսման վերայ ունեցած սէրն ու փափաքը։ Սիրած բանից զրկուելը շատ դժուար բան է, մանաւանդ երբ որ էն բանի վերայ մեծ մեծ յոյսեր է դրել, սպասում է մի երջանիկ ապագայի, յանկարծ այդ բոլորը

անհետանում է, սկսում է մի ուրիշ գործով ակա-
մայ կամքը պարապել։ անանում է, թէ ինչպէս իւր
միւս ընկերները պատուական մարդիկ դառան, իսկ
ինքը ուրիշի ծառայ մնաց։ Այս բոլորը սիրոյ սրտի
մէջ մի անբուժելի խոց են գոյացնում, մի վառ կը-
բակ, որ գիշեր ցերեկ փոթորկում, խորվում է նորա
սիրտը։ Այս բնական է, զարմանալի չէ։ Ես այս լաւ
գիտեմ, լաւ որում իմ գլխովս անցել են այս ամենը։
Ես ձեզ կը պատմի իմ գլխի անցքը, կարելի է թէ
նրանից քիչ շատ օգուտ քաղէք, բայց չեմ ու-
զում սրտիս հին խոցերը նորոգել։ Ես ինչ ասեմ հիմի
ձեզ։ Մեր աշխարքը խաւար, կեղտոտ աշխարք է,
իսկ ձեր սիրտը, զգացմունքը աւելի մեծ քան թէ
դուք ինքներդ ու Ձեր ընդունակութիւնն ու գոր-
ծունէութիւնը։ Դուք չը գիտէք ոչ ձեւանալ և ոչ
կեղծաւորուիլ։ Ոչ մի խորամանկութիւն, քաղաքա-
գիտութիւն ձեզանում չը կայ։ Ձեր բնաւորութեամբը
մեր երկրի մէջ չի կարելի ծառայ լինել։ Ձեզ հիմի
մի խօսք կասեմ միայն — գնացէք, համոզեցէք ձեր
ծնողներին, ձեր եղբայրներին, որ ձեզ օգնեն. աւար-
տեցէք ձեր ուսման ընթացքը, աւելի հասունացրէք
ձեր միտքը, ծանօթացրէք աշխարհիս մարդոց կեանքի
բնաւորութեանց հետ, այնու հետև դուք ինքներդ,
առանց ուրիշի խորհուրդի դիմելու, առանց շոլեշօլ
ընկնելու, կընտրէք Ձեզ համար վիճակ։ Ուրիշ կերպ
խորհուրդ ես ձեզ չեմ կարող տալ հիմի։ Դուք հ-

Եւրոպա չէք գնալու, որ մեծ մեծ փողերի կարօտութիւն ունենաք։ Տարին տասը-քսան օրավար արտեն ցանում, մի մի օրավար էլ որ ձեզ համար ցանեն, ձեզ տարեկան շորի, հացի ու գրի բաւական կըլի։ Ես շատ լաւ գիտեմ, որ ներանք կօպիտ մարդիք են, գործի վրայ ուրիշ տեսակ են մարիկ տալիս։ Մէկի հայրն է ասում, ոդիս կը փչանայ, էլ ինձ չի ճանաչել, միւսի եղբայրքն են ասում, թէ նա իրա համար ապայ պիտի դառնայ, մենք ըստեղ կօտ բէգաս քաշենք, ջանը գուս գայ, թոռ գայ նա էլ մեզ հետ աշխատի . . . Հին նահապետական նախանձ, կեղտ, կապտութիւն . . . Մէր չը կայ, բան չը կայ... Բայց գուք որ մի քիչ ներանց սրտովը գնաք, ներանց կապտութեան, նախապաշարմունքների վրայ չը ծիծաղիք, հոգիներն էլ որ ուզէք, չեն խնայել, ես գիտեմ ներանց խասիաթը։ Աւ հասարակ խմացած ըլիք, որ մարդի ինչ տեղը որ ցաւում է, էն տեղին որ գիպար, այնուհետև ձեռս բարով։ Բօսին որ խուլ ասես, չի բարկանալ, բայց որ ասես քօր, էգ ներա համար մի և նոյն է, թէ աչքը գանակով հանեցիր։ Լսպէս։

—Ուրեմն, ես հէնց էս օր էվէտ գուս կը գամ քաղաքիցը։ Սելով ուխտ գնացողներ կան գէպի մեր գեղի կողմը, ներանց հետ կերթամ, ասաց Աբուլթիւնը։

—Ես էլ մեր գեղիցը ապուր ծախողներ են եկել, ներանց հետ կերթամ էս օր իրիկնապահին, ասաց Մանուէլը։

—Աստուած բարի ճանապարհ տայ,—ասաց Օվակիմը և ճանապարհ ձգելով պատանի մարդոցը, ինքը ընկաւ մի խոր մտածութեան մէջ, և վերջ ի վերջոյ բացագանչեց՝

—Մեր աշխարքը, անմե՛զ հոգիք, դուք չէք կարող ձեր գլխի անցքերի առաջն առնել։ Աստուած տայ, թէ որ ողջ առողջ կը ճանաք մինչև մի քանի տարի, երբ որ ձեր եռ զարկս արիւնը մի քիչ կը հանդարտուի, էն ժամանակը կիմանաք խորամանկութեան, կենցաղագիտութեան և վերջապէս եղբայրութեան ասոյգ նշանակութիւնը, բայց հիմի ձեր հայեացքը իմ փիլիսոփայութեանս մէջ չը կայ. միայն թուքերի առաձնելումը կայ, որ ասում են „Գալիպան գօղու խարար՞“, (գժիկ ուղիղ համբաւ)։ Քանի որ գիժ էք, գնացէք ժողովրդի մէջ ուղիղ համբաւներ տարածեցէք, թէ չէ կը մեծանաք, մի մի եղբայր էլ դուք կը գտնաք . . . .

—Ա՛ռութիւն, արի գնանք էս օր մի լաւ քէֆ անենք։ Մեր տանտրոյէք գիտի էլ գնացել են ուխտ, մէնակ քուրս ա մնացել տանը։ Օտանին էլ կը կանչենք մեր մօտ, մի լաւ քէֆ կանենք։ Ո՞վ գիտէ, թ՞ուչ կանոյնի գլխներովս շո՞ւտ կը տեսնենք մէկ մէկու, թէ՞ ուշ, —ասաց մանուէլը, երբ մի քանի քայլ լուութեամբ հեռացել էին Օվակիմի տանից։

—Երանի՞ քեզ, Մանուէլ, որ քէֆին ա ապրիդ էրեւում . . . .

—Ցօ ինչ ես գարդ անում, բա չը լսեցիր, որ Օվակիմը ասաւ զօռով բան չի ըլի, ամէն բան իրա կարգովն ա գնում, թէ որ ուզում ես պառնան իմանաս, գնա Ադամի կշռիցը դէպի մեզ ա՛յրի։ Ինչ որ գառնալու ենք, չենք կարող չը գառնալ։ Գրծանք, գնաց։ Սուտ հօ չեն ասել թուրքերը, թէ „Օրաջաղա չարա եօխ“ (լինելու բանին ճար չը կայ)։ Օվակիմի փիլիսոփայութիւնն ու մեր պապերի ճակատագիր ասած բանը մի նշանակութիւն ունի իմ մտքով։ Զանազանութիւնը այնքան է միայն, որ Օվակիմը բնական օրէնքներով է հասասում իրա ապօրինայի ճշմարտութիւնը, իսկ մեր պապերը գերբնական։ Մենք էլ որ կը մեծանանք, լաւ ուսում կառնենք, ուրիշ տեսակ կը հասասանք, կամ կը հերքենք բոլորովին։ Բայց հիմի քանի որ շատ չենք իմաստանալ, գնանք մի քիչ քէֆ անենք։ Աշխարքիս գարդը հօ մեզ չեն տուել։ Մի գլուխ ունինք ինչպէս ըլի՝ կը պահենք։ Նոր չենք հագնիլ, հին կը հագնենք, ո՞վ ա մեր ձեռքիցը բռնում, մե՞նք չենք մեր գլխի տէրը։ Ուրիշի ապէրքը որ մեզանից լաւ են հագնում, նրանց գլխի պատուիրը գիտենայ մեզնից լաւ են սովորում այ։ Սալախանի նման եաղլու ուտելով ման են գալիս։ Հրէն Ղազախեցի Մարտիրոսը, որ մեր կիսի գաղամ բան չի գիտում, փարժատուն ա բաց արել, երեխէք ա կարգացնում։ Էն օրը պատահեցի, ասում եմ, ինչ պէս ես, ուսումնարանդ ինչպէս է յառաջ գնում,

թէ դլուխ, փոքր Աստուծ, կիսին չեմ արժանի։ Հիմի մատ յիսուն աշակերտ ունիմ։ Դեռ չորս հինգ ամիս անցած կըլլի, բաւականի լաւ կարդում գրում են։ Աշակերտներիս հայրերը ամենքն էլ շնորհակալ են։ Մի կիրակի օր միտն ա հրաւիրում, մի ուրիշ օր միւսը, ես էլ փրքփում եմ իմ մէջ, սկսում եմ գրաբար խօսիլ, որքան կարող եմ խրիմ ին ու ձարտար, որ կարծիք չտանեն, թէ ես շատ գիտուն չեմ, նրանք էլ հէնց իմանում են, թէ փիլիսոփան ինձ նման կըլլի . . . Բայց հիմի եմ ափսոսում, ասում ա, որ ռուերէն չեմ գիտում։ Նոր սկսել եմ սովորել, բայց չեմ կարում էնպէս արտասանել, ինչպէս հարկն է։ Մտիկ եմ տալիս, ասում ա, Իրիցփուխովի բառարանումը, որ տեսնեմ որ տառի վերայ է շեշտ գրած, բայց միևնոյն ամեն մի բառի մտիկ կանեմ, գրելիս մազը կը սիպոտակի։ Ցնորոյ ինձ խնդրեց, թէ „Մի գաս դրուգդէտիս բառերի վերայ շեշտեր գրնես“։ Ես էլ գնացի դրի։ Ասում եմ „Դու հայերէն լաւ սորվացրու, ռուերէն էլ երբ ըլլի կը սովորեն, նրանք ռուս հօ չպիտի դառնան։ Թուրանուիթիւն սորվեցրու, որ իրանց առուտուրի բանը լաւ գիտենան։ Թէ „Թուրանուիթիւն չեմ գիտում, բայց հայերէն լաւ եմ սորվացնում, իսկի մտերիցը չեմ վեր կենում։ Հրեն, ասում ա, տիրացու Գէորգը, կազմաբար Մարգարը, երկենամիրուք ամբարէն էլ վարժատուն ունեն, երեխէք են կարդացնում, բայց ափսոս

նրանց տուած փողը։ Մի օր մեռել վրայ, միւս օր կնունքի, մէկէլ օր մի ուրիշ բանի, էսպէս քէլեխ ուտելով մեն են գալիս ասում ա, երեխէքը տուն գառած իրարու մէջ են ուտում։ Ի՞նչ վարժատուն, խոզատունը քեզ օրինակ, ասում ա։ Օրը մի սահաթ, ասում ա, կամ կէս սահաթ անջաղ են նստում մօտրնեերին, էն վախտն էլ լինէյկէն ձեռքնին առած՝ դարդակ բղաւում են սա՛՛՛ա կա՛՛՛ցէ՛՛՛ք։ Էլ ուրիշ մի բան չեն գիտում։ Մի քանի տէս մի այր բեն են սարվացնում։ Մի քանի տէս էլ Վրացու անապատա ու էն էրթի փուլի ին օրի փուլի կան էրթի բիստաբ . . . .

—Ծիծաղ ա, ծիծաղ, Ա՛ռութին, տեսնում ես, ինչպէս մաղրիք կան աշխարքիս վրայ, բայց, Օվակիմի խօսքով, գրանք էլ չեն կարող էգպէս չը լինել։ Մարտիրոսը ինձ շատ բաներ պատմեց։ Ասում ա, „էգ տրնատակները էլ չեն ասում, թէ էն վաղ էր, որ էլը կաղ էր“։ Լինէյկով երեխանց ձեռներին ծեծում, առնացնում են, նրանք էլ փախչում են գալիս ինձ մտա մտնում, ըստ որում խմացել են, որ ես չեմ ծեծում։ Բայց էն ախմախները քթնները վեր են քաշում ինձ վրայ, „գո՛ւ, ասում են, մեր աշակերտներին գոչանում ես, խափում ես, մեզանից հանում մեր հացը կտրում։ Ես էլ ասում եմ, ասում ա, „բաց քնեցէք, չը մրսէք . . . .

—Տե՛ս, էսպէս մարդիկը որ հաց են գտնում, մեզ ինչա էլել, փառք Աստուծոյ, որ գրանց կը տանենք ջուրը, ծարաւ եղ բերենք։ Ինչի՞ ենք գարդ անում։ Ասկի որ չբլի, բա գրանց պէս էլ չենք կարող մի բան անել։

—Լաւ մարդոց ես օրինակ առնում քեզ։ ասաց Արուխիւնը, մարդ որ էնպէս փարժագնա չբլի, որ էս քաղքում հաստը չբլի, ինչ լազաթի ունի։

—Ա՛ռուխիւն, դու մի ադուեսի դաղամ էլա խելը չունիս։ Ադուեսը որ ադուես ա, բերանը որ հաղոզին չի հասնում, ասում՝ ա՝ խակ ա՝։ Մենք էլ նրա նման կանենք, ոլրծանք գնաց . . . . .

—Ա՛րի յետ իմ սատանայ . . . Մոլիս Մանուկ։ Մենք ադուէս ենք, իմէ՞ բանական մարդ։ Մենք պարտական ենք դէպի յառաջ, յառաջ, Ամ անդր յառաջ, մի՛ ձախ, մի՛ յաջ, դէպի կատարեալն և դէպի բարին, որ անհրաժեշտ լցուցանելու պարտք է մարդկային . . . .

ԳԼՈՒԽ Ժ.

—

«ԳԻՆԻ ՈՒՐԱԽ ԱՌՆԷ ՋՄԱՐԴ»

(Հեղինակը նկարագրում է մի մեծ ահեղ և տխուր իրադարձություն)

Դէ՛ շո՛ւտ արա, Հռոմանիմ,—ասաց Մանուէլը իւր քրոջը,—սուփրէն գցի հիմի ոտքի որ ա Արուբիթիւնն ու Յասմէն էլ կը գան։ Էսօր պիտի մի բան քէֆ անենք, խաղ, ասաղ, Քեօսաղլի, մու խամբաղ գիտի պիտի իրարու խառնենք։ Դու չես գիտում, մեր Արուբիթիւնը շատ խաղեր ունի հանած, ու գուժ եմ էս օր մի քանիսն ասել սամ։ Շատ զարդ անող աղջիկ ա, կասենաս աշխարքիս զարդերը գիտի էլ դրա շրջանքին են դրել։ Էս օր իրիկնապահին պիտի դուս գընանք քաղքիցը, ես էլ, դու էլ։ Ափսո՛ս, որ մեր ճամփէն մէկ չէ, դու պիտի գէպի արևելք գնայ, ես գէպի հարաւ . . . Դէ՛ շո՛ւտ արա, փութա վեց վեց ա անում . . . (երգում է)

Նգրարէք մի շուրջ ժողովիցէք.
Քաջ Հայոց կերպի կոնծեցէք . . .

Հռոմանիմ ջան, գինի, գինի . . . Էս օր գինի պիտի խմեմ անպատճառ, Արուբիթինին էլ պիտի խմացնեմ։ Դա, զարդ ա, գինի չի սիրում, ասում գինու էլ կը

հարփի, որ մի քիչ խօսացնես, ջզրացնես, բայց ինչ կուզի ըլի, գինի ուրախ առնէ զմարդ։ (երգում է) Բաժակներն առնում, եղբարք, լիք լիք բաժակներ գինով...

—Արութիւնը խաղ չի ասել, սուտ ես ասում, աստաց Հոխոխիմէն։ Դա գինի էլ չի խմում...

—Դու չես գիտում նրա խասիաթը։ Որ ասես պոշըդ գեղ ա, խոր կը թաղի, պէտք է ջզրացրած... Հրէն գալիս են, շուտ արա, շուտ արա։ Էս գնամ Օսանին առաք, փառաք ներս համեցէք անեմ...

—Բարով, բարով, Օսանայ օրհնեալ, որ գալոցըդ ես... Համեցէք, համեցէք վերև, էն փափուկ տեղը ես զասրդի քեզ համար եմ պատրաստել...

—Ախչի, Հոռոմիմ, Մեր Մանուէլի պէս ուրախ ու հանաքչի տղայ չեմ տեսել, գեղի տղայ ու էսպէս, էս մի զարմաչջ բան ա, ոնց որ ասած ա „Քուրդ ղզիղան բէյլա օղլան, Ալլահ մին բարաքեաթ վերսին...Մեր Արութիւնը չի, կասենաս աշխարքիս դարդը սրա շինքիցն են կախ տուել....

—Դու թուրքի մասալ ասեցիր, մինն էլ ես ասեմ, ասում են „Աթ աթասընա, օղուլ դայրսընա“։ Եթէ մի բիձայ ունեմ գեղումը, նա գեռ բերանը չը բաց արած մարդիքը ծիծաղում են, չունքի գիտեն, որ նա բերանը բաց արաւ թէ չէ, անպատճառ ուրիշներին ծիծաղու կը թիլացնի, ինքը սառած կը կանգնի միթամ թէ ոչինչ բանից խաբարութիւն չունի։ Մեր Մանուէլը գրուատ նրա ա եկել։ Սաքի գու Արու-

թինին ինչի՞ ես մեղադրում. դու էլ նրա կէսը չես, կասենաս մի խնձոր ըլեր մեջիցը կէս արած, թէ խասիաթով . . . .

—Սպասի՛ր, սպասիր, Հռոմանոս, խօսքը կարեց Վառնուը: Գիտէք ի՞նչ կայ: Ես ձեզ մի նոր բան ասեմ: Ո՞վ ի՞նչպէս կայ, չի՛ կարող ուրիշ կերպ լինել, թէ որ ուզում էք պատմեմ իմանալ պիտի երկաթէ արինի հագնէք, (էն վաղուայ հէքաթի միջի էլած մարդի նման, որ Առածու մօտ ա գնացել,) մի էրկաթէ գաւազան էլ ձեռքներիդ բռնէք գնաք մեր պապ Աթամի մօտ, որ ընդհանց խարար բերէք . . . Հա՛ հա՛ հա՛ հա՛ . . . Լնպէս չի՞, Ա՛ռութին:

Արութիւնը ժպտաց:

—Հռոմանոս գինին բեր, գինի՞ն . . . (երգում է):

„Ա՛յս բերդն է հայոց երկրին.
Հայաստան անկած նոյնն,
Հայոց աղջիկ է քաղել,
Փնքուշ ձեռներով քամել . . . .

Վո՞նց ա, վո՞նց, Օ՛սանայ, լաւ եմ երգում, թէ՞ չէ:

—Լա՛ւ, լա՛ւ, շատ լաւ ես երգում, ասաց Օսանան: Աղջուրդ անսպառ: Ա՛յա մի Հայոց աղջկերքն ասա, մի բարձր, կլկլացնելով . . . .

—Ես սահաթիս, գլխիս վրայ, ես ըսկի քու խաթրը կը կատարեմ. . . Սպասիր մի թաս գինի կոնծեմ, մէկն էլ Աբեմնին խմացնեմ, որ մի քիչ քէֆը բաց ըլի, ձայն պահի . . . Փորս վեց վեց ա անում, մի

քիչ էլ էս չխրթմիցն ու

մ, մի էրկու թիքայ էլ խորոված ելեր կաշնեմ, խոնարհ համբ տեսնեմ, ձկան հոտն առնեմ. . . Ա՛ւհ ա՛ւհ ա՛ւհ ա՛ւհ . . . Էս խորոված ելեր թշթշում ա, թրթրթրում. . . ձեռներդ ուաեմ, ձեռներդ, շոռոմեմ, եարադանիդ գուրբան, քուրն էլ բլի, քեզ նման. . . Ցо՛, Ա՛բութիբ, ի՞նչ ես ուզելդ կիսել, ձեր տանը հո չի՞նք. բէփ արա, տա՛, փրաս էլ ունենք, ի՞նչ ես կորցրել գունիա բէշ գիրն գրբ, բէշը գա գարաս Թոզ նա գաղդ անի, ով չիմանում ինչ ասել է կեանք . . . Շոռոմեմ, հազար փէշէն ի՞նձ տուր . . . Ա՛բութիբ, Ալլահվերդի . . . .

—Մի, վէր դի, ասաց Ա՛բութիբը ժպտալով:

—Գիտես ո՞ւմ կենացն եմ խմում. Ա՛բութիբ, որ գիտենաս, խեղճն կը խմես:

—Ո՞ւմ, ինչի՞ չես ասում:

—Նրա էրի՛, էն որ ես դու գիտենք: (քոյրերը աչքով են անում իրարու):

—Դէ բաս որ բանից ա, մի բաս խոզ ասա, կբխմեմ:

—Ի՞նչպէսը կուզես:

—Չէնց ինչ որ բերանդդ կը գայ, թէ կուզ մի հայ աղջկան երդ: Ասում գիտաքիրի նման մի մուխամբաղ:

—Քու հոգուն մատաղ, Ա՛բութիբ, ես ըսկի քու խաթիրը կոտրեմ, որ խաղ էլ չը գիտենամ, էս սահաթիս աշքդ կը դառնամ քեզ համար . . . Ինպէս

մի խաղ ասեմ որ, Ազգար Հաթամը էրազումն էլ չըլի տեսած: Ա՛նկաղ դրէք ամենաղ դրէք, Հոռոմիմ, Օսմանայ, մուխամբազ եմ ասում: (երգում է)

Բացուել եմ վարդի պէս, բայց չունիմ տխակ,
սիրահար խանակ,
Ղորա տեղ երգում է մի ուրիշ թուշնակ
բուի եղանակ,
Չեմ տեսնում ղորա մէջ ոչ մի ժամանակ
սիրոյ նշանակ:
Սիրել մինչև ի մահ շատն է խոստանում,
երդմամբ ուխտ գնում,
Բայց այս ուխտի վերայ շատ որ չէ ունցնում,
մէկ էլ ես տեսնում
Պատրաստած քեզ համար սուտկայի վանդակ:
ան, թշուառ վիճակ:
Ասում ես, ,,Այս ինչ է, այս ինչ արնցիր,
դու ինձ գերնցիր,
Շողոքորթ խոսքերով ինձ գրաւեցիր,
վերջը խաբնցիր՞՞:
Ասում է, ,,Այսպէս է աշխարհս բոլանդակ:
դու հա՛ չես մնում՞՞:
Դէ լռիր, Հայ-Ազգիկ, էլ չես գոմական,
և ոչ անմերման,
Պանիր սրտիդ խոցը մինչ որ քո մահուան,
մացուր գերեզման,
Ցասես ուխտապանցիդ մի խաչ հանիստակ,
չը դառնաս ատակ....

—Ապրես, ապրես, Մանուկ, շատ ապրես, Ասուած մուրազդ կատարի,—ասաց Օսմանն, ազուխը

արտասուքից աչքերի վերայ գնելով, որ նկատելով Մանուէլը, ուզեց ծիծաղելով ուրախացնել Սանի սիրտը։

— Հա՛ հա՛ հա՛ հա՛ . . . Բոմանե, Ա՛բութիւն, բոմանե . . . Տեսա՞ր, իմ երգը ինչպէս ներգործեց Սանոյի վերայ . . . Բաս աշխոյժ եմ էլել . . . Չէ՛, ես Աստուծով, լաւ պօէտ կը դառնամ . . . Շեքսպիրն ջերս կը գնեմ, Բայրոնին էլ հետը . . . Տօ՛, հայի հոգուն մեռնեմ, հայի պէս ճարտար, տաղանդաւոր ազգ չը կայ աշխարքիս երեսին, բայց ի՞նչ անի խեղճը, որ չի կարող ինպէս չըլլի, ինչպէս որ հիմի նա կայ։ Ես իմ Աստուծը, շատ գրուատ ա տուտ մեր Օվահիմը . . . Ա՛սանայ Ջան, քու կենացը, Աստուած սիրտդ ուրախ պահի, Աստուած որդիքդ քեզ բաշխի, գիւղուանց կարմիրն էլ կտպես, Հռոմանիմ Ջան տաղ ըլիս, մարդդ ապրի, սկսիլդ հոգին Աստուած առնի, արքայութիւն տանի, Ա՛բութիւն Ջան, էլ ի՞նչ ասեմ, որը որ լաւ ա, թող էն անի Աստուած, գէ՛ վեր կալ թատդ, Ա՛սանայ, դու էլ քոնը վե՛ր կալ, Հռոմանիմ, դու քոնը վե՛ր կալ, մի լաւ մուխտարաղ պիտի տանեմ, չէ՛, չէ՛ . . . Հայոց աղջիկերքն տանեք, Ա՛բութիւն, հը, միտանեն։ (Արգում են)։

Հայոց աղջիկներ ձեր հոգուն մատաղ,
Որը միտաս էք գալիս, տուտ եմ ես ձեզ . . . .

— Կենցեն Հայոց աղջիկները, բղաւում են սրատանները միաբերան, երբ վերջացնում են երգը և բաժակները դարդակում։

—Ապրէք, ապրէք, ասում են քոյրերը միաբերան. արտանց ուրախանալով, որ այնպէս ուռուճեան եղբայրներ ունեն։

—Կարաբ Հայոց աղջկերանց նման սիրուն, շարմագ էլ կայ աշխարքումս, թէ մենակ սրանք են, որ կան,—ասաց Վանուէլը։ Ուրիշ ազգի աղջկերքը, որը շէկ ա լում, որը գեղեցած, որը սև, որը քիթաս, պատ՝ս, որի շլինքը կարճ, որի մէջքը թիկունքի հետ հաւասար, մի խօսքով դիմի էլ անճոռնի զարդեր են... Հայ աղջիկայ վառվռուն, թուխ մեծ մեծ աչքերը, զարմանով քաշած ունքերը, լուսա շլինքը, բարակ մէջք ը շահմարների նման թիկունքին փռուած ծամերը, նրա բարակ բարակ պռոշները, մարգարտի նման ատամները, մեղմի պէս մատները, մատամատ դոշը, շամամ ծծերը . . . Որ ասկի չըլի, չըլի, նրա մենակ մի բոյ ու բուսաթը աշխարքիս հետ չեմ փոխիլ... Ի զուր հա չեն մեր աշրդները ջուռնուն գալիլ, նրանց էշիս ու սիրովը վառուիլ, հէնց գովիլ են, ու գովիլ, էլ ուրիշ մի բան չեն տեսիլ . . . Եվ ուրիշ ի՞նչ պէտք է տեսանեն, մի բան որ տեղն ու տեղը լաւ ըլի, էլ ի՞նչ խօսք ունիս, պիտի առաջին շոքես, ձեռներդ սրտիդ դնես շլինքդ ծռես, ապալես, պաղատես, գովես, փառաբանես, մինչև բերանիդ ջուրը գնայ, զմայլիս, վերանաս, աչքերդ մթնի, ուշաթափուիս,վերջը ընկնիս, գերը ասա. . . Այ՝ ինչպէս։ (Արգում է)։

1) Նազանի բարի, հաւէս արի, զուզիմ քիզ ճարի
Խնդիր ունիմ, մատս արի, մի շարշարի, մի քեզի զարի
Ջարի բնութիւնով, ինձ էրնիւով, շատ զայ իս արի,
Ինձ զայ անելով, թիշտանանելով, ինչ պիտիս ճարի,
Գիտիմ, ճար չունիս, իմին զուն իս, շատ ուայի արի։

2) Էշխէզ իս հարի, միշտ իմ յարի, սիրատս ունիմ նարա,
Իմ նարա ջանիս մէ ուանի անիս, ուանդզ ինձ ճար ա,
Քանի չիս անում, կամք չիս անում, ինչպէս ջիզար ա,
Ջիզարս է նարա, փարա-փարա, կանչում իմ հարա,
Հարա կանչելով, քիզ մատ զալով, էկա բնզարի։

3) Անմահական ծառ իս, անուշ բար իս, թարգա նուրար իս,
Լուս, անոգին քար իս, շատ պայծառ իս, խնդրիմ զարդարիս,
Ինձ քիզ սիրայնիս, ուրախացնիս, էլ չշարշարիս,
Իմ նարա ջանիս զանրանա անիս, կամքս կատարիս
Դարմանս զուն իս, ջուտաքի չունիս, իզարար տաս, արի։

4) Ինար, քս զուշն իմ, նս բիւրբիւլ իմ, ջուանուն իմ զատի,
Գիշերվանն ջան չունիմ, էլ հալ չունիմ, էշխէզ իս վատի,
Էշխէզ վատուիլ իմ, ատրտուիլ իմ, խատաս իմ զատի,
Մխարս ցրուիլ է, մոլորուիլ է, խիլքս իս ատի,
Խիլքս առած չանիս, մէ ճար անիս, խաղը ասիս բարի։

5) Նազուքի-նազանն իս, լալ, մերջանն իս, շատ անուանն իս
Անուանատիանէզ, բարիուքիանէզ, ինձի զայ չանիս,
Ինձ Նազխատանով, էշխով զոլքս, քարը հիւզ ատանիս,
Կամ չշրիս ջանիս հոգիս հանիս, քարը ինձ բանդ չանիս,
Ինչ զուզէ անիս, թէ կուզ ապանիս, կամիմ քիզ ճարի....

—Կնոջէ Նազխատանովը, մեր ազգային երգիչը, բազմանկին պատանիքը մերջացնելով սարան Նազխատանանցի մանխատարը, և կանցնին նորա կնոջը։

—Մանուէլ, քու կենացը, Մանուէլ կանչեց Ցառնան, Աստուած քեզ բանից ուրախ պահի միշտ, Ա՛բուիմին ջան զբաղասա։ Ձեր երկուսի կենացը։ Աստուած ձեր սէրը անխզելի ու հաստատ պահի, իմ գանձերիդ արժանի ըլլիք, դուշմանի աչառով չըլլիք։ Ա՛ստուածատուր, հոռոմներիմ . . . .

—Հա՛ հա՛, հա՛ քրքզաց Մանուէլը։ Նաշխուշնոմի անուամբ մարիցս ընկել էր, Ցառնան միտս գցեց... Աստուածատո՛ւր, Աստուածատո՛ւր . . . Քու տունը շինուի, Ա՛ստուածատուր, էղբան շատ կը խոսնե..., Տո՛, Ա՛բուիմին, էդ Աստուածատրի տաղանդն էլ ա աստուածատուր։ Դա վարժատան երես հօ էն վախան ա տեսել, որ, Արոմեանցի ասած, այր բենը գարով են ըլել բռնում, գիւլով վէր գցում։ Դա խաղ հանելումը օխտոր Ակյաղ Ջերը կը դնի, մի տանտիրան էլ Նիրան ու Շիրին . . . Բա դու դրա խաղերիցը չես գիտե՞մ։ Նա հօ քու ուսանէն ա, քու խարիֆանը. բա միտդ չէ՞, որ մի օր քեզ ասեց „Հորիմը որ կոմի առաջն ընկնի, գէլը կուտի՞. դու, ասում ա, որ կաս, իմ հորիմն ես, իմ առաջը մի՛ ընկնի . . . .

—Դրա խաղերի դաւիմարները գիտի էլ իմ մտան ա, ես որ չը գիտենամ էլ ո՞վ կը գիտենայ . . . Բայց նա էդպէս խաղերին, որ դու ասեցիր, չի հաւանում ինքը, էդպէսները, ասում ա, օրը հազար կը շինեմ։ Մի խաղ, ասում ա, որ աւալ-ախբեր չըլի, դոդաղ-դաղմաղ չըլի, գիլ-իմարփանմաղ չըլի, ես

ինչ գիտեմ, առանց վեվի կամ առանց մի ուրիշ տառի չըլլի, ասում ա, նա ինչ խաղ ա . . . .

—Էդ ինչ ես ասում, ած, հարփած ես, թէ տէրն ես տալի . . . .

—Ինչպէս թէ հարփածես, ես քեզ բան եմ ասում, հարփած ես թէ որնա: Հարա ասում ես Շեքսպիրն ջէբս կը դնեմ, Բայրոնին էլ հետը . . . .

—Տօ, գիլ թարփանմազ, գոդաղ գազմազ խաղ կըլի, էդ որ Բայրոնն ա էդպէս խաղ հանել, որ Նաշխուտնովը հանի . . . .

—Դու էլ Բայրոնի անունը լսել ես, մեր Սմբատի նման, բայց չես գիտում, որ դէշագրն բոյուգի թովլագա գալըվ տրվա: Ղորդ են ասել թէ «Զոխ ագամրն մէվլի վար աշըդլըխաա, խարարը ելօխ դարդ ուսարքնանա» Հիմի դու ես, դու ինչ գիտես, մեր աշըդների մէջ ինչ կայ, ինչ չը կայ. դու մի մուխամբազ գիտես, ես մի քանիսը գիտեմ, ինձանից էլ հօ էնքան եմ դուս տուել, որ մի եքա գաւթար էլ էն կը գառնայ: Հիմի մի աշըդ չը կայ, որ ես նրա անունը լսած չըլլիմ, ու նրա խաղերը գիտենալիս—Քէշիշ օղլի, Թուջար, Ալլահվերդի, Սալմասալի Աբութիւն, Աշըդ Զաւդի, Աշըդ Բանդի, Եաղուբ օղլի, Սարգիս օղլի, Շիրին, Մաւջութ, Զրաղ, Զուլայի, Շոհլայի, Նալբանա օղլան, Ղազար օղլան. Քեամալ օղլան, Սայեաթնովա, Քուչուկ-Նովա, Գիւրջի-Նովա, Սանամ Նավասի, Սէհրանի, Նիրանի, Սեվիլ-Պօղոս,

Սեփիլ-Սիսակ, Սեփիլ-Արաքիլ, Սեյյաղ, Ազբար-Ագամ, Թուրինջ, Շամշի-Մելքօ,—հիմի գանք հէքաթներին—Բօռօղլի, Արբաս, Շահմար-Ալի, Աշրդ Ղարիբ, Բեարամ, Սայեադ, Խուրշուդ-բէգ . . . Է՛հ, էնքան կան, որ մի շարաթ գրանց անուններն ասեմ, չի հասնել, ա՛ռ ձեաց, որ գրանց խաղերը, որ ո՛չ թիւ կայ, ո՛չ համար . . . .

—Պա՛ պա՛ պա՛ պա՛ . . . Ափսո՛ս, որ սաղ ածիլ չես գիտում, թէ չէ՝ լաւ մարաքա կը սարքէիր մեր գլխին . . . Բաս որ բանից ա հարփած չես։ Էլ ինձ վրայ ինչի՞ ես բարկանում։ Ես չեմ կարող չը լինել էնպէս, ինչպէս կամ, բայց որ բացատրես, մեկնես, ասած խօսքերդ, ես չեմ կարող չիմանալ, չըմբռնել, բան որում խելք ու միտք ունիմ և մեծ հեռատեսութիւն։ Դէ, բացատրի, ի՞նչ ասել ա աւաղախերը ես ասում, ի՞նչ ես ասում։ Ա՛սանա, Հռոմսիմ, անկաջ դրէք, Արութիւնը պիտի մեզ Աշրդների ճարտասանութիւնը սորվացնի։ (Ականջ են դնում ամենքը)։

—Աւալ-ախբեր բառը թուրքերէն է, կը նշանակէ սկիզբն և վերջ, կամ սկզբնավերջ, էսպէս խաղի առղերը ինչ տառով որ սկսում են, նոյն տառովն էլ պիտի վերջանայ . . . .

—Զոր օրինակ, ես չեմ հասկանում, էդպէս մի խաղ ասա, որ տեսնենք, ասաց Մանուէլը։

—Բայց որ ասեմ կը հասկանաք, դէ անկաջ դրէք։ (Ասում է)։

Չնայ իրան ջանաքի թափարմ ջանանքի թաջ,
Ջան գնալդի ο սահաքոտա նսար, աջ,
Ջոլրաքի . . . .

—Տե՛ս, ի՞նչ ես ասում, հայերվար ասա, հայերվար, Աստուածատրի խաղերիցն ասա:

—Լա՛ւ, դէ անկաջ դրէք: (Ասում է)

1) Ջալանիր, նաւջիւան նազանի, սիրով ինձ անիս իլլաջ,
Ջիզարս էշխէմէդ վառուել է, ուանմով ինձ անիս իլլաջ
Ջնուզ համ չիս, այ բէյմուրվաքի, ուր թոդիր այլոց մոնտաջ,
Ջազա տալոմդ բնզար էկայ, վախտով ինձ անիս իլլաջ,
2) Ջիւան ջան իս, անենման իս, մանուշակ իս, կապած փունջ,
Ջուխտ աչքիրդ է վառ. շամ-չրազ, նանախս ուր իս մանում քունջ.
Ջուռաքի արա մէկ իզրար տուր, մի լինիր համաչա մունջ,
Ջունուն իմ տատիկ ակրիցդ, շուտով ինձ անիս իլլաջ:
3) Ջնէլ ժամանակա իմ խնդրում, քանի ժամ իմ դալար դէջ
Ջանոտ արա սիրով հասատատուինք, շուտ զոյանայ բար ի մէնջ.
Ջանլաքի ակս զազար մի տար, ինձ մի կամիր չար, բէվնջ,
Ջանս խնայիս Նաշխուանովիս, քեզմով ինձ անիս իլլաջ....

—Ցնանում է՞ք, ամբողջ խաղն սկիզբն էլ ա ջէ, վերջն էլ: Դէ հիմի անկաջ դրէք դիլ թարփանմազը ասում—Դիլ թարփանմազ բառն էլ ա թուրքերէն, կը նշանակէ լեզուն չի շարժիլ: Դիլ թարփանմազ խաղի խօսքերը մարդի լեզուն չեն շարժում: Օրինակի համար մինն ասում Նաշխուանովի խաղերիցը: (Ասում է):

Բարա ու�մը կայ. ուտ կամուտ իմ, մէ վա՛ է,
Մըգամ քի հատուտ իմ խատիով ու գանիով,
Իմ համբաս է խատիը, կամը մէ վա՛ է.
Կամուտիմ քի ուզիզ վարիաքով, բաղով։
Քի իմ կամուտ, ենկ քա կամաս, ով աղա,
Կամուտ իմ քա բուգով բուխատով խաղա,
Քի իմ կամուտ, ենկ, հիմա ա, կամ վաղ ա,
Կակուզ խուտով պահէ, քիմով ու համով ....

—Սպասի՛ր սպասի՛ր, Ա՛բուֆիւն, միջահատեց Մանուէլը ձեռքը ճակատին դնելով բանիա... բանիա... ուտ... ուտ... բուգով, աղա, վաղ ա... Էս ի՞նչ զարմացք ա տե՛ս, գործդ որ լեզուն չի ժամ գալիս....

—Դեռ ո՞ր տեղ ես, շատ հեռու ես, Մանուէլ, հարա որ գողաղ գագմաղը լսես, ի՞նչքան կը զարմանաս։

—Էդ ի՞նչ գաղ ա, քէ մատաղ, մի էդ էլ ասա տեսնեմ... Ա՛նկաջ դրէք, անկաջ դրէք, Օ՛սանա, Հոռոմիտ...

—Գողաղ-գագմաղ բառն էլ ա թուրքերէն, կը նշանակէ շրթունքն իրարու չեն դիպչիլ։ Քէշիշ օղլին ամենից՝ շատ ա ասել էսպէս խաղեր, ուրիշ շատ աշքդներ էլ են ասել, բայց նրանց ասածի միջին էնքան միտք ու զօրութիւն չը կայ, թուրքերէն են ասել կամ փարսի-արաբերի մի տեղ խառնեա թէ չէ, մնա ասածներիս լեզուով, որ լսողը իսկի մի բան չը հասկանայ, վանց որ մեր հիմիկուան գրքերը

բարար գրագիրները, որ մի քանի հազարամեակ բառերի մեջ հապճեպ ու ամբարտակներ դնում, որ իրանց միքանի, գառնալ խրթին շարադրություն, որ սառնանին և մի միջոցը մի բան չի հասկանալ ընթերցողը —

Ա դիլի նար, ով դատարկի աչքեան,
Անբդիանան գրնուա էլլա նար նարա.....

—Ա՛բ, ինչ ինչ, հայերէնն սատ, հայերէնը.....

—Ջա՛ն, հայերէնն էլ որ ասեմ, էլի մի և նոյն սատ բան չի գալս գալ միջոցը։ Դէ ամենաջ գրէք նաշխարհի գոգալ գաղմանդեցը երկու տող ասեմ արիանակի համար։ (Ասում է)։

Ամա հոգ, ջղի, հայրդ ա, հարգա,
Ա՛յ, ցդիա է, հոյ ազա հարգ ա.....

Այս խաղը մի երկար խաղ է և ունի վեց նշանակություն։ Մէկ՝ որ այդ աւանդական է, երկրորդ՝ որ գոգալ գաղմնալ է, երրորդ՝ որ դիլ իարփանմանալ է, չորրորդ՝ որ բառերը շատ խրթին ու անհասկանալի են, իբրև հայերէն են, բայց ոչ գիտէ, որ քունջ ու պուճախից է դիմել, բառարանի մէջը չը կայ ասածը, հինգերորդ՝ որ բառերը հասկանալուց յետոյ, հիմի էլ պիտի միտքն ու ակնարկությունը հասկանաս. յաւելյալ սորա վերայ եթէ կամենում ես, և վեցերորդ՝ որ էդ խաղի մէջ օրան անգամ ոչինչ բառը գանվում է, բայց ամեն մինը ջոկ նշանակություն ունի։ Արինակի համար ես սրա մի տողը մեկնեմ, ամբողջ խաղը մեկնելու համար մի շարաթը

բաւական չէ՞ Դա ասում ա, էսպէս խաղերը որ կան, ապարար են, որ գցես աշղի փորը, օխտը տարի չի հալուիլ . . . .

Անա հզէ, յդի, հայոց ա, հաղ ա.

Ահա՛ (ահա, հրէս) հզէ՝ (զարարագրոց լեզուով կը նշանակի ճանապարհ) յդի՝ (երկուհոգիս) հայոց՝ (հայել, նայել, մոիկ տալ), հաղ ա՝ (հաղ ա, խաղ է, երգ է և իւր երգի գուռն է, որ աշխղնները ասում են գուփիա, այսինքն այն վերջաւորութիւնը, որով վերջանում է նրանց խաղերի բոլոր անների վերջի տողը)։ Հիմի սրանից ի՞նչ գուրս եկաւ։ Այ ի՞նչ՝ —Ահա՛ ճանապարհ երկուհոգիս մոիկ տուող երգ է։ Կամի ասել՝ Ահա՛ ճանապարհը, որոյ վերայ երկուհոգիս կնիկը նայում է։ Բայց սրանով ի՞նչ է ուզում ասել։ Այ ինչ։ Էս տեղ հանձարաւոր բանաստեղծը ակնարկել է Սողոմ Գոմարի ճանապարհը, որով Ղոմարը և իւր կիներ ու աղջկերքը փախչում էին, և նրանցից միները, Ղոմարի կիները, որ, ինչպէս ասում են, այն ժամանակ յդի էր, (որից պիտի ծնուի նեռը) յիսա է մոիկ տուել . . .

—Ա՛հ, դրա տունը շինուի. ես էլ եմ ասում ինչի՞ ա էդքան շատ խօսում. . . Ա՛սանա, Հոռոմսիմ, տեսնում է՞ք . . . Աստուածատուրի կենացը. Ա՛ռաքելին, ալլահվերդին քու մօտ եմ, Աստուած դրան աւելի շնորհք տայ։ Աստուած դրա սիրտը լուս

գցի, լաւ, գիւղ սուտ, լաւը զորդ։ Ա՛ռութիւն, ի՞նչ ես կարծում, տաղանդ ասած բանդ, առանց ուսման, առանց ուղիղ գաղափարների էնպէս ա, վոնց որ դեղ ու մեղրը շան տկու

—Աբա ասա, տեսնեմ ի՞նչպէս ես գրել, հօ անգիր գիտես, ամա ի՞նչ եմ հարցնում։ Քու միտքը սուր ա, կը գիտենաս . . . Անկաջ դրէք, անկաջ դրէք, Օ՛սանա, Հռոմանիմ. . . Ա՛խչի, ա՛բի, գեռ փլաւի վախտը չի, գեռ էլի պիտի գինի կոնծենք, ո՞ր տեղ ես . . . Դէ, ասա՛ եախշի, Ա՛բուֆիին . . . (սկսում է Աբուֆիանը)։

Սազը կուրծքին՝ մէյդանի մէջ բոլորի շուրջ մարդով պատած,
Հայ աշըղը Թուրքի լեզուով խաղ է կանչում ոգևորուած,
Լնչ է ասում, ինչ բղաւում, շատ մարդ ոչինչ չէ ըմբռնում,
Թէև բերանն՝ զմայլմունքից աղբիւր դառած՝ ջուր է թափում
Սուրբ Կարապետն ընծայել է նրան շնորհք հարուստ արուեստներ
Ո՞վ կարող է համարձակիլ ասել նրան դէմ յանդիմանել.
Ան է ծ ք բառը միշտ պաշտպան է թէ աշըղին, թէ գերվիշին
Թէ սնապուխ կարգաւորին, սիպտակ մօրուս հալեորին.....

—Տօ, էդ ի՞նչ ես ասում, միջահասակ Մանուէլը։ Ես էլ անկանջս օրել եմ, հէնց իմանում եմ, թէ մի ուրախացնող բան պիտի ասի . . . Տօ, բա չե՞ս գիտում, որ մենք սուփրի վրայ ենք, մեր հացն ինչի՞ ես հարամ անում, մեր սիրտը տխրացնում. . . Քէֆ արա, տօ, քէֆ, ա՞նէծքս օրն ա. երբ որ կերթանք Անի, ընտեղ կարդա էդ ոտանաւորը, սուփրի վրայ քէֆի ժամանակ, էդպէս բան ասէ՛ն . . . Հռոմանիմ, հոգիդ ուտեմ, փլաւն ածա . . . Ես չեմ կարում էս տղին քէֆ անել սորվացնեմ։ դրուստ խաֆսարայ ա . . . .

—Սպասիր, սպասիր, Մանուել, մի՛ շարանալ, շուտ կը պատուեմ, էլ ախչիկ չեն տալ... Ես սխալուեցի, էդ չէի ուզում ասել. հիմի էլ հէնց նրա վրայ եմ միտք անում, միտս չի ընկնում... Վերջը գիտեմ, սկիզբը մոռացել եմ... Թիֆլիզեցին... Չէ, Թիֆլիզու հայն... Չէ... Թիֆլիզումը ամէն մի հայ... Միտս ընկաւ, միտս ընկաւ, դէ լսեցէք, լսեցէք: (Ասում է):

Թիֆլիզումը ամէն մի հայ պար գալիս հանդի հանդի,
Նորա ոտներն արագ արագ կոտրտվում է լեզգիհանդի
Աշտարակցին ծանր ու բարակ և աղլոս ծէրը սկսում է
Քաղցրիկ լէլէն բերանն առած՝ զուարթ գէմքով պատվում է
Ղարաբաղցուն պէտք է տեսնել ամէն տեսակ խաղ անելում,
Խմիր լախտով, որքան կամիս, ոտն առջևից չէ վեր կալնում
Հարա չասեմ չրիկըլդանէն, այն մի ոտով պտուտ գալուն
Կ՝ որ և կ-կ՝ որ և կ, ց՝ որ և ն-ց՝ որ և ն, հա գ և ա ն գ և ա լ ա
զուշ գոնելուն
Թող գէն ձգենք հարամ ելլան, ովովովէն ու միտսերը
Հալի տալն ու կասկարէնքին չեն գրաւում մեր
ուշքերը.....

—Հա՛ հա՛ հա՛ հա՛... Ցօ Ա՛ռութին, հարբել ես, թէ՞ գժուել, էդ ի՞նչ բաներ ես ասում:

—Ցօ, Մանուել, զու բան չես հասկանում, 'ի զուր տեղը ինձ խառնում ես: Հազար անգամ ասել եմ, մի բան առաջ իմանցիր, յետոյ, թէ որ կուզես, ծիծաղի: Դու գիտես Արմենավարժութիւնը, ի՞նչ ազդեցութիւն ունի մարդուս կազմուածքի ամրու-

թեան, նրա ժրութեան և առողջութեան վերայ: Այս բոլոր խաղերը մարմնամարժութեան պաշտօն են կատարում, գիտես, թէ չէ . . . .

—Դէ որ էդպէս է չիխարդուն, թափի-եօլդաշին, կէնաափանդին, փափախկովէն, ջիլիբիլին, մինչև անգամ էս քաղքրցոց չիկաջոխին հօծի իծօն, բուրթին, մուշտէ կոխ . . Դիփ: գիփ գրի: Էլ ինչի՞ ես բարկանում վերաս, բանի զօրութիւնը հասկացրու ինձ, յետոյ տես, ինչպէս եմ գովում քեզ էլ .....

—Դէ լաւ, թող պրծնեմ: (Շարունակում է):

Ու հասարակ ամէն մի հայ գիտէ խաղալ տնական տնական
Ամէն գժուար ասպարիզում գուրս է գալիս նա համարձակ,
Ուր նստում է նժոյգ ձիուն բաց մէյդանում նա խաղում է,
Ջրիդ անուն հատա մահակը ձեռի միջին գողդոզում է,
Այս բոպէին նա փոխվում է, կարմրում է ու տիրանում,
Իր հրաբուղխ թուխ աչքերը չորս կողմն է նա ձգում,
Հանդէպինը թէ պարսիկ է, վառուած քաջի որսն է այն,
Ո՞վ կարող է սանձել Հային, թէ նա կամի ցոյց տալ իրան....

—Կեցցեն Հայ քաջազունք, բղաւում է Մանուէլը քանի ջանումը ջան կայ:

—Կամաց, տօ, ի՞նչ ես բղաւում, հէնց կիմանան, թէ տունը կրակ ա ընկել:

—Ցօ, վո՞նց չի բղաւեմ, անջաղ մի գրուստ խօսք ասցիր, թէ „Ո՞վ կարող է սանձել Հային, թէ նա կամի ցոյց տալ իրան“: Ախր մի ընենց բարձրացրու, գովի մեր քաջերին, որ հոգիս փառաւորուի, գնայ արքայութիւն, մէկ էլ ընդիանց եղ գառնայ գայ,

սիրաս մանի, որ ես մի լաւ քէֆ անեմ, Հայոց քաջերի կենացը կոնծեմ. . . (երգում է)։

Երկինք գուարթ ակնարկեն. Դահանգնոյ սիրտ ցնծայ....

—Ապատիր, Մանուէլ, գեռ չեմ աւարտել (շարունակում է)։

Հայի լեզուն շատ ճարտար է, Ներա երգերն անհամար է,
Բայց իւր տագանդն ու հանճարը ժիրազգի կենդանին հաւասար է.

Թէ երգում է նա դիւանի* աւայսիր, կամ հասարակ
Գարդ խոզերով յայտնւում է նա ամեն մի բանի մանր ու բարակ
Արարելին ու Փարսերին թէժիֆի* մէջ նա խառնւում է,
Շատ հանելուկ, շատ խոր մտքեր նա սորա մէջ ամփոփում է,
Շրթունքի մէջ ասեղ դրած, նա երգում է զոդագ զագմագ
Երբ վառվում է սէրի էշխով երգում է և դիլ թարփանմագ
Հետ գնաց կրակուելով հնչում է նա դիւզալլամա*,
Աչք է ածում իւր ընկերոջ, սկսում է կիլց զոշամա*
Այս խաղերում գանգատվում է, նա էրվում է Փարսանի պէս
Երբ հասնում է մոխրակոյտին*, իւր նարին չէ առնում անտես
Որին զովում, մնծարում է, շինում է մի ասատուածուհի,
Աղաչում է, ազերսում է, որ իւր վերայ գթոտվնայի.....
Ո՞ւր էր թէ մեր վեհ հոգի հայն զործով էլ տար այս խեղ տեսին
Ազատութիւն, որ նա չունի, այլ գերի է մարդու ձեռին.....

—Ազատութիւն կանանց, Հա՛ . . . Ցեր . . . Բղաւեց Մանուէլը բոլոր ուժը մի ասեղ հաւաքած . . . .

—Ա՛ ողա, Մանուէլ կամենց բղաւի, աշխարքս մեր գլխին կը հաւաքես, ասացին Օսանան և Հռոսոմիմը միաբերան . . .

---

* Խաղերի եղանակների անուններն են։

—Դէ ա՛յի պրանց լաւութիւն արա, ես պրանց համար ազատութիւն եմ կանչում, որանք են առաջ բերաւս փախում . . . Դուք ի՞նչ գնանիք էք, բացի բամբասանքից ուրիշ մի շնորհք չունիք . . . Մի օր չը տեսայ, որ ձեր որդոցը հայ ու հայութիւն սորվացնէք . . . Ա՛ռութիւն դու պրծաւ, տանուտէր . . .

—Հա՛։

Դէ հիմի ինձ անկաջ դրէք, պիտի սու փրէն օրհնեմ։

Ղամերդ ըլի, զամերդ չըլի, իրեք հարիւր տասնուվեց հայրապետ, քսանըչորս մարդարէ, տասներկու առաքեալը, տասը պատգամը, ինը դաս հրեշտակը, ութ կանան սաղմոսը, վեց թեւեան սերովբէրը, հինգ նաւակատիկը, չորս գլուխ Աւետարանը, երեք՝ Աստուածը, երկու՝ երկինք-գետինքը, մի Աստուածը ձեր օջաղը շէն պահի, ձեր ջանը սաղ պահի, ձեր տունը տեղն օրհնի, ձեր յանդ ու յանդասանն օրհնի, ձեր կով ու կթանն օրհնի, ձեր յուծ ու ծիկանն օրհնի. Ամէն։

—Ցօ՛, էդ աչքդի օրհնանքը ո՞ր տեղից միտդ ընկաւ, էս ասհաթիս, դու գերվիշների բաշկուհի տասվու մէյրանին էլ կը գիտենաս . . . .

—Ինձ էլ կասեն, թէ ո՞ր տեղից միտդ ընկաւ . . . Ես էն էլ չեմ մոռացել, որ էս օր պիտի գնանք գէղի մեր գեղը, մեր տուն ու տեղը . . . Հա՛ռամեմ, տուփրէն շէն արա, Ա՛ռութիւն, տա՛ ու ձեռքդ պնդացրո՛ . . . (երգում է)։

Ինձ համար չէ գարնան գալը,
Ինձ համար չէ ծառի ծաղկիլը
Ուրախությեան սրտի գոգիրը
Ոչ մի քերկրանք չէ ինձ համար....

(Հարությունյան Իշխան մ.)

ԳԼՈՒԽ ԺԱ.

—

ՈՒԽՏԱԴՆԱՑՈՒԹԻՒՆ:

ԱՇԻՑ յետոյ մեր պատանիքը, ինչպէս բնական է սիրող սրտերին, շատ տխրութեամբ և երկմտութեամբ բաժանուեցին իրարմէ: Թողնէք Մանուէլին, որ իրա համագիւղացիների հետ երթայ իրանց գիւղը, իսկ մենք Արութիւնի հետ երթանք ուխտ, որ էն տեղից էլ գնանք Ներանց տունը. . . .

Արութիւնը մի ապուխտի մէջ կապեց իւր մի քանի հատոր գաստագիրքը և գնաց նստեց մի սայլի մէջ, որ գնում էր ուխտ գէպի Բոյնտու Սուրբ Գէորգը: Սայլապան Դիմիտրին հարկադրում էր եղներին, որ շուտափայլ երթան գէպի իւր անուանակից Ղմինդա Դիմիտրին, իսկ սայլի մէջ նստող ուխտաւորները, որ մի քանի Հափարբեցիք էին իրանց կանանց և որ-

դոց հետ, խօսում էին մի վերացական հոգով զա-
նազան սրբերից, հրաշքներից, երևներին խաչահա-
նելով ամեն մի սուրբի անուն տուած ժամանակը,
մանաւանդ երբ խօսակցութիւնը Սուրբ Գէորգայ և
Սուրբ Սարգսի վերայ էր։ Աբութիւնը, որ դեռ ևս
խորամանկութեամբ իւր կարծիքը ծածկել չը գիտէր
ծիծաղում էր նոցա վերայ, և հերքում նոցա ա-
սածները։ Բայց նոցանից որը շարանալով արհամար-
հում էր նորա խօսքերը, որն ասում էր դեռ ջա-
հել է. խաչի թալակ չէ ընկած, իսկ կանայք զար-
հուրելով նորա խօսքերից և խղճալով նորա մոլորու-
թեան վերայ, ազաչում էին, որ նա այդպէս արհա-
մարհանքով չը նայէ խաչի հրաշքների վերայ . . . .

— Հիմի որդի որ ա, խաչը սրան կունա ու կծիկ
կանի. բերանը կը ծռուի շլինքը կը գցի քամակը,
կը նեղացնի, կը գժուացնի, — ասում էին կանայք
իւրեանց մարում, բայց ոչինչ չէր պատահում, այլ
ընդ հակառակը Աբութիւնի բարկութիւնը որքան
աւելացնում էին, այնքան ևս աւելանում էր նորա
հերետիկոսութիւնը . . . .

— Զօրաւոր սուրբեր շատ կան, ասաց ուխտաւոր-
ներից մինը, բայց Սուրբ Գէորգի հատը չի ըլի։ Մեռ-
նեմ դրա օդորմութենին, (երեսին խաչահանում է)
դա թուրքերին էլ ա պատժում։ Մի թուրք գնա-
ցել ա դրա եկեղեցու դուռը պոկել ա, որ տանի իրա
մարաքի (գարմանանոց) համար դուռ շինի։ Դուռը

շաբաթին հասել է մարտի մեջ, ուզեցել է թե վէր դնի, գուռը կպել է մէջքիցը: Թուրքը լայով արտասուքով տարել է յետ դրել տեղը, մատաղ բան է արել, որ իրան ուրիշ մի ձեռաս չը բլի: Նա ընկնի հիմի էլ նրա գուլն է . . . .

—Էդուր են ասում Դալի խաչ, է՞, (գլուխ խաչ) ասաց մի ուրիշը:

—Աչաքա կոթի գնդի Սուրբ Սարգսի համար էլ են էդ մի և նոյն հրաշքն ասում, էլի ուրիշ շատ սուրբերի համար էլ, էսուրից երևում է, որ էդ մոգոնովի բան է, ասաց Արութիւնը բարկանալով, բայց դու էնպէս պատմում ես, որ լսողը հէնց կիմանայ թէ դու աչքովդ տեսել ես թուրքին էլ, գուռն էլ . . . Դրուսան ասեցէք, Սուրբ Գէորգին էք շատ սիրում, թէ Սուրբ և Քաջ Վարդանին, որ Հայոց ազգի ու կրօնի համար Աւարայրի դաշտն օդողել է իրա արիւնովը, հը՞:

—Էդ ո՞վ է, մենք խսկի դրա անունը չենք էլ լսել: Թէ որ դա էլ Սուրբ Գէորգի նման զօրաւոր սուրբ է, բա ինչի՞ նրա համար էլ չեն մի ժամ շինել . . . Ցօ, Վարդանս որն է, դու ի՞նչ ես ասում, գժուել ե՞ս, Սուրբ Գէորգի հասն խսկի կըլի՞, մեռնեմ նրա օգորմութիւնին, իմ իրեաս նրա ոսկի սակը իրեք հարուր, իրեք քսան ու իրեք մասունք ունի, աշխարքիս ամեն կողմումը նրա զօրութիւնը նրա հրաշքը տարածուած է: (Երևսին խաչահանում է և լռում, որ էլ չը խօսացնի Արութիւնին):

—Դիտէք ի՞նչ կայ, համարձակութիւն չբլի, ուզում եմ ձեր երեսին մի քանի ցուրտ խօսք կպցնեմ։ Դուք մի Աստուածք էք կարծացել, ես էդ վատ եմ անդիր արել, էնպէս պուճախներ կը գցեմ, որ կը ճնաք և և անեիս . . . Դիտէք ի՞նչ կայ, ես ծընել եմ Սուրբ Գէորգի տակին, մեծացել եմ Սուրբ Գէորգի տակին, նա մեր գեղջոց աղան ա, նրանք էլ նրա ծառան։ Վաղուց առակիներ չբլի, ասում ա՝ թէ խաչն իմն ա, զօրութիւնը ես եմ գիտում՝, հիմի, նրանք չբլի, ես Սուրբ Գէորգին լաւ եմ ճանաչում, քան թէ դուք։ Մի մարդի գլուխ ցաւում ա, գաչիս ա ուխտ, թէ որ մի քանի օրից յետոյ գաղարում ա, որ առանց էն էլ պիտի գաղարէր, ասում են խաչը փրկեց, թէ որ չի գաղարում, ասում են ուրիշ խաչից ա, Սուրբ Գէորգը ուրիշ խաչերի գործում չի ուզում խառնուի։ Ցետոյ գնում են մի պառաւի գարի գցել տաչիս, որ խմեցնեն, թէ որ խաչից ա։ Պառաւը որ նրանց Հնդստան ուզարկի, նրանք, ճարքնելը կտրած, պիտի գնան։ Ես ամեն տարի Բօշնօրին սրա տակին եմ լում, էնքան բաներ եմ տեսել, որ դուք ձեր օրումը լսած չէք բլի։ Ձեր քաղքրդիք գաչիս են լսեց ուխտ, գինին խըմում են, հարբում, յետոյ ճանփա ընկնում դէպի քաղաք։ Բօրչալուցի գաչաղ (փսխած) թուրքերը ասպաններու նման եղեներիցը հատում են ճանփէն կտրում, թալանում, կողոպտում, կնիկը մարդի ձեռ-

քիչը խլում, շհար գեօղալի ասելով չես գիտում ինչ գալաթներ անում. . . Պարզին թափում, ջրլատում, բա ինչի՞ ձեր սուրբ Գէորը չի ազատում։ Հը՞...

—Ինչուր չի ազատում, որ ինքն ա ըլում ըզբկած էն գողերին որ նրանց պատժի, չունքի նրանք էլ քուպէս ջգրացրած կըլին խաչին, ուղիղ սրտով չեն ըլել գնացած նրա տակը, եա թէ չէ, իրանց սուրբ չեն պահել նրա տակին, ինչ և իցէ, մի բան արած կըլին, խաչն էլ նրանց պատժել ա, որ խելքները զըլուխը գայ, միւս անգամ էնպէս բան չանեն, ինչ որ արել են . . . .

—Ինչի՞. Սուրբ Գէորգը աւազակի առաջնորդ ա. թէ աւազակի գլխաւոր։ Թէ որ մենք մեղաւոր մարդիքս գիտենք, որ Քրիստոս հրամայել ա, որ մենք չարի չար չը հատուցանենք, մինչև անգամ աղօթք անենք մեր թշնամիների համար, ինչպէս որ ինքը խաչի վերայ, մեզ օրինակ տալով, ասեց, „Հէր, մի համարիր սոցա զայս մեղս, զի ոչ գիտեն զինչ գործեն՝, Սուրբ Գէորգը, սուրբ մարդ լինելով, ինչի՞ պիտի Քրիստոսի խօսքի ընդդէմ բան բռնի։ Նա ամենևին էդպէս չի անել։ Էն խեղճը, մի անգամ իր հաւատի համար մարտիրոսուելով, արքայութեան մէջ նստած ա, նա աշխարքիս վրայ չի մտնի գալի, միայն դուք էք ոտով գլխով մոլորուել, կուապաշտացել, ձեզ որ ասում են Աստուած վկայ, դուք չէք հաւատում, որ ասում են թէլէթը գիդենայ, կամ, Սուրբ Գէորգի անունը վկայ,—հաւատում էք. . . .

—Տո՛, ի՞նչ ես տուտուց տուտուց դուս տալիս, գլխներս ցաւցնում, էն թաւուքներից չըլլա . . . .

—Էն թաւուքս որն ա, թէ տուտ եմ տուում, մտաներդ ա՛չքս կոխեցէք, թէ չէ ու՝ ո՞ւր էք ընկել էս չոլերը: Ցաւի համար բժիշկ կայ: Բայց թէ որ աւելի փող ունէք, չէք գիտում ի՞նչ տեղ մտէք, ես ձեզ տեղը նշանց կը տամ: Ձեր որդոցը, ձեր աղջկերանցը ուսո՛ւմ տուէք, որ իրանց հաւատը իրանց ազգը ճանանչեն, ձեզ նման չասեն, թէ Վա՛ղրգանս որն ա, գուզ ճանփէն թողած՝ չոլերը չընկնեն· լուսը թողած՝ խաւարի մէջ չը մտնե գան . . . .

Բոլորեքեանք լռեցին, կարծելով, որ Սուրբ Գէորգը գժուացրեց Արութիւնին, ուրիշ կերպ, նոցա կարծիքով, նա կարող չէր, այդպէս ազատ ու համարձակ խօսքեր հանել բերանից: Այսպէս շարունակեցին իրանց ճանապարհը: Մի գիշեր էլ մացին ճանապարհին, ուրանց մի ջուխտ եզը գոռանալ տուին: Միւս օր, կարծելով, որ Արութիւնը եղաւ այս ձախորդութեան պատճառը, հրաժարեցրին նրան իրանցից, որպէս զի մի ուրիշ ձախորդութիւն ևս չը պատահի: Արութիւնը վեր առաւ իւր փոքրիկ ծրարը և ոտով ճանապարհ ընկաւ դէպի Սուրբ Գէորգ, որ հիմնած է մի զառիվայրի վերայ, ուր և հասաւ երեկոյին: Արդէն հաւաքուել էին բոլոր հեռաւոր և մօտաւոր ուխտաւորները· Հայերը, Վրացիքը և Թուրքերը միասին խառնուած՝ կազմել էին մի խումբ

բազմութիւն ժողովրդի։ Երևում էին բազմաթիւ վրաններ, փուրգաններ, տաբանտաններ, սայլեր, քնահ-լան ձիաններ, փայտեայ եղներ, մատաղ անելու հա-մար սուրուով ոչխարներ, գինիով լիքը տակառներ, մէշոկներով, չուալներով և թաբախներով մրգեր և քաղցրեղէններ և այլ և այլ բաներ . . . Փիչ քիչ մութը վերայ հասաւ, կրակներ սկսան վառուիլ բարձր աթոռներով, և օղաձիգ փանփուշտները (շուշխունա) մին քան զմիւսը աւելի բարձրանալ և խառնուիլ պարզ հորիզոնի վերայ փայլփլելիս անհամար ասա-ղերի հետ դամակոչը, (որ տարին մի անգամ էր և-րևում միայն էտեղ իւր զանգակի հետ միասին, որ ուզարկում են Թիֆլիզից, ինչպէս և քահանաներին) հնչեցնում էր եկեղեցու քաղցրաձայն զանգակը, որ մեծ տպաւորութիւն էր գործում ուխտաւորների այն մեծ մասին վերայ, որոնք միշտ անտառներում մեծանալով, զանգակի ձայն ամբողջ տարիներով չեն լսում . . . .

Միւս օր՝ շարաթ առաւօտուն ամբողջ բլրակը շա-գախուել էր մատաղի արիւնով, էլ ուր գնելու ցա-մաք տեղ չը կար։ Համբուրոցները զատ խմայրի օձա-պրտուտ ճանապարհով վերև ու ներքև էին անում անդադար իրարու սեղմելով։ Ցէրտէրները չէին կա-րողանում փարատեա զրաւս և Պահպանիչը հաս-ցնել, մնացել էին քրդնքի մէջ կորած։ Խեղճ կար-գաւորները կարծես թէ երեք մանկանց գերեր էին

կատարում այս փոքրիկ մատուռաձև շինության մէջ, որոյ ներսի պատերի վերայ անհամար մոմեր վառելով, վերափոխել էին մի բարեշնաան հնոցի։ Բոլոր վանքից ուղարկուածներից ոչ միներ այնպէս երջանիկ չէր, ինչպէս պարոն Մկրտիչ Օղուզեանցի Մեծքիթունին, որ ազատ օդ շնչելով մնաց էր գալիս ջերմեռանդ ուխտաւորների մէջ և գինի կոնծելով մատաղների էրին ու մորթին ժողովում, կամ գոցա տեղ մի քանի շահի առնում ջէրը գցում։ . . Բոլորն էլ մեծ ուրախութեան վերայ էին, մի տեղ կրպչում էին, միւս տեղ պար գալիս, մէկ էլ տեղ խաղանում, մի խօսքով զուռնա, դհոլ, գայիրա, նազարա, տիմբիլիպիտաշ, սազ, թառ, ճիանուր, սանթուր, չօնգուր, խաղ, սազ, պար իրարու հետ խառնուած՝ խրատայնում էին գիժ գոմէշներին, խամ քուռակներին, որանք պլշած գուրս էին ընկնում առոմնգ տալիս փախչում, կամ երեխայ հնիկ ոտի տակ գըցում, բայց ոչ մի ձեաս չի լինում, խաչի ողորմութիւնը շատ ա, եթէ երբեմն էլ մէկի գլուխը պատրոփում է կամ ձեռքը կոտրում, այդ ևս լաւ նշան է, կը նշանակէ, խաչը նրա մուրազը կատարեց.... Արէլը, որ մի Թիֆլիզեցի աշխոյժ հայ երիտասարդ է, իրա տասը կանգուն (արշին, ոսի գազ) երկայնութեամբ փայտէ ոտներին սպիտակ վարտիք (շալվար) հագցրած՝ խաղում էր նոցա վերայ, հագած իւր կախարդական շորերը և պոնձէ չիսկիսկան մատանոցները,

որ երբ յոգնում էր, ձեռքն էր առնում իւր աշա-
կերտի շրջիկը ձգած, կոլոլ ու մէջ տեղը ծակ, թա-
գիկը և նորան զանազան գլխարկի ձև տալով ու գէս
ու գէն լայն լայն քայլեր անելով ցոյց էր տալիս,
թէ ո՞ր տեղ ի՞նչ տեսակ գոտակ են ծածկում։ Երբ
որ իջնում էր փայտերից գետնի վերայ ցոյց էր տա-
լիս իւր ընդունակութիւնքը մարմնամարժեական խա-
զարկութիւնների մէջ և յետոյ փոկուտներ (աշքա-
կապութիւն) էր առնում զարմացնում հանդիսատես-
ներին։ Մի տեղ էլ մի Շիրակվանցի ջամբազ հայ պա-
տանի, ոտներին խաչաձև շորս թոռ կապած, խա-
զում էր պարանի վերայ, որը աւարտելուց յետոյ
ցած իջաւ և գետնի վերայ ցոյց տուաւ մի աւելի
հրաշալի տեսարան։ Նա հագած էր կարմրագոյն ու
գեղեցագոյն խաս կտորներից շորեր գոտկից ներքև
միայն (իւպկայի պէս), իսկ գոտկից վերև երկու հատ
Ամանցուի գրուն, որոց, ինչպէս բազուկների, նոյնպէս
կուրծքի վերայ շատ սեղմ կարած էին մեծագրու-
թիւ կոճակներ, իսկ մէջքի վերայ փռուած էին բազ-
մաթիւ թիլիսմաններ, կարած գոյն զգոյն կտորների
մէջ։ Այս պատանին սկսաւ տեղն ու տեղը արագ մե-
քենայի պէս շրջապտուտ գալ այնքան ժամանակ,
որքան ժամի մէջ որ նա իւր երկու հատ գրունի
անհամար կոճակները կարձակէր և դարձեալ կը կպչէր,
որը աւարտելուց յետոյ ձեռքն առաւ երկու հատ
սուր գաշնակներ և նոցա ծայրերը սկսաւ մի և նոյն

պատուոյ ժամանակ աչքերի ապրիւրների վերայ դրնել և ապա ականջներումը, քթումը։ Այս աւարտելուց յետոյ նոյն գաշնակիների սուր բերանի վերայ բոկոտն կանգնեց և սկսաւ մի քանի բոպէ կատարելով խաղցնել ձեռները, իւր ոգնականոց մատանոցները չիսկչիսկացնելով . . . .

Փիլիպոս զուարճասէր երիտասարդներն էլ, որ մէկ երկու օրուան համար թանգ գնով լաւ ձիաներ են վարձում, և նոր շորեր առնում, զուգում, զարդարում արծաթեայ զէնքերով. խառնուել էին այն ջրիգի հանդիսի մէջ, որ կատարվում էր բլուրի տորոտում, մի ընդարձակ գաշտի վերայ։ Ջրիգ խաղացողները բաժանուած էին երկու մասն և կանգնած դէմ առ դէմ։ Մի մասումն էին գիւղացի Հայերը, մեծ մասամբ Շուլամբերցիք, որոց գլխաւորն էր Ավետիքի ազգի ազա Գրիգոր-բէգը, որ ոչ այնքան իւր արիութեամբը, որքան իւր գեղեցիկ պատկերոնն էր գրաւում շատերի ուշադրութիւնը, իսկ միւս մասումը կանգնած էին Բարշաղուի ազգաբար Թուրքերը, որոց գլխաւորն էր արիասիրտ Մուսա ազան, որ վիհանձնութեամբ թռուցանում էր իւր Դոմշան-ձիանուանած ձին, հանդիսականների չորս կողմով և չէր ուզում ջրիգ ձեռքն առնել, որ մի՛ գուցէ կրուի պատահի, ինչպէս ամեն տարի պատահում է։ Բայց Հայերը հեռադեակ տաքանալով սկսան կատաղացնել Թուրքերին, և խաղը վերջացուցին սովորական դիպուածները կատարելուց յետոյ . . . .

Այսպէս, մի տեղ զանազան տեսարաններ էին ներկայացնում բազմութեան մէջ, միւս տեղ շատ ժամանակ իրարու չը տեսած բարեկամներ էին պատահում միմեանց և մէկ մէկու հրաւիրում սուրբի վերայ։ Հարս ու աղջիկ գեղեցիկ զարդարուած, բոլորբերանք ուրախ, բոլորբերանք զուարթ, մի խօսքով ամէն բան հրաշալի էր, միայն Արութիւնը, որ գրտել էր իւր մօրը և նստել նրա կողքին՝ ոչինչ չէր զգում այն անմեղ փաղաքշանքից, որ նրան պարգևում էին իւր բոլոր ազգականներն ու ազգականուհիքը, որոց ամէն մինը մի ուրիշ գեղից գալով՝ կենտրոնացել էին մի տեղ, ուր գտնվում էր Արութիւնի ճանապարհորդակիցներից մինը միայն, որ հեչեցնում էր իւր թառը և երգում ասուածաբանական և պատմաուրբական խաղեր մի այնպիսի վերացական հոգով և վառուած դէմքով, որ Արութիւնը նայելով, զարմանում էր և ափսոսում, որ այդպիսի մի զարմանալի տաղանդ նախապաշարմունքով է շաղախուած, ուստի լուռ ու մունջ, տխուր ու աչքտում նստել էր և ոչինչ չէր խօսում, մինչև ամէն խաղ պատաւեցաւ, սիրան սայլերն ու փուրգոնները իրարու յետևից գոգոալ և ծածկել բոլոր տեսարանին մի տխուր վարագոյր։

ԳԼՈՒԽ ԺԲ.

—

ՄԱՑՐԱԿԱՆ ԱԼԻՔ ԵՒ ՄԱՑՐԵՆԻ ԼԵԶՈՒ.

ԱՐՈՒԹԻՒՆԸ իւր մեր հետ նստեց մի սայլի մէջ և. ճանապարհ ընկան դէպի իւրեանց գիւղը։ Գիւղ Զբհանը՝ Արաւ թիւնի մայրը անդադար հանրաւրում էր իւր որդուն, ամեն անգամ կրկնելով այսպիսի խօսքերը՝

—Ես քը մանապ ընիմ, ա թիւն ջանն . . . .

Իսկ Արաւ թիւնը ասում էր—

„Դէ լաւ ա, լաւ, խրեկ պաշի։ Ես գիդում եմ, վար տիւ ինձ շատ ես սիրում։

—Քը մանապ ընիմ, ա թիւն ջանն. տիւ վար դիդաս հուշ էլ հու կը գիդայ։ Ես քու չարը տանեմ, ա թիւն ջանն . . . .

„Դէ լաւ, լաւ։ Բանի . . . .

—Ա՛ ապայ, քը մանապ ընիմ, դէ հունց անեմ, կարում չըմ, թա տանդ անեմ. . . Քը մանապ ընիմ, ա թիւնի, Օսանը հունց ա, խոխէքը լաւ ին, մէք պատաւ խնամէն ըրխէս ներհէտ ըրբշում ա . . . .

„Թող կարշի, մին ներայ անումը տանդ մի . . . Ես էլ տանդ պիտիմ թա՝ հար անեմ, մար անեմ, էլի . . . .

—Խէ՛, քը մանապ ընիմ, հի՞նչ այ ըրալ . . . .

„Հի՞նչ պտիյ ընիլ . . . Զահլաս տարալ ին. „էս հի՞նչ ա, ասում ին, նկալ ա կըլխընիրէս եր ընգնալ, ըսկի հաց չանենք, թա մանք օտնք, մին բօզաղ էլ սայ ա տառալ՝»։ Տիւք էլ՝ Աստուծ օրհնալ ա՝ վար մէ հէտ մին չուալ ալեր ըղարկէք, հի՞նչ կընի, պա ծէր սրբատում ջգնար չբկայ . . . .

—Քը մանաղ ընիմ, իմ ծեռանը հի՞նչ կայ . . . Պա տիւ գիղում չբա քօ հօր խրսեաթի՞ . . . Էրվալ ըմ, խրովվալ ես էտ մարթին ձեռանը՛ . . . Քօռ ըշըղ-նէն վար կեալիս ին շինը՛, հուվվար մին չանաղ ա տալիս, նա մին չուալ ա տալիս . . . Ուրբքշեր մար-թիքը պիւրում ա տանը լանում, ուտրցընում, խը-մրցընում . . . մին ամում հարիւր թուանգի կինի ա փըշըցընում, կըրէսնէն տրրտակում . . . Խօխէրա՝ մարընէն պէց, վընընրընէն պէց . . . Ներհանց հեռէ մին ճօխտ չմաչկ չեր ինք ունում . . . Ասում ըմ, „էս ըրամանք չի, վար տիւ անում ըս՝», վէտանը տակն ա քցում, թատկում, կուտրատում, թա՝ „ինչ էտ կարէ՝» . . . (արտասվում է)։

„Լաւ ա, լաւ ա, լաց մինիլ, ագի ջան . . . Էս լաւ տղայ կը տեսնում, քէզ կը տանում քաղաք . . . Ա՛խ՝ . . . արտումն շատ մուրազ կայ . . . Մին քէզ տանի մէ հէտ դինջ նստած, էն վախտը մնանի, էլ արտումն դարդ չար ընիլ . . . Ամմա հունց անում մըհեգ, հի՞ւր ասում, թո՞ը կորչիմ . . . (արտասվում է)։

—Ես քու ցաւը տանեմ, ա թիւն ջան, լաց մինիլ, քը մնատաղ ընիմ, լաց մինիլ . . . Վախել մի, քը մնատաղ ընիմ, տիւ քու մուրազէն կը հանես . . . Հալա ջահիլ ես . . . Տիւ ինձ հետէ դարդ մանել, քը մնատաղ . . . Ես էս ա պրուաւալ ըմ, էքիւծ՝ ալոր կը մէռնեմ . . . Տիւ վար իմ էրիսին մին հատուռ հոդ քցիս, էն ինձ բօլ ա . . . Լաց մինիլ, ցաւդ տանեմ, լաց մինիլ . . . (տիրում է լռութիւն):

ԳԼՈՒԽ ԺԴ.

—

ՄԱՐԴԱԴԷԼ.

ԹՆՈՂԱԿԱՆ սէրը ամէն մի զգացող մարդի յատնի է: Արութիւնը գլուխը դրաւ իւր մօր գոգումն ու լռեց: Գիւլ-Ջըհանն էլ սիրոյ արտասուքն աչքերին, սկսաւ շփել իւր օրդու գլուխը, որով մի քաղցր քուն բերաւ նորա վերայ. սայլն էլ օրօրոցի պաշտօն էր կատարում երեխայացած Արութիւնի համար և անդադար օրօրում էր, մինչև հասան տուն, որին պահապան էր մնացել Արութիւնի հայրը, Աւետիքը: Արութիւնը վայր իջնելով սայլից, համբուրեց իւր հօր ձեռքը, բայց Աւետիքն ինքը, որ երեսից համբուրելը մեղք էր համարում, մի տիրական

Աստուած օրհնէ ասայ միայն և հայրական քէ մա-
սայ բայ ա ջան, փոնց ես . . . .

Արուեստիւնը ինայ գիւղումը մի քանի օր և սկը-
սաւ իւր սովորական վիճարանութիւններն անել և
շատերին բարկացնել . . . Երեք օրից յետոյ նա այլ
ես հիւր չէր։ Այն փաղաքշանքը, որ նա վայելեց իւր
հօրից, այդ մի բոլոր զուարճութիւն էր, չէր
կարող երկար տևել։ Դորան հարկաւոր էր, ինչպէս
ասեն մարդու, որ և իցէ կերպով օգտակար լինի, որ
իւր կերած հացը կորած չը համարուէր։ Դրա ա-
նելիքը շատ ծանր չէին լինելու — պէտք է քերէր գոմը,
ձին տանէր ջուրը, տաւարի համար գարման բերէր
քիթոցը շալակին, փայտ կոտրէր մեծ կացինը ձե-
սին։ Այս կատարեց նա։ Ինայ հարկադրուեցաւ գը-
նալ բաղը մշակել, փորել, անտառից փայտ բերել,
շինութեան համար գարան, քար, ջուր։ Բայց ուր
որ գնում էր, ինչ որ անում էր, տանից մի ձեռաք
յետ չէր գառնում տուն։ Անպատճառ, կամ պէտք
է ձեռքը կորած գար, կամ ոտքը ցաւցրած, կամ
երեսը չանգռած, կամ մի բան կորցրած։ Սկզբում
հայրը չէր բարկանում այս հանգամանքի վերայ,
միայն մտքում էր ասում իւր սովորական առածը-
թէ „Հայտ ջեռնգեա սան, օրիզ օյար սան“, (գեռ
խամ աչաս ես, եզը կը գառնաս), բայց ասեներով,
որ դեռ զհետէ աւելի ձեռաներ է բերում և մեծա-
մեծ անկարգութիւններ անում, սկսաւ փոխել առածը

և այսպէս ասել — „Չեմ նեղեա օգիւզ օրան ամեան, եաթ դանեղուզա դանար“, (մինչև աշատը նեղ կը դառնայ ակը խոզ կը դառնայ)։ Ուստի մնացեց վերջ դնել այս դժբաղդութեանը, սուր սուր մտատանջներով, ահակներով, յանդիմանութիւններով, նախատինքներով, ծիծաղելով, կատակով և վերջապէս Խիկարի խրատներով, ՝ որդեակ, ՝ որդեակ անելով։ Բայց Աւեսալիքը իւր այս սեսակ վարմունքովը ոչ միայն չը կարողացաւ հասնել իւր նպատակին, այլ ընդհակառակը ուելի կատաղացրեց Արուեստիւնին, որ սկսաւ իրեն արժանաւոր, խելք խոսոսմանել, իսկ միւս բոլորին ուրեմն և իւր հօրը և նորա խրատները յիմար, անպիտան։ Այս մի հարուած էր, մի սասսիկ զարկ, որ չէր կարող տանել Աւեսալիքը . . . .

— Սա իմ ոգին չի, — ասաց Աւեսալիքը Գիւլ-Զը-հանին, երբ առանձնացել էին երկուքը միասին։

„Թէ որ քու ոգին չի՞, — ասաց Գիւլ-Զը-հանը մի այնպիսի ձայնով, որ ազատ չէր երկիւղի ազդեցութիւնից, — թէ որ քու ոգին չի՞, հարա ինչի՞ ա քեզ նման անկոտրում, իրան ասածի . . . .

Էդ դիմի գու ես մեղաւոր, էրես ես առել, լրբացրել, էլ հեսը խօսիլ չի բլում . . . Իմ ընչի՞ս ոգին ա նա, որ ոչ սաւարած ա, ոչ տանարած . . . Ոչ ախչիկ ա, որ մարթի տանը, ոչ ազգայ ա, որ բանացնենք . . . .

„Թէ որ ուզում էիր սաւարած չինես, էլ ա՞ր էիր կարդացնիլ տալիս . . . Նա ասում ա, „ես գեռ չեմ

պրծել կարգալս, իմ ընկերներն, ասում ա, գիրք էլ առաջ կերթան, ես յետ կրձնամ։ Նրանք, ասում ա, ժամանակով մարդիք կը գառնան, ես ի՞նչ կը գառնամ, ձեր կշռին։ Էշն, ասում ա, որ իշի կշռին կապէս . . . .

—Ի՞նչ, ի՞նչ . . . .

—Ի՞նչ պիտի ըլի . . . Դու Էնքան ասել ես, որ նա էլ սովորել ա . . .

—Ի՞նչ ա սովորել, ես ի՞նչ եմ ասել . . . .

—Քու մատաղները . . . .

—Ես գրան նշանց կը ասամ իմ մատաղների զօրութիւնը . . . Ես գրա գլխին մի ծիրն գամ, որ սև շանը գլուխը չը գայ . . . Սպանիր . . .

—Դու ըլես քու Աստուածը, այ մարդ, էրեխա չը գժուայնես . . . Նա առանց Էն էլ գժուած ա ....

Մինչ գեռ մարդ ու կնիկ վիճում էին Արութիւնի մասին, նա ես առանձնացել էր մի ուրիշ սենեակում և ընկղմել մի խոր մտածութեան մէջ։ Վերջապէս նախազգալով, որ իւր հայրը իրեն ձեռքնտու չի լինիլ և ոչ խնդիրքը կը կատարէ, կամեցաւ իւր տրրտմութեան մատակից անել իւր մի հատ բարեկամին, Մանուէլին՝ գրելով նորան յետագայ տողերը—

Մանուէլ,

Կէս հոգւոյ իմոյ.

Չը գիտեմ, թէ արդեօք ի՞նչ ծեղ ես դու հիմա և ի՞նչ գրութեան մէջ, բայց ես այս նամակը ու-

զարկում եմ ձեր գիւղը, որ ուր էլ որ լինիս քեզ հասցնեն։ Աչքդ լուս, Մանուէլ։ Ես այժմ գիւղ եմ։ Այսպէս են ասում բնձ բոլորը։ Սիրէ մի քանիսը իմ ասածների մէջ նկատում են անհերքելի ճշմարտութիւն, այսու ամենայնիւ թոյլ չեն տալիս, որ ես խելօք լինիմ, ասում են „դալիգան գօղու խաբար“։ (գժից ուղիղ համբաւ) Իմ մանկութեան օրօրոցը այժմ դառել է իմ համար մի բանտ, մի գժոխք, ուր բացի գիշատակիչ գևերի ատամանց կրճատումից՝ ու մի ուրիշ բան չի լսվում։ . . . Վերջապէս թէ գիւղ եմ և թէ խելօք, ես գանեա գիտեմ իմ չափս, գիտեմ, թէ ի՞նչն ա բնձ գժվացնում։ բայց որ իրանք յիմար են, կապիտ են ծոյլ են և մի և նոյն ժամանակ կարծում են, թէ շատ խելօք են, էս ա մարդի տրաքացնում։ Ամեն գոմի ախպատակի առջև հարուր տարուան թերեք կայ կիոտուած, չեն տանում իրանց բաղերը, հողերը ածում, որ համ հողը աւատացնեն, համ իրանց տեսերը ժահահոտութիւնից խուսակեն . . . Ոչ մի մարդ չը կայ, որ երկու հատ շապիկ ունենայ, միայն մի մի շապիկ ունեն, որ սարբին, շատ, շատ երկու անգամ կը լուանան, ամիսը մի անգամ էլ թատի կը տան։ Ասուած ազատի, էսպէս ժամանակները պէտք է թանգրիցը մի վերատ հեռու փախչիս, որ խանջանահոտը գլխիդ չը խփի... Ոտ ու գլխները բաց, հագար ու մին գառը գիպուածների ենթարկուած. . . Դու հօ գի՞տես էլ ի՞նչ

ասեմ։ Բայց ի՞նչ է արանց տարաբարդութիւնն պատ-
ճառը, եթէ ոչ ազգութիւնը, եթէ ոչ իրանց կեանքի
վերայ ունեցած ծուռ հայեացքը . . . Ճշմարիտը
ասեմ, շնայելով, որ արանք ինձ շատ բարեացնում
են, մինչև անգամ հոգիս բուկս են հացնում շատ
անգամ, բայց որ ինձ ու ինձ միայն եմ անում, Օ-
վակիմի խօսքը միասա ընկնում. . . Ընչի՞ն ա, զոր
օրինակ, որ հիմի ես ու դու քիչ շատ բան ենք հաս-
կանում,—գանենա գիտենք, թէ ի՞նչ ասել է Աբան,
ի՞նչ ասել է Ազգ, ի՞նչ օգուտ է լինի մարդուս գրչ-
խաւոր նպատակը այս աշխարհիս վերայ—ի հարկէ
Էնդուրից, որ հանգամանքը մեզ ուրիշ տեսակ մար-
դոց հետ ա պատահացրել, ուրիշ կեանքի ուրիշ
դատարակներին . . . Ո՞վքեր են արանց դատարա-
կները—բնաւորութիւնը. ի՞նչ ասեր խեղճ բնաւորութիւնը...
Բնաւորեանն գլխին Էնպէս մի ցիր են գրել. որ նա
իրա ազդեցութիւնը մոռացել է . . . Արանց դատա-
ռարակները. Վանուէր, աշքդներն են, աշքդները որ
արանց երևակայութիւնը ուժ ու զօրութիւն են
տալիս և գործունէութիւնը թուրութիւն, մէկ էլ
մեր կարգաւորներն են, որ բացի Հրաժարիմից, մի
ուրիշ գիտութիւն չունեն, էլ ումից օգուտ է արանց
որդիքը բան տարին, կամ ով կը հանարձակի տա-
ռանալի ճանապարհիցը դուրս բերել նրանց . . . Մի
հատ մարդ չը կայ, որ գիտենայ թէ ի՞նչ ասել է
Ազգ, Հայ։ Իմ հայրս, որ ամենից գիտակցանն է

հանարվում մեր գեղումը, որ մի շապիկի տեղ մի քանիսն ունի և աւելի պատիւ ու յարգանք է բաշխում ամենից իւր ծառանարանում եղած հանար, ամենքից աւելի մեղրուածն է։ Ասա՛ ինչի՞։ Ընդուր հանար, որ ամ որ ոչինչ չի խնայում, նա ոչոմի գաղտիքը էլ չի ծռում, ասում՝ ա գնա՝ փրան մարդին հարցրու, նա տեսաք վարդապետի գաղամ բան գիտէ...

„Մեր տէրտէրին, քէֆիխուդանեքին ապաչում եմ, ասում եմ, „ինչ որ բլի, մի կերպով իմ հօրը համոզեցէք, որ նա ինձ օգնի, գնամ իմ ուսումս աւարտեմ՝։ Ասում են „Խալիս գալի օրանդա մօրչնա գեղար, մօրա գալի օրանդա, քիմա՞ գեղար՝։ (Գոզովուրդը որ գժուի, մօրչի մօտ կերթայ, մօրէն որ գժուի, ո՞ւմ պիտի երթայ)։ Հիմի նրանք չբլի, ասում են։ „Գու հէրը որ կայ, մեր մօրէն ա, մեր վարդապետը, մեր փիլիսոփէն, մեր հէրը, մեր տէրը, նրա հացի անումը Ղեղասանն ա հասել, լեզուի հունարը՝ Արաբասանն . . . գուանեղասանն էլ որ գնաս, նրա անումը քեզ կասեն։ Շատ որդի երանի ա տալիս քեզ, որ գու նրա ազէն ես, գու ասում ես, „իմ հէրը գիժ ա, գնանցէք նրա գլխումը խելք գրեք՝։ Ինձանէն էլ բլի լսէնց, հիմի գիժը գու ես, թէ նա՞... Դէ ա՛յլի հիմի արանց բան հասկացրու . . . Բայց բաւականանում չի նրանով իմ հայրս, որ ինձ չի օգնում, չի էլ ուզում պահի մնաք, այ ցաւն ինչ տեղ ա։ Հիմի ես ի՞նչպէս անեմ։ Մայրս միշտ ըզ-

զուշացնում է ինձ, որ չը բարկացնեմ հօրս, բայց գառն ու գէլը մի տեղ երբ են արածել, որ հիմի արածեն . . . Մայրս Բեկեկայի հայեացքն ունի։ Ինչպէս որ նա իւր որդի Յակոբին միշտ պաշտպանում էր հօր ատելութիւնից, էնպէս էլ իմ մայրս պատրաստ էր իւր կեանքը զոհել իմ համար։ Նրա սէրը այնքան մեծ է, որ հաւատ է ընծայում իմ բոլոր ասածներին և հոգւով փառաւորվում է, որ իմ նրման խնամատուն որդի ունի, չընայելով, որ իւր գաղափարներին ընդդէմ էին իմ ասածները։ „Մի վախիր՝, սիրտ է տալիս նա ինձ, „Աստուած քեզ հետ կըլինի միշտ, նա քեզ չի կորցնիլ։ Միայն բեր Յակոբին, Յովսէփին, Մովսէսին, տես Աստուած նրանց ի՞նչպէս առաջնորդեց՝։ Յետոյ ես ասում եմ, „Նրանք Ջհուդներ էին, մենք ունինք Հայկ, Արամ, Տիգրան՝, և պատմում եմ նրանց քաջագործութիւնքը։ Մայրս շատ ուրախվում է, երբ որ լսում է, մանաւանդ երբ որ պատմում եմ Նղիշէից մեր հինգերորդ դարու կանանց կրած նեղութիւններն ու դառնութիւնները իրանց հայրենիքի համար։ Մի օր այնպէս շարժեցաւ մօրս սիրտը, որ չը կարողացաւ արտասուքը բռնել էր, տեսնելով մօրս արտասուքը, ինքս էլ արտասուեցի . . . Արդեաք մեր նման քաղցր էլ ուրիշ ի՞նչ կայ աշխարքումս։ Ի՞նչ լաւ կը լինէր, եթէ հայերն էս զուրկ չը լինէին մայրական սուրբ զգացմունքից, մանաւանդ իմ հայրս,

Աստուած ազատ պահի ամենայն հայ որդուց . . .
Չես կարող քեզ ներկայացնել, թէ մինչի՞ որ աստ-
ծանի նախապաշարուած և մոլորուած մարդ է։ Դա-
յելով նորա գէմքին՝ զարհուրանք է գալիս իմ վե-
րայ, և զարմանում եմ, թէ մեր խաւարապաշտները
ի՞նչպէս են կարողացել այսպիսի մի հերոս ազամար-
դու ֆիզիքական զօրութիւնները շղթայակապ անել
զանազան ցնորքներով։ Եթէ նա այսպիսի խոխուտ և
գերբնական սուտերի մէջ այսպէս յամառուել
և կամակորուել է, որքան աւելի նա ազգայնու-
թեան մէջ կարող էր ամուր և հաստատ լինել, որ
ով գիտէ, գուցէ մի նոր գիւցազն կունենայինք . . .
Փաղաքշել, շողոքորթութիւն անել իմ հոր գիմաց
անհնարին է, ըստ որում գու գիտես, որ մեզանում
փոքրերը իրաւունք չունին մեծերի առջև ձայն ու
ծրպտուն հանել։ Բաւերս ներեցէք, կամ ներող-
ութիւն մեզանում չեն գործ դնում։ Եթէ սկսե-
ցար կռուել մէկի հետ, պիտի անհաշտ մնաս և շա-
րունակես կռիւը, մինչև կամ գու կը յաղթես,
կամ քո ախոյանը, թող նա լինի դրացիդ, ազգա-
կանդ, եղբայրդ, հայրդ։ Մեզանում մարդասիրու-
թիւն ասած բանը գեռ ևս փայրենի դրութեան մէջ է։
Անէծք, ուշունց, կռիւ և այն դաղանակով, թրով-խան-
ջարով և հրացանով է կատարվում։ Ցարահամութիւնը,
ոխակալութիւնը, մինչև վերին աստիճանի զարգացած
է այս տեղ։ Ի՞նչ ասել է սէր, բարեկամութիւն, ըն-

կերութիւն, դոցա հետքն անգամ չի երևում այս տեղ։ Ես, ես չեմ կարող մնալ այս տեղ։ Հայրս կամք չունի ձեռնտու լինելու, մայրս, իշխանութիւն չունի ձայն հանելու։ Ես կերթամ գէպի մի կողմ, ուր որ Աստուած կառաջնորդէ, թէ ողջ կը մնամ՝ էլի կը տեսնուինք միմեանց հետ, իսկ եթէ ոչ, էն կեանքումը կը պատահենք մէկ մէկու։ Իմ վերջին կը ասէր, որ ուզում եմ քեզ ասել, այս է — „Եթէ Աստուած ապայ, լաւ ուսումն ստանաս, գեղացոց համար մի ամնական տետրակ հրատարակիր, հասկանալի լեզուով և նոցա մէջ ազգայնութիւն և գիտութիւն տարածիր, որ ուրիշներն էլ ինձ նման անմուրազ չը մնան։ Ողջ լեր։

Գոյդ հոգեկից Արութիւն։

— Հարա՛ բ՚ նչպէս անենք, ա՛ կնիկ, բ՚ նչպէս անենք, որ թուրքի ասած՝ նա շիշ եանսրն նա քեարար։ (ոչ խորոմածն էրուի, ոչ շամբուրը)։

„Ս

. . . Գալիս ա . . . Թէ Աստուածդ կը սիրես, այ մարդ, չը խոսացնես . . . .

Այս միջոցին Արութիւնը նեղս մնաս և մուրթը քաշ արած նստաս տախտի վերայ շատ հեռու և հօրից և մօրից։ Աչեռիքը աչքի տակովը մնիկ որուս և ինչ որ փնթփնթաց ինքն իրան, բայց այս արդելք չեղաս, որ Արութիւնը վճռողաբար ասէր նորան, թէ ի՞նչ է պատճառը, որ նա չի ուզում կարնկից լինել իրեն։

—Ինչքան որ կարդացել ես, կէսն էլ աւել է։ Պատասխանեց Աւետիքը։ Առանց էն էլ տեսնում եմ, որ դու շատ ես հմտարտացել, էլ ոչոմի չես հաւան կենում, ով որ մի բան է ասում, դու խմացած, չիմացած՝ վրէն քրքզում ես, ոչ ծերի պատիւ ես պահում, ոչ մեծի խօսքի լսում . . . Դառը որ ծառ է՝ ինչքան որ շատ է պտուղ բռնում, էնքան ճղները քաշացնում է, խոնարհացնում է, բայց դու մի էրկու այր բեն ես սովորել, հէնց իմանում ես, թէ դու ես, որ կաս, ասում ես, դիփ սուտ՝ ես զորդ . . . .

„Լաւ է, շատ մի երկարացնել, ես հասկանում եմ, ի՞նչ ես ուզում ասել։ Բայց որ ասում ես թէ ծիծաղում ես ուրիշների վերայ, ես չեմ կարող չը ծիծաղել։ Սուտ բանը որ ուզենան զորդի տեղ հաւատացնել, ո՞ւմ ծիծաղը չի գալ։ Ասաց Արութիւնը։

—Սուտ բանը ո՞րն է։

„Ես ո՞ր մինն ասեմ, հէնց ինչ որ ասում են, դիփ էլ սուտ։ Ամէի մի զորդ բան չեն ասում։ Բօրշալուեցի Աղին, ասում են, 12 տարի գիլուխին է արել։ Սուտ չի՞ բան ինչ է։ Գրանից էլ անհամ սո՞ւտ։

—Դու քամատար խելքը որ չի հասնում, հէնց իմանում ես՝ թէ սուտ է . . . .

„Դէ լաւ, ես մեղայ Աստու։ Ես չեմ գիտում, թէ էդ վոնց է էլել, որ մարդը գէլ է դառել ընկել գէլերի մէջը։ Դէ ինձ հասկացրու բանի զօրութիւնը, ես քու խօսքին կը հաւատամ։

—Ո՞նց պիտի բլի . . . Մի օր, քոռ ծերպատիս, բռնկեր ա քարերի մէջը։ Դրանք էլ գէրի մորթի պրոցել են շրջերը, Ծոփ ասել, ծիծաղել, մարդը գէր ա դառել գնացել բռնկել գէրերի մէջը . . . .

«Հա՛, ա՛ . . . Աստո՛ւծ . . . Բա փո՞ղց ա էլել ապրելիս գէրերի հետ։

—Ո՞նց պիտի բլի . . . Ասում ա, «Ցաւանում, քրտանում մեռա էլիր գոյիս չորի չոր, էր ասում կամ ոչխար էր մեր գամաքին էր բլում, մեր աչքին մեռնակ դա էր էրևում, մենք էլ գնում էլիր ուսում... Էրբ էր, ասում ա, Ասում ա գամաքի չէր ասիս, բոլորս էլ մի տեղ էլիր հաւաքվում, ու սկսում էլիր ասդար. յեսոյ մի բան էր էրևում աչքներիս, գնում էլիր ուսում։ Մի օր էլ, ասում ա, մի բլար ձի էրևաց աչքներիս, գնացիր վէր գցեցիր, մեր մէջ փոյ արիր, մէջի սեռն բռնկաս բնձ։ Դարդակ ասկաս էր, ասում ա, էդրան կանչեցի, էր ասումիս մինը վէր բռնկաս։ Դարդ էր ասում, գէնց ասումի մինն էլ վէր բռնկած էր . . . .

«Հրմ . . . Դրանում . . . Աստո՛ւծ, բա փո՞ղց ա էլել, էր էլի մարդ ա դառել

—Ո՞նց պիտի բլի . . . Ասում ա, «Ամեն օր նորանում գնում էլիր ասրուց ոչխար փոխցրնում։ Մի օր էլ՝ ասում ա, նորանում բռնկաս բնձ, գնացի մնաց ոչխարի ազարը (ցանդարան)։ Շները վերան բնաւ փուլցին, ասում ա, չորանեին հաւաքուցին։ Ես,

ասում ա, լոք ասի, որ չարիքովը գուս ընկնիմ. գնալ մարմին ընկաս բնիկաս, շինեցս, ասում ա, միջեցը գուս եկաս, գառայ կրի առաջուանց մարդը։ Զարանները սկսում են ծեծել, բայց յեռայ, երբ որ խնամում են, որ նա գնալ ա կրել, նորան մեղքները ա գալիս, խեղճին ասում են ասն, հայ, բան ուսանում . . . .

„Այ քեզ խարել ա, հա՜ . . . Նա հենց մարդ ա բոլոր, գոգոքիքանը որ բռնում ա, ասել ա, գնալ կիր. յիմար չարանները էլ հաստատել են էդ բանը առաջել ժողովրդի մէջ։ Խելոք մարդը էդպես բաներին կը հաստատի, մարդն ի՞նչպես գնալ կը գառնայ...

—Ինձ ասում, որ քու քամատար խելքը չի հասնիլ . . . Ինչի՞ չի գառնալ, չարերն ինչ ասես, քեզ չանեն։ Մեր Աստուծ հարար գնալ չէր գառնալ հարեւանների երեխէքը կերել, բա ինչի՞ են ասում մարդգազել։ Զարն էլ որ չքրի Աստուած չի սրատիլ մարդի՞ . . . Դու, զորոյ ա կարգացել ես, բայց դեռ իմ կիսի զարամ բան չես գիտում . . . Ջրդատը խոզ չի գառանա, որ յեռայ Գրիգոր Լուսաւորիչը մի անեկդոտ նշան քեզանց, որ քու գլուխ քեռիհաստատ մարդիկը միշտ մանիկ ասեն ու իրանց աչքովը անարնեն, որ չասեն քեզ սատա էր . . . .

„Դու իմ գլխիս Աստուծը ես կարգում։ Ես էդ մոգ եմ անգիր արել։ Դու գիտես, ինչքան մոգանոցի բաներ կան նրա միջին, կամ քեզ ի՞նչ նպատակ են

ունեցել Տրդատին խոզ ասող խաւարապաշտները. էդ դիմի սուտ ա, Տրդատը խոզ չի դառել, նա իրա ջահել ժամանակը էնպէս ա էլել, ինչ որ դու քու ջահել ժամանակը, բայց յետոյ էնպէս ա դառել, վանց որ հիմի դու: Այսմաւուրքի խօսքերին խելք մարդը չի հաւատայ . . . .

—Հա՛ ա՛ . . . Դէ վազ կասէիր, է՛, որ ես էլ քեզ հետ չը խօսէի . . . Ինչու՞ ենք ասել թէ «Ռաջ շատ կարդացողը կը թուրքանայ», է՛ . . . Դու թուրքից էլ բեթար ես դառել: Ոչ աչքով տեսածին ես հաւատում, ոչ անկաջով լսածին, ոչ ինձ, ոչ Այսմաւուրքին, էլ քեզ հետ ի՞նչպէս խօսի մարդ . . . .

«Դիտես ի՞նչ կայ, ամէնը, թէ կուզի սրտիդ դիպչիս դրուատը կասեմ: Քու գլխումը մի կորկի չափ խելք չը կայ: Դու քու օրումը իսկի մի զորդ բան ես ասել, որ խելքը գլխին մարդը հաւատայ. մի քանի առակ, մասալ ու հէքիաթ ես սովորել, կարծում ես թէ էլ քեզանից խելօք մարդ չը կայ աշխարքիս վրայ...

Աւետքի զարմացումը յաղթեց բարկութիւնը, չուզեց հաւատալ, որ դէպի իրեն ձգեց այդ անակնկալ գնատակը իւր իսկ որդին, որ միանգամից մեռցնի իւր հօրը, գուսի շատ չը բարկանալով՝ ասաց—

—Քեզ ի՞նչ ասեմ, դու զժուել ես: Դու ինքդ էլ չես գիտում թէ ի՞նչ ես ասում, ու՞մ հետ ես խօսում: Թուրքը լաւ ա ասել, թէ՝ «Ինչա մեւսուրման օղշն քի՝ ամեն խաչը թանբմաղը՞ն» (Էնպէս թուրք

գառաբ, որ էլ հօրդ խաչը չը ճանաչեցիր), հիմի՞ նրանը չըլի՞ դու էնպէս թուրքացել ես որ, ոչ թէ հօրըդ խաչը - խսկի հօրըդ էլ չես ճանաչում. . . Վա՛յ, վա՛յ . . . Էդ ո՞ր Աւետարանի մէջ ա գրած, որ հօր առաջին բանից համարձակ խօսքեր ասեն, դէ ասա տեսնեմ, գրի սև ու սպիտակը դու ես ջոկում, հը՞:

—Դու Աւետարանի հաւատում ե՞ս, քեզ պէտք է Այսմաւուրքից ասեն կամ Գէնձէ քաղքի յիմար պատմութիւններից ու յիմար խիկարի խրատներիցը, որ դու հաւատաս . . . .

—Էդ լաւ ա՝ խիկարին էլ չես հաւատում, մի բաշ Սօղոմոն իմաստուն չըլի՞ս դառած . . . Դիտես ինչ կայ, որ գնաս սաղ աշխարքս ման դաս, էս պատուսի կիսի զաղամ բան չես կարալ տեսնիր: Միայն ջաղացի քար չի պտուտ եկել գլխիս, թէ չէ ամեն բան էլ տեսել եմ: քեզպէսներն էլ եմ տեսել քեզանից դհա շատ կարդացածներին էլ եմ տեսել. քաղցած դռնէ դուռը ման են գալիս, ոչով մի կտոր հաց չի տալիս... Դիմի էլ իրանց խելքիցն ա . . . Նրանք որ սարսաղ ըլին, ո՞վ ա մեղաւոր: Ինչ որ ասում ես, ասում են էդ սուտ ա, վոնց որ հիմի դու: Խելօք մարդն իրա խօսքերը առաջ սրտումը կը դատի, (էնպէս, վոնց որ դուշը իրա ձուտը կը շահացնի), որ բերանից դուս գայ թէ չէ՝ շահ ձուտի նման թռչի, վէր չընկնի, տկոռ ձուտի նման, մարդի ոտի տակ ընկնի:

Դու էնպէս խօսքերդ ես ասում, որ մեր տաւարած սիրքին էլ չի ասիլ . . . Արա ըռխին մարիկ տուէք, Խիկարին էլ չի հաւանում . . . .

—Դու ուզում ես, որ ես էլ քեզ նման սուտ ու մուտ մտապնելով խօսեմ, որ ասես խելօք ոդայ ա... Ես քեզ հետ հուշիկ անելու դաւի անելու միտք չունիմ, ես լաւ գիտեմ, որ թիւրքը խոզի միս չի ու�ակլ . . . Ես ասում եմ՝ Դու իմ հէրն ես, ես քու որդին: Վանց որ ըլի ինձ օգնի, որ ես իմ կիսատ թողած ուսումս աւարտեմ: Յետոյ, ես քար չեմ և ոչ էլ անասուն: Ես գիտեմ իմ որդիական պարտականութիւնս, կաշխատեմ, որ մինչ տասնով վճարեմ, ոչ իրրև դրսեան պարտ, այլ իրրև բնական պարտականութիւն որդոյ . . . Դուք չէք հասկանում ինձ, չէք զարուլ անում . . . Դու մինչև էս օրս մի թաւարաղա թիւխտ չես առել ինձ համար, հայ չես տուել, շոր չես տուել. խելօք հէրն էդպէս կանի՞ . . . .

—Դի՞տես ինչ կայ. մի օր մի հէր գանդատ էր անում, թէ ես էս ա ծերացել եմ իմ որդին ինձ չի պահում տանիցը դուս ա անում: Որդուն ասում եմ ինչի՞ չես պահում հօրդ, նա թէ՝ Ինչուր չեմ պահում, որ նա ինձ չի պահել՞. յետոյ հօրն ասում եմ, ինչի՞ որդուդ չես պահել, նա թէ՝ Բաս ըռնեց ախմախացած դուս էկաւ իրա մոր փորիցը՞: Հիմի դու ես, ասում ես՝ ինձ չես պահել՞, բաս ըռնեց ախմախացած դուս էկար քու մոր փորիցը՞..

Ով որ պահել ա, իմ խաթիրու ա պահել. ինչի՞ ու-
բիշի ապերանցն էլ չեն պահում, չեն կարգացնում...
Հնարհակալ չե՞ս որ տուաբած չեմ շինել, թե որ հնար-
հակալ չես, գնա՛ մեր տուաբը պահի, ինչի՞ 'ի զուր
տեղը տուաբածի փող ենք տալիս նոքար ենք բրո-
նում. հէնց համարի, որ իսկի ոչ կարթացել ես, ոչ
գէս, ոչ գէն: Հէնց էգուց էվեռ ռա ու ձեռքդ պրն-
գացրու, գնա՛ մեր տուաբը պահի, էլ ուրիշ մի բանի
պէտք չես, մի տաքի շինել էլ ա չես գիտում . . . .

—Ինչ՞ ինչ եմ ասում, գո՞ւ ինչ ես ասում: Ասում
քեզ մի ճարտար լեզու ա տուել ու սուր սուր խօս-
քեր, բայց օրտումդ մի քիչ ակը, գութ չի գրել...
Դու՝ զորդ ա՝ հաւ չես մորթում, թէ արուն չեմ
ուզում ասի, բայց մի և նոյն ժամանակ որդեսպանու-
թիւն ես անում: Այս հիմի քեզ լաւ ճանաչեցի... Գու
գլուխը քացախում են լցրել, ծուռ ու մուռ գաղափար-
ներով, էլ ուղիղ գաղափարի համար տեղ չիմնացել...

—Ի՞նչ ա ասում. գրատիտ ա խօսում . . . Ա՛
աղայ, ես քեզ ինչի՞ եմ սպանում, էդ խօսքն ա՞, որ
դու ինձ ասում ես . . . Ես էլ ամանչում բոյիցը . . .
Դէ կորի . . . .

—Լաւ է կորչել, քան թէ քու խօսքերը լսել . . .
Ջան մնացած աղջիկ հօ չեմ, մի գլուխ ունիմ, որ տեղ
ուզենամ, ընտեղ կը պահեմ . . . .

—Ախչիկ որ ըլլիր, մի անգամ մարդի կը տէիր
կազատուէիր, գու ախչիանից էլ բեթար ես. . . Կորի,

կորիր, էլ աչքս քեզ չը տեսնի... Դու մարդ չես դառնար։ Քու ծնուած օրին նահիլաթ... Լաւ չէր ըլլի, որ խակի ծնուած չը լինէիր կամ թէ հէնց ծնուած օրդ մեռնէիր, քան թէ ապրել ես, քու ազգին թուքանք ես բերում... Դու բաթմիշ կանես մեր անունը, բաթմիշ ըլես դու... Նազարաթի նման որդիանց էկաւ քաջքերս մոգ արաւ դլխս, մաղուլ մեզ համար հանգարդ նստած էինք....

„Քաջքեր էլ ունես... Ի՞նչ թաւուր զարդեր են էդ քաջքերը....

—Դէ հանամզադա... Գուս, գուս իմ տանիցը... Դու էլ իմ ազէն չես... Էս քու կարգացնողներն է....

Արուեստները էլ ժամանակ չը կորցրաւ։ Առանց ուշը դարձնելու մեր արտասուքին, ձեռքը ձգեց կախ տուած գինքերը, որ վազուց աչք էր դրել վերան, ու դուրս փախաւ։ Դիւրաշարժ ձայնը լսելով գեղամիջի մարդիքը, հասան ազատեցին մեր ծգնաւոր դառած ու մորթի չանող Աւետիքի ձեռքից։ Արուեստները չիմացաւ այս, նա գնաց կորաւ....

ԳԼՈՒԽ ԺԴ.

—

ԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ, ՎԱՐԺԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ.

Ի սեսակ հանգամանք Այսմաւուրքի աշակերտներին մէջ տարածուած է, թէ «ինչ որ մեր պապերը արել են, մենք էլ էն կանենք»։ Պապ ասելով, սոքա չեն ակնարկում Հայկ ու Արամին կամ Տիգրաններին ու Վարդաններին, այլ Աստուած չգիտէ ով է գրանց կարծած պապը։ Իրանց էլ որ ասես, ոչինչ պատասխան չես լսել. բայց մի քանի սուբ խօսքից, որ իրրև ապիսուիեան գէնք պաշտպանում է նոցա միշտ և շատերին կարծել տալիս, որ նոքա շատ առաջադիմ էին։ Բայց, զարմանք մի մեծ այս են, որ մի և նոյն ժամանակ չես գտնել գրանցում և ոչ մինը որ չզարմանայ Եւրոպացոց վերայ, չխոստովանի նոցա արժանաւորութիւնը, լուսաւորութիւնը և չը ցանկանայ իւրն ևս նոցա նմանիլ։ Ո՞վ է արգելում, ուրեմն, որ դոքա ևս լինէին ազատամիտ և լուսաւորեալ մարդիկ։ Ոչ որ, բայց գոցա կարծած պապից, որին իրանք ևս չեն ճանաչում։ «Որ անցանէ, ասում են, ընդ ցանկու հայրենեաց՝ խաղանէ զնա օձն անապատի»։ Պատանում են, որ գոցա ցան-

կապարից չեն հանում, այլ ցանկանում են վերադարձնել նոյն ցանկապարը, որից վաղուց արդեն դուրս են եկել և մտնում զանազան օձերի և գազանների . . . . . .

Թողնեք այսպիսի ճառախօսութիւնը ուրիշ օրի և ժամանակի, պատճառ չոր ու ցամաք դատողութիւնից բիչ օգուտ կարելի է քաղել: Լաւ կը լինէր. որ ում ինչ առարկայի վերայ ուզում էր խօսել, ներկայացնէր նոյն առարկայի բուն պատկերը և ոչ թէ իւր ձայնի բոլոր ուժը մի տեղ հաւաքած՝ բղաւէր այն խօսքերը, որ ամէն մարդի բերանում պրտրտում է. ինչ եմ պահանջում. ես էլ գնամ, գնամ ես էլ իմ հերոսի հետ տեսնեմ ո՞ւր է գնում էդ ախմախը . . . . .

Աստուծուն միտքը մարդկանց քարոզել կամ բառասարիլ չէր, որի մէջ ինքն ևս տակաւին կարօտութիւն էր զգում, այլ նորա սրտի մէջ ընկել էր մի ուսուցնասիրութեան փառ կրակ, որին հանգցնելու մի հնար էր փնտռում. բայց չէր գտնում, այս պատճառով նա զգացել և ուրացել էր այն ամէն խրատները, որոնք մեզ մեր մեծերին հլու հպատակ են անում: Նա ցանկանում էր իւր ուսուցչ առարելու ոչ թէ նորա համար, որ ժամանակով ազգին պիտանի լինի, ոչ, այդ սկիզբը չէ, այդ կը լինէր հետևանքը նորա այն փափաքի, որ ցանկանում էր յետ չը մնալ իւր ընկերներից և լինել նոցա մէջ ամենէն

երևելի հռետոր ու փաստաբանը, ազնիւը, հարուստը, միով բանիւ ամենից երջանիկը, բայց տեսնելով, որ չունի միջոց հասնելու իւր նպատակին, միաբ ունէր ընկնել չոլերը. մի պատճառի էր սպասում, պատճառն էլ գտնուեցաւ:

Արուեթիւնը երբ որ անցնում էր գեղամիջով, ոչ ոք նրա առաջը չը կարեց, բոլորքանդ գիւղ համարելով նորան: Դա այս նկատեց և ասելի ցաւեցաւ: Մի քանի բոպէից յետոյ Գիւրգիանը ձիաւորներ ուղարկեց, որ հասնեն իւր որդուն յետ բերեն, բայց չը գտան նրանք Արուեթիւնին, որ ուղիղ ճանապարհից շեղուելով մեկ էր անտառն ու անհետացել: Ամիսներ, տարիներ անցան, Աւետիքի սիրտը կոտրուեցաւ զղջալ, հօր բնական գութը իրենը պահանջեց, բայց Արուեթիւնը, որոյ մէջ պատանեկան տարիքը եռում էր, ինչպէս մասիսեան հրաբուխը, չերևաց . . . Բայց նա հեռու չը գնաց, ինչպէս շատերը կարծում էին: Ասած է „Կատուի մանդիլը ընչելի մարաքը կրի“: Դա գնաց Շիրակուան, ուր մի տեղ վարժապետ էր դառնում, միւս տեղ նախարապան, մի տեղ տիրացու, մի տեղ չօրան. այսպէս գեղից գեղ թափառում էր, ոչ մի տեղ մի քանի ամիս չէր մնում, ոչ մի տեղ նրա տարը չէր կապվում, ոչ մի մարդ նրա սիրտը չէր գրաւում, նրա դարդերը խմանում, նրան համոզում. . . Երբեմն տարից տար, հովիտից հովիտ անցնելով արտորդու-

թեամբ էր անցցնում ժամանակը, իսկ երբեմն, բո-
լորովին անհարատակ գնացքի խաղերը բերան առած՝ գրամբացնում էր անասունների ու ձորերը և փախցնում զէլերին, ագուռներին, արջերին, խոզե-
բին։ Այս չոլերի անբան անասուններն էլ կարծես գիժ էին համարում Արութիւնին, որին տեսնելուն պէս խելոյն խլոշկոտալով, բղբղալով, զռզռալով փախ-
չում էին այսպահարուած խոզերի նման, որ գնան դառ-
նան ծովը խեղդուին, որ ազատուին Արութիւնի ձեռ-
քից... Մէկ խօսքով, այն քնքուշ պատանին, Արդեր-
ի աշակերտ ժիգոյն Արութիւնին եթէ մէկը տեսնէր այժմ, չէր հաւատայ, որ նա երբ և իցէ այրքենի և մինարատուեան ծառեր լուծի տակ ընկած է։ Արե-
գակը ցուրտին, ցուրտ արեգակին հակառակելով, Արութիւնից կազմեցին մի այլ կերպարանք—աւելի զօրեղ և աւելի կոպիտ ու հատ, քան թէ առաջ էր։ Բայց այս արդիւք չեղաւ, որ նա մի և նոյն ժա-
մանակ դառնար Զրատոնի կարծած խենդերից մինը։ Այո, բնական ազգեցութիւնն ու Արութիւնի վիճակին էլ մեծ նախապատրաստութեան վերայ էին մի նոր մարգարէ յարուցանելու Շիրակեանց անապատներից։ Նորա մէջ սատկացաւ զգացողութեան հրարորբոք սխտը և Արութիւնը սկսաւ գերբիշի նման անպա-
դար մնալ և դուրս բառբառել իւր սրտի ամեն մի վիշտը և մտքի ամեն մի կարծիքը։ Նորան մի սաղ էր պակաս, եթէ այս նշանն էլ ունենար, նա ևս

կատանար այն յարգն ու պատիւը, ինչ որ ամէն մի աշխոյ ստանում է շորագնալու բոլոր գեղերումը: Մի անգամ լսեց, որ Շիրակունուց հետու Հայդարբէգ գեղումը մի անուանի աշխոյ կայ, որ աշխոյներին հետ բաս է մանում և նոցա սաղերը ձեռքիցն առնում, Արուխիւնին լաւ չը թուաց այս: Մտաւորուեց գնալ և նրա ձեռքիցն առնուլ սաղը: „Արոմեանի ասած, խանչալիս քարը հօ չի՞ վէր ընկնիլ, մի աշուղ էլ ես կը գառնամ“, ասաց Արուխիւնը ինքն իրան. „Թէ ես կը յաղթեմ, հօ շատ լաւ, սաղը ձեռքիցը կառնեմ, թէ ինքը կը յաղթի, իմ թուանքը կը տամ իրան, յետոյ մի թաքուն տեղ կը պատահացնեմ, համ իմ թուանքը կը խլեմ ձեռքիցը համ իրա սաղը, թող գնա որ տեղ որ իրանը կասի, ինձ էլ ընտեղ ասի... Դրանց օրին գալը մեղք չի, բոշի նման գունէ գուռը մտան են գալի, խաղխին սուտ սուտ բաներ հաւատացնում, յետոյ որ մի գրուտ խոսք ես ասում, էլ չեն հաւատում, ասում են գիժ ես... Դէ որ գիժ եմ, գիժ եմ, ես էլ գժուխին կանեմ....“

Այսպէս մտածելուց յետոյ Արուխիւնը գիտեց դէպի Հայդարբէգ գիւղը: Արժանի է նկարագրուելու նորա այն ժամանակուայ հագուստը: Նա հագած էր վայրի վարագի հատ կաշիից տրեխներ, աբխազուխի փէշերքը հաւաքած կոշտ շալուարի մէջը,

Օսի չուխայի պատռուած փէշերը մեր կապած*, թաթարաքաղի մեծ փափախի ճակատի կողմը ներս ծալած՝ գլխին դրած, վայրի այծի կաշիից շինած պարկի մէջը մի կտոր սև հաց ու շորագեալու ճիլ ճիլ պանիր դցած՝ շալակին, ատրճանակը (փշտովը) մէջը խրած, խանչալը գօտիից կախած, հրացանը (թուֆէնգ) ուսից կախած և ձեռքն առած մի տաւարածական հաստագլուխ գաղանակ (մահակ, ձեռքափայտ և ոչ գաւազան կամ աքօսա) . . . Արութիւնի այսպիսի տեսքը, նորա երկար հասակի, վառվռուն և մեծ մեծ աչքերի, արհամարհող հայեացքի և զզուած բնաւորութեան հետ միասին՝ կասկածանքի տեղիք էր տալիս Շիրակվանցիներուն, թէ նա ոչ այլ ոք է, եթէ ոչ աւազակ, որ ուր և իցէ մի վատ բան է արել, կամ մարդ սպանել, այդ պատճառով փախել եկել է մեր մօտ: Բայց հաղիւ թէ երբ և իցէ Արութիւնը մարդուն անգամ անցուցած լինէր աւազակութիւնը: Նոցա կասկածը աւելի նորանից էր ծագում, որ նորա մեղք են համարում գէնք կրելը, մանաւանդ նորա բանաձնելը, չը նայելով, որ երբեմն, ոչ երբեմն, այլ յաճախ, երկու թուրք երիտասարդ նոցա յիանաւոր

* Ով Հայերէն գիտէ, թող հասկանայ իմ բոլոր գործ գրած բառերը, մեր գրաբառի մէջ աշխարհի բաներ չկան, որից ես օգուտ կարողանայի քաղել իմ նկարագրութեանց մէջ, բայց թէ ժողովուրդը կը հասկանայ, դրան մասին ես կասկած չունեմ....

մարդոցը հաւերի նման թրի առաջն են առնում և նոցա կարաւանի եղնեերը քշում, անց կացնում Արփաչայը, այնուհետև թող գնան, ուր ուզում են գնարեն . . . .

Արութիւնը հանդիպեցաւ աշրդի հետ այն ժամանակ, երբ նա քսանայի տան սրահումը նստած իւր երեք քսան ու շեղ աշակերտների հետ միասին աւարտելու վերայ էր մարաքան, որ Դուդի զուշի հէքիաթն էր: Այս հէքաթի իդէան է երբէք հաւատ չընծայել կնոջը և պատժել նորան անգթաբար . . . Դիւդի քէթխուդաները, քահանան և բոլոր կանայք ու երեխայք հաւաքուել էին և աշրդի շորս կողմով ծարապատիկ նստել գետնի վերայ: Արութիւնը ոչ ոքի վերայ աչք չը դարձրուց բացի աշրդի սագից, որի մեծութիւնը և նորա զարդարանքը գրաւեց իրեն: Ուստի անվախ և համարձակ մօտեցաւ աշրդին և գլուխ տուաւ նորան, ասելով:

—Է՛շխ օրա, ո՛ւստա:

Դէշին չո՞խ օրա, սաղ՝ գնալդը, պատասխանեց աշրդը՝:

Նոքա սկսան խօսել թուրքերէն, ես գնում եմ այս տեղ նոցա խօսքերի և երգերի թարգմանութիւնը:

ԱՐՈՒԹԻՒՆ

Ո՛ւստա, (վարպետ) չի՞ կարելի արդեօք, որ մենք գօտիկ գօտկի խփէինք, մարիփաթ մարիփաթի: Ես լսել եմ քու համբաւաւոր անունը և եկել եմ, որ,

եթէ կարելի է, մեր շնորքը իրարու հետ համեմատենք:

ԱՇԸՂ

Դիտում վրայ, աչքիս վրայ, մեծաւ ուրախութեամբ, շատ սիրով, շատ բարի, շատ բարի . . . Բայց իմ սիրելի, իմ աչքիս լուս, ես տեսնում եմ, որ դու աշքդ չես, դու սաղ չունիս, սաղդ ուրիշներին ես տուել, ինձ մօտ առանց սաղի եկել . . . Ո՛չ, այդպէս չի լինում . . . Ինձ մօտ սաղով են գալիս, առանց սաղ գընում . . . Դու մոլորուած ես, քեզ խափել են, դու ջահիլ ես . . . Իմ գիրն էնպէս գիր չի, որ ամէն մարդ կարդայ, իմ ջուրն էնպէս ջուր չի, որ ամէն մարդ խմի . . . Ի՞նչ կասես, սան եսիշի, (դուռ լաւ):

ԱՐՈՒԹԻՒՆ (իր մտքումը).

Էս ի՞նչ ճարտար մարդ ա, սրան չի կարելի յաղթել: Է՞հ, հէրն անիծեմ, ի՞նչ կըլի կըլի, ձու հօ չեմ, որ կոտրուեմ, աշուղ չեմ, որ անուն կոտրուի. (բարձրացնում է ձայնը): Դիտես ի՞նչ կայ, ուստայ, դու զորդ ես ասում, ես աշուղ չեմ, ուզում եմ աշուղ դառնամ, բայց սաղ չունիմ: Քու սաղը իմ աչքում շատ դուր է գալիս: Արի բան մանենք, հիմի ի՞նչ կըլի, կըլի: Թէ դու կը յաղթես, ես իմ հրաժանս քեզ կը տամ, որ Ղոսիմ-Բախչասարայի է, երկու հարուր մանէթով է առած: Թող վկայ լինին էս բոլոր քէֆխուդանները: Բայց եթէ ես կը յաղթեմ, որ Աստուծով յոյս ունեմ, քու սաղը, ինչպէս օրէնքն է աշուղների, մեծահոգութեամբ ինձ կը տաս:

ԱՇԸՂ.

Շատ բարի, շատ բարի... Բայց դու աշխարհի կանոնը գիտես, գոնեա՞ Դու գիտես, որ սկզբի ասելու իրաւունքն իմն է. ըստ որում դու ես եկել իմ մօտ, դու ես ուզում իմ սագը ձեռքիցս առնի, որ երազումդ էլ չես տեսնել....

ԱՐՈՒԹԻՆ.

Գիտեմ, գիտեմ, բոլոր կանոնը գիտեմ։ Կարողէք սկսել (չէ, աշխարհս վախցրի, սիրիմնում ա, ասաց Արութիւնը իւր մտքումը)։

Հարցրին մէկմէկի անուն, աշխարհն ասաց, որ իւր անունը Շոհլայի է, Արութիւն էլ իւր անունը փոխեց, ասաւ Գեորգիկ եմ... Արութիւնը իւր մահակը սագի տեղ բռնեց և ծունկ չոքեց աշխարհի դիմացը։ Սկսեցին առաջ ու առաջ պարծենալ։ Բայց որովհետև սկզբի ասելու իրաւունքը աշխարհինն էր, նա առաջ սկսեց. Արութիւնը պարտական էր նորա խաղի զատիպային հետևել, այսինքն՝ իւր ասածի անները պարտական էր այնպէս վերջացնել, ինչպէս որ աշխարհը վերջացրաւ. թէ աղ՝ աղ, թէ աղ՝ աղ, թէ ան՝ ան, թէ ամ՝ ամ, և այլն...

ՇՈՀԼԱՅԻ (սկսում է խաղով պարծենալ).

Ընդունիր ողջոյնս այսօրուց պատանի,
Համարձակ քաջի պէս դուրս արի մէյդան,
Թող չնչէ ասպարէզ ով շնորհք չունի,
Աշխարհ անուն տալը նորան չէ արժան։

ՔԵՐՈՎԲԻ

Ընդունում եմ ողջույնդ, պատուելի վարդապետ,
Եւ ունիմ խոսքերիդ մէկ մէկ պատասխան,
Չեմ ՀԱՅԱՑ քո դիմաց յետագէմ, անդէտ,
Հանարձակ կանգնող եմ քո դէմ յանդիման։

ՇՈՀԼԱՑԻ

Կանչել եմ անունը Աշոտ Սուլթանի,
Որ մարդին՝ դատարդի դռա մոռացչ չանի,
Երեսի քաջ լինել գոռ չեռ արժանի,
Քեզնից պէտք է խլել քո գէնք, հրացան։

ՔԵՐՈՎԲԻ

Եւ այդ չեմ ընդունում գոռ սուտ ես խոսում,
Ի զուր ես ինձանից շուտով բաժանում
Ոսկեքանդ սրմերը սապիր չեն ասում,
Որ յետ երկրագիդ ինձ է սեփական

ՇՈՀԼԱՑԻ

Իմ ոսկեթել սապիր չատերն են հաւանել.
Շատերը քեզ դեման մէջդան են ելել
Բայց դերանդը են իրանց սապիրը պրկուել
Եւ սարսափած փախել մինչի Ղեզման։

ՔԵՐՈՎԲԻ

Վայ սատայ, սատայ, քա չես ամաչել,
Որ էգդէս խոր ու մութ խոսքեր ես կանչել...
Էդ ոչինչ, թէև գոռ սոքոր չես փոխչել
Հիմի դարանդ յետդից կնքիմ խորասան։

ՇՈՀԼԱՑԻ

Գոռ որ կաս՝ թեքուլ ես, ես որ կամ՝ քարտ եմ,
Կարծում ես թէ ես էլ քա գէս անճար եմ,

---

* Այս տեղ դան պէտք է հանել ոչ իրրև թ։

Սպասիր, քո առջևդ մի թակարդ լարեմ,
Որ դու ընկնես մեջը ճնճղուկի նման։

ՊԵՐՈՎԲԻ

Ես էնպէս ապայ չեմ, որ թակարդ ընկնեմ,
Ինձ բնչ պէտք է առես, որ ես չգտնեմ.
Բայց քո վերադ այնպէս մի քար կը գնեմ,
Որ հէնց ճնաս տակին այժմ և յաւիտեան։

Այս տեղ քէֆխուզանները խնդրում են, որ շուտով վերջացնեն, ասելով,

—Դրան վերջ չը կայ, դու կատես նա կասի, ընչկըլի կը պրծնէք, Աստուածանից երեք խնձոր վէր գնեցեք, որ ասենք մինն ասողին, մինը լսողին... Թէգ արէք, թէ բան էք ասելու, ասեցէք, տեսնենք որքդ էք յաղթվում, որքդ չէ։

ՇՈՀԼԱՑԻ (վերջացնում է)

Դուք շատ էք վազում թող լինի այդպէս
Արա պէս պարծեցողին չեմ անել անտես,
Աչքդ Շոնլային եմ, գիտուն, սրատես,
Ես չեմ ուզում լինել ցածրանողի անդան։

ՊԵՐՈՎԲԻ

Դու բոլոր գիտութիւնդ ինձ վազուց է յայտ,
Մի նայիր որ ասդի տեղ ձեռքումս է փայտ,
Անբազդ Գնդովբին եմ աչքդ եմ անելայտ
Ոհ, թէ այսպէս լինում մինչ օրն իմ մահուան։

Այս տեղ հեռանում է հանելուկ թէֆթիքը, այսինքն հարց ու պատասխանը։

ՇՈՀԼԱՑԻ

Լսիր, թէ դիտուն ես, ով քաջ ձեռացող,
Այն ով էր, որ ապրիւր հանեց ոսկորից,
Այն ինչ պօղաւոր էր, որ երեսին ունէր քող,
Ո՞վ է ծնել երկու անդամ մօր փորից։

ՔԵՐՈՎԲԷ

Էս քու ասածներին կամ պատասխան չտոր,
Սամփսոնն էր, որ ապրիւր հանեց ոսկորից.
Պօղաւոր՝ Մովսէսն էր, որ երեսին ունէր քող.
Յոհանն ծնաւ երկու անդամ մօր փորից։

ՇՈՀԼԱՑԻ

Ինչ ծառ է, որ անհոգ, անջուր է բանում,
Առանց տերևներու ճիւղներ է գցում,
Ինչ բան է տուր, քան թուր սրտի մէջ ցցվում,
Այն ինչ արարած է, որ ծնաւ հօրից։

ՔԵՐՈՎԲԷ

Բախտի եղջիւրները անհոգ, անջուր են բանում,
Առանց տերևներու ճիւղներ են գցում,
Դառը խօսքն է սրտում սրի պէս ցցվում,
Քու կարծիքով Եւան ծնել է հօրից։

ՇՈՀԼԱՑԻ

Այն ով էր, որ ապլով երկինք վերացաւ,
Սաղմանն իմաստունը ինչ բան չիմացաւ,
Կարմիր ծովը քանի անգիր պատուեցաւ,
Շոհլայինն եմ՝ շատ լաւ անգնակ բոլորից։

ՔԵՐՈՎԲԷ

Եղիան էր՝ ապլով երկինք վերացաւ,
Սաղմանն իմ պէս մրտքը չիմացաւ.

Կարմիր ծովը տաճարիկ տեղից պատուհցաւ
Քերովբէն եմ, շատ ու շատ գոհ այս օրից։

Նորաթիւն ընկաւ սուտանուն Քերովբէին, որ այժմ նա հարցնէր և աշխարհ գանէր, ուստի սկսաւ, բայց ոչ թուրքերէն, այլ հայերէն, որ նոյնութեամբ գը-նում են այս տեղ։

ՔԵՐՈՎԲԷ

Էս քու սուտ հարցերը մէկ մէկ լուծեցի.
Չկամիմ հետիկ քո մոլորութեան.
Հէնց հիմի մի շնչին խօսք մտածեցի
Ո՞վ է հիմքը դրել Հայոց ազգութեան։

Ուստան ձեռց լռուած, սիրթնած, չիմացաւ ի՞նչ էր պատասխանել, բայց քէխիա դանելը հարկադ-բեցին Արութիւնին, որ նա աւարտէր իւր խաղը, ուստի շարունակեց.

Եթէ դու գոլիր Հայոց քաջերին,
Մի համբոյր կը տայի տաղիդ սիմերին.
Բայց դու հաւատում ես ս

սուտ խօսքերին
Չգիտես ովքեր են Արամ ու Տիգրան.
Քեզ տուրը Կարապետը շնորհք է տուել
Պարզամիտ Հայերին խաբելը, սուտ ասել.
Դու Հայերէն անգամ չես ուզում երգել,
Որտեղից կիմանաս ով էր գայլ Վանան.
Էս խնդճ Քերովբէն եմ չոլէ չոլ ընկած,
Մնապաչտ հօրից գրկուած հալածուած
Թէ ինձ չափ յիմնէիր դու էլ կարդացած
Կերգէիր անդադար Հայ ու Հայաստան։

—Էվալլա՛, ասաց աշքդը, ասդը տալով Արութիւնին։ Արութիւնը սատարիկ ուրախանալով՝ չիմացաւ ի՞նչ ասէ, արդեօք քեօռօղլո՛, թէ՞ մի ազգային երգ, յանկարծ միտն ընկաւ իւր սովորական բայաթին, որ ամէն ուրախ բռնէում երգում էր, այն բայաթին այս էր

Աշքդ ըմ շատ քշեղակ
ԱբՀանի կանչիմ քու տեղակ.
Ախչիկ չըմ, թա Հըմանչիմ,
Տղայ ըմ, ծիլ ծիլ կը կանչիմ*.....

Այս բայաթին ասեց ու խսկոյն Հեռացաւ, որ մի՞ գուցէ յետ ձեռքիցն առնեն ասդը։ Մի քիչ տեղ կամաց կամաց գնաց, յետոյ յետ խլոշկոտալով փախաւ գէպի գաշտ, որ փորձ փորձէ, տեսնէ Հնչում է ածելը, թէ՞ դժուար....

—Էս ով էր, տղէք ջան, ասաց քեթխուդանների մինը, երբ որ Արութիւնը Հեռացել էր իրանցից,—էս երազ է՞ր, թէ՞ Հրաշք... Էս ի՞նչ զարմանք էր ա՞, ո՞վ էր էս, ո՞ր թանց եկաւ, երինքի՞ցը։ թէ գետնի տակիցը, սատանայ է՞ր, թէ Հրեշտակ....

—Դա Հոդեղէն չէր, խօսքը կարեց աշքդը։ Հոդեղէն մարդը չէր կարող իմ ձեռքիցը ասդ խլել։ Ես գիտեմ որ....

—Ուսանէն գրուսա ա ասում, տղէք ջան, խօսքը կարեց Տէր Կարապետը,—բա թամաշայ չարիք Ներա

* Այս Հանելուկ է, կը նշանակէ գրած բան—գիրք, նամակ և այլն։

վառուած էրեսին, կասենայիր Աստփանոս Նախա-
վկայի երեսն ըլի... Անուն մն ինչ էր նրա։

—Քերովբէ։

—Որ ասեցիր։ Հաւատացէք նա հրեշտակ էր, մարդի
շոր հագած, էն էլ թուրքի, սուրբերը էրագումը
թուրքի շորով են էրևում։

—Աստուած դրա ասը ուզուրով անի մեր գեղի
